ՀԱՐԱՑԻ

1982

Ա.

ԼԹ
ՏԱՐԻ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Յունուար

1982

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՈԶ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ (1982 թ. հունվարի 6)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Սիրելի հավատացյալ ժողովուրդ:

Շատ դարեր առաջ, մի լուռ ու պայծառ գիշեր, երկնքից մի լուսահրաշ աստղ ճառագայթեց: Նրա շողքը մեղմիկ իջավ հեռու՝ Բեթղեհեմ անուն մի քաղաքի վրա և լուսավորեց մսուրը այն, ուր ծնվել էր մանուկն Հիսուս, Որդին Մարիամ կույսի: Ավետարանը պատմում է, թե այդ հրաշք պահին, երկնքի բարձունքից իջնող լույսի հետ, լսվեց նաև մի երգ աննման, այնքան անուշ, այնքան դյութիչ, ինչպես երբեք չէր լսված աշխարհի վրա:

Այդ օրվանից անցել են երկու հազար տարիներ ահա, և սակայն երգն այդ անուշ ու դյութիչ լսում են այսօր էլ հոգեկիր մարդիկ, իբրև նոր առավոտ ավետող քաղցր մեղեդի: Այդ լուսապայծառ գիշերին, հրեշտակները երգում էին՝ «Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Ինչպես երկու հազար տարիներ առաջ, և ինչպես երկու հազար տարիներ շարունակ, հրեշտակների ավետիսը հեռավոր բարձունքներից իջնում է այսօր էլ մարդկանց սրտերի մեջ՝ իբրև երկնքի պատասխան նրանց սուրբ սպասումներին, իբրև ավետիս փրկության հուսացյալ հոգիներին և իբրև իմանալի լույս մարդկանց կյանքի ճամբին:

Նոր Տարվո լուսաբացով, մեծ ավետիս ձեզ սիրելի ժողովուրդ՝ «Յիսուս ծնաւ եւ յայտնեցաւ»:

Ծնվեց և հայտնվեց Փրկիչը մարդկության, արեգակը արդարության և իշխանը խաղաղության: Մեծ սաղմոսերգուի մարգարեությունը իր լրումին

հասավ: Հիսուսի մեջ և Հիսուսով՝ արդարությունը և խաղաղությունը գըրկախառնվեցին, զի հին աշխարհի և նոր ժամանակների հատման ճանապարհին Աստվածորդու Հիսուսի ծնունդը, տնօրինված երկնային փրկչագործության ծրագրով, հանդիսացավ մարդկային ցեղի ազատագրումը մեղքի կապանքներից և վերանորոգումը մարդ արարածի:

Հիրավի, Հիսուսի ծնունդով ճշմարտվեցին Հին Ուխտի բազում մարգարեություններ: Այսպես՝ Աստված, Եզեկիելի բերանով վկայում էր՝ «Նոր շունչ պիտի տամ նրանց (մարդկանց) և պիտի հեռացնեմ նրանց մարմիններից քարե սիրտը» (Եզեկիել ԺԱ 19), իսկ Երեմիա մարգարեն ավելացնում էր՝ «պիտի տամ նրանց նոր սիրտ ու ոգի՝ հերջանկություն նրանց և նրանց որդիների» (Երեմիա Լ 39): Իսկ ի լրումն ժամանակի, Պողոս առաքյալ բացականչում է՝ «Քրիստոս մեր խաղաղությունն է, նա է որ ..... քանդեց իր մարմնի մեջ ..... թշնամությունը ..... որպեսզի կերտի նոր մարդը և խաղաղություն հաստատի» (Եփես. Բ 14—15):

Հիսուսի գերբնական հրաշալի ծնունդով մեզ բոլորիս, մեր օրերի աշխարհին համայն, նույն աստվածային պատգամն է տրվում՝ որ փշրվեն քարե սրտերը և մարդիկ ու ազգություններ «նոր սիրտ ու ոգի» զգեցած, իրենց կյանքի ճանապարհին՝ արդարությամբ և խաղաղությամբ գործեն, որ արդարությամբ՝ խաղաղություն լինի և խաղաղությամբ՝ արդարություն:

Մեր ժամանակներին մանավանդ, երբ ավելի քան երբեք, համայն մարդկության սպառնում է համատարած կործանում ու ոչնչացում ատոմական ահարկու ուժերի սանձազերծումով, մենք քրիստոնյաներս, մենք զավակներս հայ ժողովրդի, մեկ սրբազան իղձ ունենք մեր սրտերում և մեկ նվիրական աղոթք մեր շրթների վրա, որ Հիսուսի Սուրբ Ծննդյան խաղաղարար ոգին բաշխվի առատապես բոլոր մարդկանց և մանավանդ պետությանց պատասխանատու ղեկավարներին, որպեսզի ազգությունների միջև խաղաղ գոյակցությունը պահպանվի և ամրապնդվի, որպեսզի խորտակվեն պատերազմի բոլոր տեսակի զենքերն ու գործիքները, որպեսզի մայրերը այլևս չարտասվեն ու երեխաները հանգիստ քնեն, և որպեսզի մարդիկ ամեն առավոտ իրար ողջունեն բարի լույսի ավետումով:

Այսօր աշխարհում, բոլոր ժողովուրդների լայն զանգվածները իրենց ձայնը բարձրաղաղակ ցասումով մինչև երկինք են հասցնում, աղերսով, որ պատերազմի ուժերը իրենց զենքերը ցած դնեն և նրանցից արորներ ու մանգաղներ ձուլեն:

Ցեղասպանություն տեսած հայ ժողովուրդը, առավել վճռականությամբ իր ձայնը, իր աղերսը միացնում է խաղաղության ուժերին, որովհետև պայծառ գիտակցությունը ունի, թե միայն աշխարհի խաղաղության պահպանման պայմաններում նա պիտի կարողանա գոյատևել իբրև ազգություն, իբրև հայրենի պետություն և իբրև եկեղեցի: Հայոց վերածնված մայր երկրի ժողովրդի բախտն ու ճակատագիրը պայմանավորված են խաղաղության պահպանմամբ, խաղաղության ուժերի հաղթանակով: Որևէ հայ մարդու համար, այլ կերպ մտածում կամ գործունեություն կարելի չէ ըմբռնել:

Մանավանդ հայաստանցի հայ մարդը, որ երկար դարերի անասելի տառապանքներից ու մաքառումներից հետո, իր նախնիքների այս հողամասի վրա, վերջապես ապրում է խաղաղ ու անվրդով, և բուժում է իր դարավոր վերքերը, ու վերակառուցում ու շքեղացնում իր նոր հայրենիքը, ծաղկեցնում է իր ազգային մշակույթը, և ինքնավստահ լավատեսությամբ նայում դեպի իր է՛լ ավելի պայծառ ապագան, այո՛ հայաստանցի հայ մարդը՝

Աստուծո և աշխարհի առաջ, գուցե ավելի քան ուրիշ ազգերի զավակներ, արդար իրավունքը ունի իր բազուկները դեպի երկինք կարկառելու և աղաղակելու՝ «Տե՛ր տուր աշխարհիս խաղաղություն, ազգիս հայոց սեր միություն»:

Նաև, սփյուռքի տարածքի վրա, ո՞ր հայ մարդն է որ նույն աղոթքը, նույն աղերսանքը պիտի չմիացնի հայաստանցի իր եղբոր հարազատ ձայնին: Եվ այդ ո՞ր հայ մարդն է որ անհաղորդ պիտի մնա հայաստանցի իր եղբորը՝ ապրելու, գոյատևելու և հայրենաշեն աշխատանքով նոր բարձունքներ նվաճելու երազանքներին:

Այո՛, ամեն գնով և ամեն բանից վեր, ամեն հայ մարդ, Հայաստանում թե արտասահմանում, պիտի կամենա թուլացումը միջազգային լարվածության և ամրապնդումը աշխարհի խաղաղ գոյավիճակի:

Եվ Մենք հավատում ենք թե ողջմտությունը և բարի կամեցողությունը անհրաժեշտորեն կհաղթանակեն և ազգերի ղեկավարները իմաստությունը կունենան ապահովելու խաղաղ գոյակցությունը և գործակցությունը մեծ ու փոքր պետությունների միջև: Աստուծո և բնության ուժերի ամենազոր գերագույն օրենքն է՝ միշտ հաղթությունը կյանքի՝ ընդդեմ մահվան:

Այդ է նաև խորհուրդը և աստվածային պատգամը մանուկ Հիսուսի Սուրբ Ծննդյան:

«Շնորհք, սէր և խաղաղութիւն Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի, եղիցին ընդ ձեզ». ամեն:

Բոլոր Եկեղեցիներ

ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հռոմեական կաթոլիկ Եկեղեցու Քահանայապետ, Նորին Սրբություն
ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՊԱՊԻՆ (Հռոմ),

Կոստանդնուպոլսի հունաց Տիեզերական Պատրիարք, Նորին Սրբություն
ԴԵՄԵՏՐԻՈՍԻՆ (Ստամբուլ),

Մոսկվայի և համայն Ռուսաստանի Պատրիարք, Նորին Սրբություն
ՊԻՄԵՆԻՆ (Մոսկվա),

Ալեքսանդրիայի և համայն Աֆրիկայի հունաց ուղղափառ Եկեղեցու
Պատրիարք, Նորին Սրբություն **ՆԻԿՈՂԱՅՈՍ Զ-ԻՆ** (Ալեքսանդրիա),

Երուսաղեմի հունաց ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԴԻՈԴՈՐՈՍԻՆ (Երուսաղեմ),

Ղպտի ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԱՄԲԱ ՇԸՆՈՒԴԱ Ե-ԻՆ (Կահիրե),

Համայն Եթովպիայի Պատրիարք, Նորին Սրբություն
ԱԲԲԱ ԹԵՔԼԷ ՀԱՅՄԱՆՈԹԻՆ (Ադիս Աբեբա),

Հնդկաստանի և Արևելքի մալաբար Եկեղեցու կաթողիկոս, Նորին Սրբություն
ԲԱՍԻԼԻՈՍ ՄԱՐ ԹՈՄԱ ՄԱՏԹԵՈՍ Ա-ԻՆ (Քոթայամ),

Համայն Վրաց Պատրիարք-կաթողիկոս, Նորին Սրբություն
ԻԼԻԱ Բ-ԻՆ (Թբիլիսի),

Ռումին օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԺՈՒՍՏԻՆԻՆ (Բուխարեստ),

Բուլղար օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ՄԱՔՍԻՄԻՆ (Սոֆիա),
Անտիոքի ասորի ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԻԳՆԱՏԻՈՍ ԶԱՔԷԱ Ա ԻՎԱՍԻՆ (Դամասկոս),
Անտիոքի և համայն Արևելքի հույն կաթոլիկ Եկեղեցու Պատրիարք, Նորին
Սրբություն ՄԱՔՍԻՄՈՍ Ե ՀԱՔԻՄԻՆ (Դամասկոս),
Անտիոքի ասորի կաթոլիկ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԻԳՆԱՏԻՈՍ ԱՆՏՈՒԱՆ ՀԱՅԵՔ Բ-ԻՆ (Բեյրութ),
Քենթրբերիի Արքեպիսկոպոս, համայն Անգլիայի եպիսկոպոսապետ և
միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն ՌՈԲԵՐՏ ՌԸՆՍԻԻՆ (Լոնդոն),
Աթենքի և համայն Հելլադայի Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն
ՍԵՐԱՖԻՄԻՆ (Աթենք),
Սերբիայի և համայն Հարավսլավիայի Պատրիարք, Նորին Սրբություն
ԳԵՐՄԱՆԻՆ (Բելգրադ),
Վարշավայի և համայն Լեհաստանի միտրոպոլիտ, Նորին
Գերաշնորհություն ՎԱՍԻԼԻԻՆ (Վարշավա),
Պրագայի և համայն Չեխոսլովակիայի միտրոպոլիտ, Նորին
Գերաշնորհություն ԴՈՐՈԹԵՅԻՆ (Պրագա),
Կիպրոսի Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն
ԽՐԻՍՈՍՏՈՄՈՍԻՆ (Նիկոզիա),
Անտիոքի մարոնիտ Պատրիարք, Նորին Ամենապատվություն
ԱՆՏՈՒԱՆ ՊԻԵՐ ԽՐԵՇԻՆ (Բեյրութ),
Մարսելի Արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն կարդինալ
ՌՈԺԵ ԷՉԵԳԱՐԱՅԻՆ (Մարսել),
Վիեննայի Արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն կարդինալ
ՖՐԱՆՑ ՔՅՈՆԻԳԻՆ (Վիեննա),
Քրիստոնեական Միության Քարտուղարության նախագահ, Նորին
Ամենապատվություն կարդինալ
Ժ. Գ. Մ. ՎԻԼԼԵԲՐԱՆԴՋԻՆ (Վատիկան),
Փարիզի Արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն
ԺԱՆ ՄԱՐԻ ԼՅՈՒՍՏԻԺԵԻՆ (Փարիզ),
Լոնդոնի Եպիսկոպոս, Նորին Գերազանցություն
ՋԵՐԱԼԴ ԷԼԻՍՈՆԻՆ (Լոնդոն),
Լիոնի Արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն կարդինալ
ԱԼԵՔՍԱՆԴՐ ՌԸՆԱՐԻՆ (Լիոն),
Լատվիական ՍՍՀ ավետարանական-լութերական Եկեղեցու Արքեպիսկոպոս,
Նորին Գերազանցություն ՅԱՆԻՍ ՄԱՏՈՒԼԻՍԻՆ (Ռիգա),
Էստոնական ՍՍՀ ավետարանական-լութերական Եկեղեցու Արքեպիսկոպոս,
Նորին Գերազանցություն ԷԴԳԱՐ ԽԱՐՔԻՆ (Տալլին),
Ֆրանչիսկյան միաբանության կուստոդ
ՄԱՈՒՐԻԼԻՈ ՍԱԿԿԻԻՆ (Երուսաղեմ),
Խաղաղության Համաքրիստոնեական Կոնֆերանսի գլխավոր քարտուղար,
Նորին Սրբազնություն ՔԱՐՈԼԻ ՏՈԹԻՆ (Պրագա),
Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի ընդհանուր քարտուղար
դոկտ. ՖԻԼԻՊ ՓՈԹԸՐԻՆ (Ժնև),
Պապական նվիրակ և Հռոմի Սուրբ Աթոռի մշտական ներկայացուցիչ
Միացյալ Ազգերի Կազմակերպության մոտ, Նորին Գերաշնորհություն
ԺԱՆ ՌՅՈՒՊ արքեպիսկոպոսին (Ժնև),

Մխիթարյան ուխտի աբբահայր, Գերապայծառ Հայր
ՊՈՂՈՍ վարդապետ ԱՆԱՆՅԱՆԻՆ (Վենետիկ),
Մխիթարյան ուխտի աբբահայր, Գերապայծառ Հայր
ԳՐԻԳՈՐԻՍ վարդապետ ՄԱՆՅԱՆԻՆ (Վիեննա),

«Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ»:

Աստուծո ողորմությամբ Նոր տարվո սեմին, երկնքի հրեշտակները վերստին բերում են աշխարհին մեծ ավետիսը հրաշալի Ծննդյան մեր Տիրոջ ու Փրկչի Հիսուսի Քրիստոսի:

Մեր հուսացյալ հոգիները մի անգամ ևս լուսավորվում են ու ոգեշնչվում, ու փառավորում են սուրբ և անմահ անունը Աստուծո, որ Իր Միածին Որդին առաքեց երկիր՝ ի խնդիր փրկության մարդկային ցեղի:

Այս սուրբ պահին Մենք ծնկաչոք աղոթում ենք Միածնաէջ մեր Մայր տաճարի կամարների տակ, որ Սուրբ Ծննդյան պատգամները «խաղաղութեան և ի մարդիկ հաճութեան» առատապես բաշխվեն աշխարհին համայն ու առաջնորդող լույս դառնան մեր օրերի մարդկանց ու ազգություններին:

Ավելի լույս, ավելի փոխադարձ հաճություն և ավելի խաղաղարար ոգի մարդկային կյանքի ճանապարհին:

Սուրբ Ծննդյան ավետիսով հղում ենք Ձեզ Մեր եղբայրական սիրո ու հարգանքի ողջույնը և մաղթում Ձեզ կենաց երկար տարիներ երջանիկ հովվապետությամբ:

«Եւ ինքն Տէր խաղաղութեան, տացէ ձեզ խաղաղութիւն յամենայն ժամ, յամենայն իրս» (Բ Թեսաղ. Գ 17). ամեն:

ՎԱԶԳԵՆ Ա.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

*
* *

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի՝ Ամանորի և Փրկչի հրաշափառ Սուրբ Ծննդյան շնորհավորական գրություններին ի պատասխան ընտացվել են քույր Եկեղեցիների հոգևոր պետերի և կրոնական այլ համայնքների ու կազմակերպությունների ղեկավարների՝ այդ առթիվ ուղարկված ջերմագին շնորհավորական հեռագրեր ու գրություններ, որոնցում մի անգամ ևս պայծառորեն արտահայտվում է քրիստոնեական եղբայրության ու համագործակցության արտագին ոգին քույր Եկեղեցիների ու կրոնական այլ համայնքների և կազմակերպությունների միջև:

Հանուն Հայոց Հայրապետի ջերմ շնորհակալություն ենք հայտնում ընտացված պատասխան շնորհավորականների համար:



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՔ ԱԹՈՌՆԵՐԻՆ, ԹԵՄԱԿԱԼ ԲՈԼՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

«Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ»:

Աստուծո ողորմությամբ, Նոր տարվո արշալույսը վերստին մեզ բոլորիս բերում է մեծ ավետիսը հրաշալի Ծննդյան մեր Տիրոջ ու Փրկչի Հիսուսի Քրիստոսի:

Մեր հուսացյալ հոգիները մի անգամ ևս լուսավորվում են ու ոգեշընչվում, ու փառավորում սուրբ և անմահ անունը Աստուծո, որ Իր Միածին Որդին առաքեց երկիր, ի փրկություն մարդկային ցեղի:

Այս սուրբ պահին, Մենք ծնկաչոք աղոթում ենք Միածնաէջ Մայր տաճարի կամարների տակ, որ Սուրբ Ծննդյան պատգամները «խաղաղութեան և ի մարդիկ հաճութեան» առատապես բաշխվեն աշխարհին համայն, ու առաջնորդող լույս դառնան մեր օրերի մարդկանց ու ազգություններին:

Ավելի լույս, ավելի փոխադարձ հաճություն և եղբայրական սեր ու խաղաղություն նաև մեր սուրբ Եկեղեցվո ու ժողովուրդի կյանքի ճանապարհին:

Սուրբ Ծննդյան ավետիսով հղում ենք Մեր սիրո ողջույնը և ամենաբարի մաղթանքները Ձեզ և Մեր օրհնությունները՝ համայն հայ հավատացյալ ժողովրդյան:

«Եւ ինքն Տէր խաղաղութեան, տացէ ձեզ խաղաղութիւն յամենայն ժամ, յամենայն իրս» (Բ Թեսաղ. Գ 16): Ամեն:

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

*

* *

Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին ամենաջերմ և հարգալից զգացմունքներով զեղուն բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ մեր նվիրապետական երեք Աթոռների գահակալներից, արտասահմանի և ներքին բոլոր թեմերի առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց զանազան կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից:

Հանուն Հայոց Հայրապետի ջերմ շնորհակալություն ենք հայտնում ստացված պատասխան շնորհավորականների համար:



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐ ՆՈՐ ՏԱՐՎԱ ԱՌԹԻՎ

ՄԵԾԱՀԱՐԳ ՏԻԱՐ ԲԱԲԿԵՆ ՍԱՐԿԻՍՈՎԻՆ, ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Երևան

Հանուն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ուրախ սրտով շնորհավորում ենք Ձեր Նոր տարին՝ մաղթելով Ձեզ կենաց երկար տարիներ հաստատուն և քաջառողջությամբ և Ձեր հայրենանվեր գործոց բեղուն հաջողությամբ:

Թող Նոր տարին լինի խաղաղության տարի համայն աշխարհի համար և խաղաղ ու շինարար հառաջընթացի տարի մեր վերածնված մայր հայրենիքի համար:

Ամենախորին հարգանքով՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

ՄԵԾԱՀԱՐԳ ՏԻԱՐ ՖԱԴԵՅ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ, ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Երևան

Այսօր, երբ դիմավորում ենք Նոր տարին, Մեր առաջին մտածումը ուղղվում է դեպի մեր վերածնված մայր հայրենիքը՝ մաղթանքով սրտաբուխ, որ նաև հառաջիկային նա շարունակի իր շինարար հառաջընթացքը նորանոր փայլուն նվաճումներով, աշխարհի խաղաղության պայմաններում:

Մաղթում ենք նաև Ձեզ արևոտ բազում տարիներ քաջառողջությամբ ու Ձեր հայրենաշեն ծրագրերի լիակատար կենսագործումով:

Շնորհավոր Նոր տարի:

Խորին հարգանքով՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

ՄԵԾԱՀԱՐԳ ՏԻԱՐ Վ. ԿՈՒՐՈՅԵԴՈՎԻՆ,
ՍՍՀՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԿՐՈՆԱԿԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Մոսկվա

Հանուն Հայ Առաքելական Եկեղեցու և հայ հավատացյալ ժողովուրդի նոր տարվա սեմին երջանիկ ենք Ձեզի ներկայացնելու Մեր շնորհավորությունները և բարի մաղթանքները Ձեր քաջառողջության և Ձեր հայրենանվեր գործունեության լիակատար հաջողության համար:

Մենք աղոթում ենք, որ 1982 նոր տարին լինի խաղաղության և փոխադարձ բարի կամեցողության տարի աշխարհի բոլոր ժողովուրդների համար ու նաև հարատև վերելքի ու ծաղկումի տարի սովետական ազգությունների մեծ ընտանիքի համար:

Խորին հարգանքով՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

ՄԵԾԱՀԱՐԳ ՏԻԱՐ ՌՈՒԲԵՆ ՊԱՐՍԱՄՅԱՆԻՆ,
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Երևան

Նոր տարվա սեմին ուրախ սրտով շնորհավորում ենք Ձեզ և մաղթում, որ երկար ու արևոտ տարիներ, միշտ քաջառողջությամբ շարունակեք Ձեր գործունեությունը ի խնդիր մեր ժողովրդի բարօրության և հայրենիքի հառաջընթացքին:

Մեր վերածնված երկրի համար թող նոր տարին լինի խաղաղության ու շինարար նոր իրագործումների տարի:

Ամենաբարի ցանկություններով՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Ս. Էջմիածին

Նոր տարվա առթիվ Ձեր հղած շնորհավորանքի և բարի ցանկությունների համար ընդունեցեք իմ շնորհակալությունը: Ես նույնպես շնորհավորում եմ Ձեր Նոր տարին: Թող այս նոր տարում նույնպես բեղուն լինի, խաղաղության և ժողովուրդների բարեկամության համար, Ձեր ազնիվ աշխատանքը: Թող նոր տարին մեր հայրենիքի համար լինի խաղաղության և մեծ երջանկության տարի:

ԲԱԲԿԵՆ ՍԱՐԿԻՍՈՎ
ՀՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

Երևան

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Ս. Էջմիածին

Ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ Նոր տարվա առթիվ:

Հաճեցեք ընդունել քաջառողջության, բարօրության իմ լավագույն մաղթանքները:

Թող նոր տարին լինի մեր հայրենիքի բարգավաճման, ամբողջ աշխարհի խաղաղության, ժողովուրդների բարեկամության ամրապնդման տարի:

Հարգանքներով՝

ՖԱԴԵՅ ՍԱՐԳՍՅԱՆ
ՀՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Երևան

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա

Ս. Էջմիածին

Սրտանց շնորհավորում եմ Ձեր Նոր տարին: Ցանկանում եմ Ձեզ առողջություն, հաջողություններ՝ Ձեր խաղաղասիրական գործունեությունում:

Վ. ԿՈՒՐՈՅԵԴՈՎ
ՍՍՀՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԿՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Մոսկվա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԱՉԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Ս. Էջմիածին

Ձերդ Սրբություն, ընդունեցեք իմ ջերմագին շնորհավորանքը Ամանորի առթիվ: Սրտանց մաղթում եմ առողջություն և նորանոր հաջողություններ Ձեր հայրենանվեր գործունեության՝ հանուն խաղաղության ու ժողովուրդների բարեկամության ամրապնդման:

Հարգանքներով՝

ՌՈՒԲԵՆ ՊԱՐՍԱՄՅԱՆ
ՀՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Երևան





ԽՈՍՔԱՑԱԿԱՆ

ՄԱՏԱՂ ԵՎ ՍԻՐՈ ՃԱԾ

Դարերի ընթացքում տիեզերքի Արարիչ Աստծու նկատմամբ մարդկանց պատկերացումները և դրանց հիման վրա նրանց հոգեկան կապը Աստծու հետ տարբեր դրսևորումներ և տարբեր արտահայտություններ են ստացել, նայած մարդկանց իմացական և ընկերային զարգացման աստիճանի:

Մարդու հոգեկան կապը Աստծու հետ արտահայտվել է նաև զոհաբերության գաղափարով, Աստծուն զոհեր մատուցելու սովորություններով:

Մարդիկ հեթանոսական հնագույն ժամանակներից զոհեր են մատուցել տիեզերքի Արարչին, նույնիսկ երբեմն մարդկային զոհաբերումի ձևով, նրա նկատմամբ արտահայտելու համար իրենց պաշտամունքն ու հարգանքը, իրենց հնազանդությունն ու երախտագիտությունը կամ հայցելու համար օգնություն և պաշտպանություն իրենց շրջապատող բնության արհավիրքների և այլ բազում վտանգների դեմ:

Սույն պատկերացումների լույսի տակ ծնունդ են առել մատաղի կամ զոհաբերության գաղափարն ու սովորույթը հեթանոս ժողովուրդների մոտ և մուտք գործել նաև հրեա ժողովրդի կրոնական կյանքում:

Այս մասին բազում վկայություններ կան Հին Կտակարանում:

Առաջին վկայությունը նախածնողների՝ Ադամի և Եվայի երկու զավակների՝ Կայենի և Աբելի զոհագործության դրվագն է (Գիրք Ծննդոց, գլուխ Դ):

Կայենը երկրագործ էր, իսկ Աբելը՝ խաշնարած: Երկու եղբայրները որոշում են «պատարագ»*, «զոհ», այսինքն՝ «մատաղ» մատուցել Աստծուն, որպես երախտագիտություն: Կայենը «ի պտղոյ երկրի պատարագ» ցորեն է մատուցում, իսկ Աբելը «յանդրանկաց խաշանց իւրոց և ի պարարտաց նոցա» մի գառ է զոհում:

Աստված ընդունում է Աբելի «պատարագը»: Եվ նախանձի հողի վրա զոհի սեղանի առաջ կատարվում է առաջին եղբայրասպան ոճրագործությունը: Կայենը սպանում է իր հարազատ եղբորը՝ Աբելին:

Ըստ Աստվածաշնչական պատումի, Նոյի տապանը ջրհեղեղից 40 օրեր հետո «նստաւ ի լերինս Արարատայ», և բարեպաշտ ու արդար նահապետը Արարատ լեռան փեշին «շինեաց սեղան Աստծոյ... և եհան ողջակէզ ի վերայ սեղանոյն» տապանի կենդանիներից (Գիրք Ծննդոց, գլուխ Ը): Այդ զոհով էլ Աստված հաշտվում է մեղավոր

---

* «Պատարագ» բառը Հին և Նոր Կտակարաններում գործածվել է մի քանի իմաստով: Պատարագ նշանակում է նախ **«զենի-մորթվելիք-կենդանի», մատաղ, նվեր, ձոն, ընծա:**

«Պատարագ բառը քրիստոնեական ժամանակի ծնունդ չէ, ավելի հին հեթանոսական շրջանի մեջ գոյություն ուներ այն, **ընծա, զոհ, մատաղ** նշանակությամբ..

Քրիստոնեական շրջանի (Գ դարի վերջ) ծնունդ է այսօրվա ս. պատարագի նշանակությունը» (Հրաչյա Աճառյան, «Արարատ», 1898, էջ 485—486):

մարդկության հետ և խոստանում՝ «ոչ ևս յաւելից անիծանել զերկիր, վասն գործոց մարդկան»:

Զափազանց ուսանելի է և իմաստալից Հին Կտակարանում (Գիրք Ծննդոց, գլուխ ԻԲ) «հաւատքի հայր և ասպետ» Աբրահամ նահապետի զոհագործությունը, երբ իր միածին և ուխտի զավակ Իսահակին պատրաստվում է զոհել Աստծուն՝ Մորեա լեռան վրա:

Աբրահամի այս զոհագործությունը նախապատմական ժողովուրդների կրոնական կյանքում երբեմնի «մարդազոհ»ի վերջամնացություն է համարվում:

Աստված, սակայն, մերժելով Իսահակի զոհաբերումը, ուղարկում է մի խոյ. «Ահա խոյ մի կախեալ կայր զծառոյն սաբեկայ զեղջերաց և գնաց Աբրահամ առ զխոյն և եհան զնա զողջակէզ, փոխանակ Իսահակայ, որդոյ իւրոյ»:

Ոչխարի զոհաբերումը՝ մատաղը, որպես «ողջակէզ վասն մեղաց», Հին Կտակարանի կրոնական հասկացողությամբ, մովսիսական օրենքի արտահայտություններից ու ձևերից մեկն էր հանդիսանում (Տես այս մասին Ղևտ. ԺԲ 2—8, Ելք ԼԲ 26, ԼԴ 19—20, Թիւք Գ 12 և 47, Ղուկ. Բ 22—38):

Կենդանու զոհաբերումը շոշափելի կապն է Աստծու և մարդու միջև:

Հին Կտակարանում ամենայն կարևորությամբ բացատրվել են զոհաբերելի կենդանու կամ «զուարակ»ի ընտրության և զոհագործության բոլոր մանրամասնությունները (Գիրք Ելից, գլուխ ԻԶ—ԻԹ):

Զոհը մատուցում էր տաճարի ծիսակատար քահանան իր և ժողովրդի մեղքերի համար և զոհի արյունը «ցանում էր ժողովրդի վրա», «ի թողութիւն մեղաց». «զոհ փրկութեան իցէ պատարագն» (Ղևտ. Գ 1):

Իսրայելի կրոնական կյանքում, սակայն, զոհն ու զոհագործությունը դարերի ընթացքում կորցնում են իրենց հոգևոր, ներքին նշանակությունն ու վեհությունը և դառնում արտաքին ձևականություն:

Աստված այլևս ընդունելի չի համարում նման զոհ ու զոհագործություն. «ընդ զոհս և ընդ պատարագս ոչ հաճեցար» (Սղմ. ԼԹ 7): «Զողորմութիւն կամիմ և ոչ զպատարագ» (Ովսե Զ 6): «Գործել զարդարութիւն, խօսել ճշմարտութիւն հաճոյ է առաջի Տեառն քան զարիւն զոհից» (Գիրք Առակաց, գլուխ ԻԱ 3, տես նաև Եսայի ԽԳ 23, Ամովս Ե 22, Երեմ. Զ 20, Մատթ. ԺԵ 8):

«Պատարագ Աստուծոյ՝ հոգի խոնարհ, զսիրտ սուրբ և զհոգի խոնարհ» (Սղմ. Ծ 19)՝ ահա թե ինչ է հաճելի Աստծուն:

Ի լրումն ժամանակի Աստված աշխարհ է առաքում Իր Որդուն՝ մարդոց փրկության համար: Քրիստոս գալիս է և հիմնովին փոխում Հին Կտակարանի զոհի և զոհագործության իմաստն ու կրոնական բովանդակությունը Վերջին Ընթրիքի խորհրդով և Իր անձի զոհաբերումով խաչափայտի վրա:

Քրիստոնեական պատարագը Քրիստոսի սուրբ մարմնի և արյան զոհաբերումն է՝ հաստատված Վերջին Ընթրիքի ժամին, վերնատան մեջ (Մատթ. ԻԶ 17—30, Մարկ. ԺԴ 22—26, Ղուկ. ԻԲ 7—20, Հովհ. ԺԳ) «Առէ՛ք, կերէ՛ք, ա՛յս է մարմին իմ, որ վասն ձեր և բազմաց բաշխի ի քաւութիւն և ի թողութիւն մեղաց»: «Արբէ՛ք ի սմանէ ամենեքեան, ա՛յս է արիւն իմ՝ նորոյ ուխտի, որ յաղագս ձեր և բազմաց հեղանի, ի քաւութիւն և ի թողութիւն մեղաց» (Խորհրդատետր):

Նոր Ուխտով Քրիստոս մերժում է հին սովորությունը, մարդկային ու կենդանական զոհը և հաստատում է Իր մարմնի և արյան զոհաբերության գաղափարը: Քրիստոս Ինքը կենդանի զոհն է, ճշմարիտ պատարագն ու մատաղը, «քանզի Զատիկ մեր զենաւ Քրիստոս» (Ա Կորնթ. Ե 7):

Քրիստոս Իր մարմնի և արյան անարատ պատարագով ջնջեց Հին Ուխտի կենդանիների զոհի գաղափարը: «Տէր մեր փոխարկեաց զհացն ի մարմին և զգինին ի յարիւն, և զնոյն առնել հրամայեաց աշակերտացն, զի այս սուրբ խորհուրդ հաղորդութեան, ոչ է միայն խորհուրդ... այլ նաև է զոհ հացի և գինւոյ, որ գերազանցաբար պարունակէ զամենայն զոհս և զպատարագս հնոյ օրինի» (Մեկնութիւն Մատթէի):

Քրիստոս Ինքն է պատարագում և պատարագվում. «Դու ես որ մատուցանես և մատչիս, ընդունիս և տաս... վասնզի ինքդ է զենումն և օծեալ, գառն և երկրաւոր հաց, քահանայապետ և պատարագ... ինքդ է բաշխող և նոյն ինքդ բաշխի ի միջի մերում միշտ անձնապէս» (անսպառ կերպով. Խորհրդատետր):

«Քրիստոս պատարագեալ բաշխի ի միջի մերում» (Խորհրդատետր):

Ստեղծագործության ներշնչված իր «Արարչական» քերթվածի ուրբաթ օրվա երգի մեջ Ս. Ներսես Շնորհալին նշում է.

«Հօր հաճութեամբ ի մահ խաչին,
Եկն կամաւ ի յուրբաթին.
Գառն զենաւ ի հին Զատկին,
Փոխան գառանցն օրինակին»:
(Ժամագիրք)

Մատաղի քրիստոնեական ըմբռնումը մեր այսօրվա ս. պատարագն է: Այլ բա-

ցատրությամբ, հայոց ս. պատարագը քրիստոնեական բուն մատաղն է:

Քրիստոնեական ոչ մի Եկեղեցի չի պահպանել մատաղի սովորությունը: Սակայն մատաղը որպես կենդանական զոհ հնուց ի վեր մեր ժողովրդի սիրած ծիսակատարությունն է եղել:

Նախաքրիստոնեական շրջանում հայկական սովորության համաձայն, մեր երկրի թշնամիների և մանավանդ պարսիկների դեմ հայոց թագավորների և հայ ժողովրդի տարած հաղթանակների առիթով զոհեր էին մատուցվում համաժողովրդական հանդիսությամբ, «սպիտակ ձիով, սպիտակ ջորիով և պարարտ եզամբք» (Ագաթանգեղոս):

Քրիստոնեական շրջանում էլ վանքերի մեջ կենդանիների զոհագործումը պահպանվել էր: Օրինակ՝ Մշո Ս. Կարապետ վանքում պահում էին սպիտակ եզներ, այդ նպատակով: Այդ կենդանիները նվիրական էին ժողովրդի համար որպես խորհրդանիշը «Հացի առատութեան», «պտղաբերութեան», «արդարութեան» և «խաղաղութեան» ու զանազան հիվանդություններից բուժման. «ի գործս բարիս, և պատարագ Աստուծոյ» (Տաթևացի):

Ս. Սահակ Պարթևը իր սահմանած 55 կանոնների 36—44 հոդվածներում խոսում է, թե «որպէս սահմանեցաւ կարգ ուխտի» և որոշում է, թե մատաղի ո՞ր մասը պետք է նվիրել Եկեղեցուն և ո՞ր մասը մանավանդ՝ վանքերին, որպեսզի վանականներն ու ուխտավորները վայելեն «սիրո այդ ճաշը»՝ **վասն ժողովրդականացն որ յագապ հրաւիրեցան** և օրհնեն նվիրատուներին, աղոթեն նրանց ննջեցյալների հոգու խաղաղության համար: Իսկ **սիրո ճաշը** կամ **ագապը** վայելողների համար լինելու է «փրկութիւն, առողջութիւն կենաց և թողութիւն յանցանաց» (Կանոնագիրք հայոց): Ուրեմն, Սուրբ Սահակի կանոններով **մատաղի հին սովորությունը նվիրագործվում է որպես «սիրոյ ճաշ»:**

Այս ոգով մեր Եկեղեցու Մաշտոցում կամ Ծիսարանում կա «կանոն մատաղ օրհնելոյ»:

Ըստ ընդունված այս կարգի, մատաղը կատարվել է վանքերում, ուխտի օրերին և այլ կարևոր առիթներով: Հաճախ ամբողջ գյուղը կամ թաղի ժողովուրդը, որը մասնակցել էր մատաղի ծախսին, թափոր կազմած պտտեցնում էր մատաղացուն և ապա կենդանին տանում վանք՝ մատաղ անելու երգերով և աղոթքներով: Այնուհետև ամբողջ ժողովուրդը հավաքաբար ճաշակում էր մատաղը՝ որպես սիրո ճաշ:

Մատաղի մատուցման այս ավանդությունը կատարվում է նաև այսօր Ստամբուլում, Բուլղարիայում, Ռումինիայում և այլուր՝ հայկական վանքերի և եկեղեցիների ուխտի օրերին, տարին մեկ անգամ: Մատաղների մեծագույն մասը նվիրվում է նաև բարեսիրական հաստատություններին, հիվանդանոցներին, աղքատներին, այսինքն՝ հասարակության օգտին:

Բեթլեհեմի հայոց վանքում, հին տոմարով Ս. Ծննդյան տոնի օրը, որը կատարվում է հունվարի 19-ին, Ծննդյան մեծ տաճարի Սուրբ Այրի սեղանի վրա, հանդիսավոր պատարագից հետո պատարագիչը եկեղեցական թափորով, առավոտյան ժամը 6-ին, Ծննդյան շարականով, խաչով ու խաչվառով առաջնորդվում է վանական սեղանատուն, ուր օրհնվում է այս առթիվ կատարված առատ մատաղը, և միաբանությունն ու ողջ ուխտավորները մասնակցում են սիրո ճաշին՝ համաժողովրդական մատաղին:

Հայրենիքի մեր ժողովուրդն էլ սիրում է և պահում մատաղի և մատաղօրհնության հին սովորությունը:

Վերջին տարիներին, Հայոց Հայրապետի կարգադրությամբ առողջապահական պայմաններ են ստեղծվել՝ ի պահպանություն ազգային այս ավանդությունների, մատաղ անելու Ս. Գեղարդ, Ս. Խորվիրապ, Ս. Գայանե, Ս. Խաչ (Եղեգնաձոր) վանքերում:

Սույն խմբագրականը, որը գրվել է Հայոց Հայրապետի թելադրանքով, հոգեշեն մի նպատակ է հետապնդում, որ մեր հավատացյալ ժողովուրդը, որ ի հայրենիս և ի սփյուռս աշխարհի, նախ ուղիղ հասկանա զոհաբերումի քրիստոնեական բուն խորհուրդը, որը մեր եկեղեցիներում մատուցված սուրբ պատարագի արարողությունն է: Երկրորդ՝ որ հնուց եկած մատաղի սովորությունը պետք է պահպանել իբրև հավաքական սիրո ճաշ և ոչ թե այն վերածել սովորական կերուխումի և խրախճանքի, ինչ որ մերժելի է:

Ուրեմն, ըստ եկեղեցական կարգի, մատաղ պետք է անել վանքերում, ուխտի օրերին, սիրո ճաշերի ձևի ներքո:

Հավատացյալ հայ քրիստոնյայի համար մատաղը ճշմարտապես ընդունելի կդառնա հավաքական սիրո ճաշերի բարեպաշտական մթնոլորտում միայն:

ՀԱՅԿ

ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Այս տարի էլ Ս. Ծննդյան հանդիսությունները Մայր Աթոռում կատարվեցին ավանդական շուքով, սրտագին մթնոլորտում և հոգեկան ուրախությամբ:

ՃՐԱԳԱԼՈՒՅՑԻ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Հունվարի 5-ին, երեքշաբթի.—**Ճրագալոյց Ծննդեան և Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.**

Օրվա տոնի առիթով Մայր տաճարում, երեկոյան ժամը 17-ին, պաշտվում է Ճրագալույցի հանդիսավոր ժամերգություն, աստվածաշնչական ընթերցումներով և համապատասխան շարականների երգակցությամբ:

Եկեղեցական թափորով Մայր տաճար է առաջնորդվում Վեհափառ Հայրապետը:

Ս. պատարագից առաջ հոգևոր ճեմարանի ուսանողների խումբը Ավագ սեղանի բեմից ընթերցում է Դանիել մարգարեի «Երից մանկանց» օրհներգությունը:

Ճրագալույցի հանդիսավոր ս. պատարագը մատուցում է Վրաստանյաց թեմի առաջնորդ Տ. Գևորգ եպս. Սերայդարյանը:

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ կատարվում է Ս. Ծննդյան նախատոնակը: Մայր տաճարի կամարների ներքո հնչում է վեհ ու տպավորիչ «Խորհուրդ մեծ և սքանչելի» Ս. Ծննդյան շարականը:

Մայր տաճարում եկեղեցական արարողությունից հետո Վեհափառ Հայրապետը, եկեղեցական թափորով և շարականների երգակցությամբ, առաջնորդվում է Վեհարան, որտեղ ընթերցվում է Ս. Ծննդյան Ավետարանը, և ողջ միաբանությունը շնորհավորում է Հայոց Հայրապետի Ս. Ծնունդյան տոնը:

Նույն հանդիսությամբ միաբանական թափորը Վեհարանից ուղղվում է Ղազարապատի միաբանական սեղանատուն, որտեղ օրհնվում են Մայր Աթոռի բարիքները, աղն ու հացը, և ողջ միաբանությունը, ուսանողությունը մասնակցում են Ս. Ծնունդյան նավակատիքի ուրախ սեղանին:



ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈԶ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ՝ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

Հունվարի 6, չորեքշաբթի.—**Տօն Ծնընդեան և Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.**

Առավոտյան Մայր տաճարում, ողջ միաբանության և ուսանողության մասնակցությամբ, պաշտվում է Ս. Ծննդյան ժամերգությունը:

Ժամը 11-ին Հայոց Հայրապետը Վեհարանում, զգեստավորված, եկեղեցական թափորով, առաջնորդվում է Մայր տաճար՝ մատուցելու Ս. Ծննդյան պատարագը:

Սուրբ սեղանին սպասավորում են Տ. Գևորգ եպիսկոպոսը, Տ. Մոմիկ վարդապետը, Տ. Զատիկ աբեղան և սարկավագների դասը:

Մայր տաճարը լիքն է ուխտավոր և հավատացյալ բազմությամբ:

Ավագ սեղանի առաջ, ատյանում, ս. պատարագին ներկա են ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ռ. Պարսամյանը, տեղակալ Ա. Հասրաթյանը, Գերագույն Հոգևոր Խորհրդի և Վերստուգիչ հանձնաժողովի անդամները և այլ հյուրեր:

«Հայր մեր»-ից առաջ քարոզում է Վեհափառ Հայրապետը՝ Քրիստոսի Սուրբ Ծննդյան ավետիսը տալով ողջ հայ ժողովրդին, որ ի հայրենիս և ի սփյուռս աշխարհի:

Հայրապետական գեղեցիկ և բովանդակալից քարոզը տպված է «Էջմիածին» ամսագրի սույն համարում (էջ 3—5):

Նույն օրը, երեկոյան ժամը 23-ին, Հայոց Հայրապետի Ծննդյան քարոզը ձայնասփռվում է Երևանի ռադիոկայանից:

Ս. պատարագի ավարտին հարյուրավոր հավատացյալներ Ս. Հաղորդություն են ստանում երկյուղած բարեպաշտությամբ, պատարագիչ Հայոց Հայրապետի ձեռքով: Հաղորդություն ստացողների մեջ էին նաև ուխտավորաբար Մայր Աթոռ ժամանած հեռավոր Բուենոս Այրեսի Մարի Մանուկյան երկրորդական վարժարանի այս տարվա երկսեռ ուսանող-ուսանողուհիները, որպես Մայր Աթոռի հարազատ զավակներ:

Այնուհետև ավանդական հանդիսությամբ կատարվում է, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, Ավագ խորանի բեմի վրա՝ Զրօրհնյաց կարգը՝ ի հիշատակ Հորդանան գետում Քրիստոսի մկրտության Ս. Հովհաննես Մկրտչի ձեռքով:

Ապա Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով առաջնորդվում է Վեհարան, որտեղ ընդունում է բազում շնորհավորանքներ օրվա տոնի առիթով:

Վեհարանում էին նաև Բուենոս Այրեսի Մարի Մանուկյան երկրորդական վարժարանի այս տարվա շրջանավարտները, շուրջ 25 հոգի, իրենց տեսչի գլխավորությամբ, որոնք աջահամբույրով շնորհավորեցին Հայոց Հայրապետի տոնը՝ Քրիստոսի Սուրբ Ծնունդը:

Հայոց Հայրապետը զգացված սրտով ու ջերմ սիրով օրհնում է շրջանավարտներին և տալիս Իր պատգամը հեռավոր այդ ափերի վրա ապրող Իր զավակներին՝ լինելու օրինապահ քաղաքացիները իրենց հյուրընկալող բարի և քրիստոնյա Արգենտինայի և զավակները Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և ճշմարիտ հայրենասերները հայոց վերածնված ու միակ մայր հայրենիքի:

Ժամը 15-ին Վեհարանի սեղանատանը, օրվա տոնի առիթով, տրվում է ճաշկերույթ, որն անցնում է ջերմ մթնոլորտում:

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԵՏ ԱՐԱՐԱՏՅԱՆ ԵՎ ՇԻՐԱԿԻ ԹԵՄԵՐԻ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Սույն թվականի հունվարի 21-ին, հինգշաբթի օրը, երեկոյան ժամը 18.30-ին, Վեհարանում տեղի է ունենում Հայոց Հայրապետի հանդիպումը Արարատյան և Շիրակի թեմերի հոգևորականության, թեմական խորհուրդների և եկեղեցիների գործադիր մարմինների ներկայացուցիչների հետ:

Հանդիպումից առաջ Մայր տաճարում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում երեկոյան հանդիսավոր ժամերգություն:

Վեհարանի հանդիպմանը ներկա էին Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Արսեն եպս. Բերբերյանը, Շիրակի թեմի առաջնորդ Տ. Նարեկ եպս. Շաքարյանը, Գերագույն Հոգևոր Խորհրդի և Վերստուգիչ Հանձնաժողովի անդամները, հոգևոր ճեմարանի տեսչական կազմը, Վաղարշապատի և Ս. Գեղարդ ու Ս. Խորվիրապ վանքերի վանահայրերը:

Հանդիպմանը հրավիրված էր Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ տիար Ա. Հասարաթյանը:

Հանդիպումը սկսվում է խմբովին արտասանված «Հայր մեր»-ով:

Ապա խոսք է ասում Մայր տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանը՝ ողջունելով ներկաներին, որոնք եկել են լսելու Գերագույն Հոգևոր Խորհրդի 15 հունվարի որոշումների մասին, որոշումներ, որոնք նպատակ ունեն Հայաստանի ներքին թեմերում ու եկեղեցիներում առավել ամրապնդել կարգ ու կանոնի պահպանումը ծիսական արարողությունների ընթացքում և կարգապահությունը՝ եկեղեցիների վարչա-տնտեսական գործունեության մեջ:

Այդ որոշումների շարքին էր նաև՝ վերացումը եկեղեցիներում պնակներ պտտեցնելու և պնակներ զետեղելու սովորության, որը վնասում էր քահանայից դասի բարոյական հեղինակությանը:

Տ. Հուսիկ արքեպիսկոպոսը լրացուցիչ բացատրություններ է տալիս Գերագույն Հոգևոր Խորհրդի որոշումների առնչու-

թյամբ և ապա ընթերցում այդ կապակցությամբ Նորին Սրբության 16 հունվար 1982 թվակիր հրահանգը՝ ուղղված Արարատյան և Շիրակի թեմական առաջնորդներին:

Ապա Տ. Հուսիկ սրբազանը հրավիրում է Վեհափառ Հայրապետին Իր խոսքն ասելու:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

(27 հունվարի 1982 թ.)

Ես շատ ուրախ եմ և հոգեպես մխիթարված, որ այսօր, Վեհարանի այս հարկի տակ՝ շրջապատված եմ ձեզանով: Քիչ առաջ մենք միասին աղոթեցինք Մայր տաճարում: Մեր հոգեկան մտորումների և զգացմունքների ամփոփումը տեղի ունեցավ այնտեղ և հոգեպես տրամադրվեցինք այստեղ գալ աղոթքի պահից հետո: Գալ և մեր սիրտը բացել ամբողջական անկեղծությամբ և ամբողջական համարձակությամբ: Այն, ինչ բարի է և ազնիվ՝ համարձակ պետք է լինի, և մենք այդ զգացումով ենք եկել այստեղ:

Ողջունում եմ ձեր բոլորի ներկայությունը: Ողջունում եմ նաև ներկայությունը մեր պետական իշխանության ներկայացուցիչ տիար Անդրանիկ Հասրաթյանի, որ եկավ Մեր հրավերով:

Եվ այս առիթը ուզում եմ օգտագործել մի անգամ ևս իմ և ձեր բոլորի շնորհակալությունը հայտնելու, որ Մայր Աթոռիս ու ներքին թեմերի շինարարական աշխատանքներում տևապես վայելել ենք մեր պետական իշխանությանց բարյացակամ վերաբերումը, որով հնարավոր դարձան կենսագործումը մեր եկեղեցաշեն ծրագրերի: Այսպես է, որ մենք ամենքս աշխատում ենք մեր պարտքը կատարել Աստուծո առաջ, մեր ազգի առաջ, մեր պատմության առաջ:

Ես ողջունում եմ նաև այստեղ ներկայությունը մեր Գերագույն Հոգևոր Խորհրդի հարգարժան անդամների, Վերստուգիչ հանձնաժողովի անդամների, Արարատյան թեմի և Շիրակի թեմի թեմական խորհուրդների և Գործադիր մարմինների անդամների, նաև քահանայից դասի ներկայացուցիչների, որոնք այստեղ են գրտնվում, և նաև Վաղարշապատի, Ս. Գեղարդի և Խորվիրապի վանքերի վանահայրերի:

Մեր Եկեղեցու ներքին վարչա-կազմակերպչական կառույցի ներկայացուցիչներն եք դուք: Եվ կարծում եմ, լավ է, որ տարին գոնե մեկ անգամ այսպիսի հավաքույթներ, հանդիպումներ տեղի ունենան, փոխանակենք մեր մտքերը և ճանապարհ հարթենք մեր ապագա անելիքների առնչությամբ և աշխատենք ամեն մեկս մեր տեղից, մեր իշխանություններով սատարել մեր Եկեղեցու պայծառության և Մայր Աթոռի և ընդհանրապես մեր եկեղեցական կյանքի հոգևոր ու աշխարհական ներկայացուցիչների հեղինակության բարձրացման:

Տեսնում ենք, ինչպիսի սիրով, ինչպիսի հավատքով վերջին տասնամյակներին հայրենաբնակ մեր ժողովուրդը շրջապատում է մեզ ու լցնում մեր եկեղեցիները: Բանիվ և գործով մենք բոլորս պատասխանատու ենք այս ժողովրդի առջև: Մենք պարտավոր ենք բարձր պահելու մեր Եկեղեցու անունը, մեր հոգևորականության հեղինակությունը:

Մեր գործունեությամբ մենք բոլորս պարտավոր ենք ցույց տալ, որ Եկեղեցին օրինապահ հիմնարկություն է, ուր անազնվություններ չեն թույլատրվում, և որ Եկեղեցու ծառայողներս կարգապահ քաղաքացիներն ենք մեր հայրենիքի:

Դժբախտաբար պատահեցին որոշ օրինազանցություններ և անկարգություններ Իմ գահակալության ընթացքին տարբեր առիթներով: Ես չեմ ուզում այդ տխուր պարագաներին անդրադառնալ հանկանե-անվանե, բայց ձեզանից շատերը գիտեն այդ մասին:

Ես առհասարակ մեղմ բնավորությամբ մարդ եմ, առանց իշխանավորի հովեր առնելու: Բայց Իմ արժանապատվության զգացումը, Իմ առաքելության հրամայականը այնքան զորավոր են, որ Ինձ անզիջող են դարձնում այն պահին, երբ Ես մի չարագործի կամ մի վնասարարի առջև եմ գրտնվում: Իմ ձեռքը չի դողում ստորագրելու համար վերջնական վճիռ դրանց նկատմամբ:

Ես դժբախտություն եմ ունեցել այդպիսի առիթներով, այդպիսի վճիռներ ստորագրելու և՛ Ռումինիայում, և՛ այստեղ:

Այդ տխուր փորձություններից հետո մանավանդ, երդում եմ արել Ես չհանդուրժել արծաթասիրության արարքներ մեր հոգևորականության շարքերից ներս, «զի արմատ ամենայն չարեաց արծաթասիրութիւն է», ինչպես վկայում է Պողոս առաքյալ (Տիմոթ. Զ 10):

Ես չեմ հավատում, որ ինչքան էլ ուսյալ լինի տվյալ հոգևորականը, ինչքան էլ լավ ծիսակատար ու ճառախոս, եթե նա ծայր աստիճան փողասեր է՝ նա ազնիվ մարդ չէ և կեղծ են նրա և՛ հավատքը, և՛

ազգասիրությունը, և՛ հայրենասիրությունը: Այդ գիտակցությամբ է, որ Ես այստեղ հեռացրի մի շարք անազնիվ հոգևորականների հենց Իմ գահակալության առաջին օրվանից և ապա վերջին տարիներին:

Դուք բոլորդ պատասխանատու մարդիկ եք: Ձեր վրա մենք վստահություն ունենք: Դուք պետք է ոչ միայն ինքներդ ազնվորեն գործեք, այլ հսկեք, որ ձեր շուրջինները էլ ազնիվ աշխատեն: Հոգևորականներն էլ երբեմն դժբախտաբար ենթակա են այսպիսի փորձությունների և տկարությունների: Սակայն ճշմարիտ հոգևորականը այն մարդն է, որ Հիսուսի Ավետարանը ձեռքին, պետք է իր հավատացյալներին օրինակ տա՝ ժուժկալության, ազնվության և բարոյական կարգապահության:

Անցյալում էլ հոգևորականների շարքերում գտնվել են արծաթասերներ: Ներսես Շնորհալի հայրապետը իր անդրանիկ կոնդակում խիստ բառերով դատապարտում է հոգևորականների կաշառակերությունը և փողասիրությունը, հիշելով թե՛ եպիսկոպոսներին, թե՛ վարդապետներին, թե՛ վանականներին, թե՛ քահանաներին:

Այլ Եկեղեցիների ծոցում էլ դրսևորվել են նման պարագաներ: Այստեղ Ես ուզում եմ կարդալ ձեզ 14-րդ դարի Լատին հայտնի հոգևորականի, Բեատու Դոմինիչիի հետևյալ տողերը՝

«Փողը, շատ սիրված է մեծից և փոքրից, կրոնականներից և աշխարհականներից, աղքատից ու հարուստից, վանականից և եկեղեցականից, ամեն ինչ փողի հպատակ է: Այս անդադրուն ծարավը դեպի ոսկին, հոգիները տանում է դեպի ամեն փորձություն, բթացնում է ըմբռնումը, կուրացնում է գիտակցությունը, պղտորում է միտքը, շեղում է կամքը, չի ճանաչում բարեկամ, չի սիրում ազգական, չի վախենում Աստծուց և չի ամաչում մարդկանցից»: Ի՞նչ անավոր դատաստան: Ճշմարիտ հոգևորականի՝ համարձակ, արդար խոսքն է այս: Մենք պարտավոր ենք այս մեծ մարդկանց օրինակին հետևել: Այլապես արժանի չենք լինի հոգևոր հայրեր կոչվելու:

Այս բոլորից հետո, Ես պետք է գնահատանքի խոսք ասեմ այստեղ գտնվող հոգևորականներին, թեմական առաջնորդ սրբազան հայրերին, Գեղարդի և Խորվիրապի և Վաղարշապատի վանքերի վանահայրերին, որոնք պատասխանատվության խոր զգացումով և ժրաջանությամբ կատարում են իրենց պարտականությունը, իրենց եկեղեցիներում և վանքերում հոգևոր, բարոյական և ֆինանսական կարգապահությունը ամրապնդելու նախանձախնդրությամբ:

Այս բոլորը Ես ձեր ուշադրությանն եմ ուզում հանձնել:

Այստեղ կարդացվեց որոշումը Գերագույն Հոգևոր Խորհրդի և Իմ հաստատման վճիռը, որով, հրահանգում եմ մեր երկու թեմերի առաջնորդներին և իրենց միջոցով գործադիր մարմիններին, որպեսզի, դեռևս չլուծված հարցեր արմատապես լուծվեն խաղաղ և օրինավոր կերպով, ինչպիսին է նաև պնակ պտտեցնելու սովորությունը:

Իմ գահակալության առաջին օրվանից, Մայր տաճարում վճռականապես արգելեցի շարունակումը այդ ժամանակավրեպ սովորության: Դժգոհություններ, բողոքներ եղան, բայց դրանք ոչ մի չափով Իմ վրա չազդեցին ու արդեն շատ վաղուց մոռացված է այդ սովորությունը: Այդ Իմ հրահանգն է՝ վերացնել որևէ պնակ պտտեցնելու սովորությունը նաև ձեր թեմերում, ո՛չ եկեղեցու օգտին, ո՛չ քահանաների օգտին: Նաև որևէ առիթով եկեղեցիներում պնակ դնելու սովորությունը նույնպես պետք է իսպառ վերացվի: Հարկավոր է ժողովրդին հորդորել, հրավիրել, որ եկեղեցու պայծառության համար իրենց լուման գցեն գանձանակների մեջ: Իսկ ինչ վերաբերվում է աղ ու մատաղ օրհնելու ավանդության, այդ կարելի է կատարել միայն վանքերում, որտեղ հատուկ սանիտարական պայմաններ են ստեղծված, ինչպես Ս. Գեղարդի, Ս. Գայանեի, Ս. Խորվիրապի և Ս. Խաչի վանքերում: Անցյալում էլ այդպես է եղել:

Ես խնդրում եմ ձեզանից, և հոգևոր հայրերից և գործադիր մարմիններից օգնել մեր առաջնորդներին, որպեսզի տառացի և անխափան կերպով գործադրվեն այս հրահանգները: Մի անգամ ընդմիշտ ազատվենք այս հոգսերից ի սեր Աստուծո:

Իմ խոսքը ուղղելով հատկապես քահանայից դասին, որի ներկայացուցիչները այստեղ են, պետք է հորդորեմ նրանց, որ առավել ուշադիր լինեն ու պարտաճանաչ իրենց հոգևոր պարտականության ճանապարհին: Եկեղեցական արարողությունները առավոտ, երեկո կանոնավոր կերպով կատարեն, առանց աճապարանքի, առանց զանցառումների, որ լինեն կարգապահ, եկեղեցին մաքուր պահեն և բարեկարգ: Ինչպես որևէ պաշտոնյա իր պարտականության վրա պետք է գտնվի ամեն օր, իր աշխատանքի ժամերին, այնպես էլ քահանաները: Դա քահանայի հիմնական աշխատանքի մասն է կազմում:

Քարոզ խոսելու պարագան: Ես չեմ

պահանջում, որ ամեն քահանա կարողություն ունենա աստվածաբանական, փիլիսոփայական քարոզներ խոսելու: Կարիք չկա այդքան պահանջկոտ լինելու: Բայց ակնկալում եմ, որ հայ քահանան պարզ ու հստակ բացատրի օրվա Ավետարանը կամ առաքելական թուղթը: Դա ամեն հոգևոր հովիվ կարող է անել: Շատ քչերը երևի այդքանի էլ ի վիճակի չլինեն: Այդ էլ մեր թերությունն է, որովհետև վերջին քսան տարիների ընթացքում, Արարատյան թեմի նախկին առաջնորդները, ստիպված եղան ձեռնադրել մի քանի քահանաների, որոնք համապատասխան բավարար պատրաստություն չունեին, ոչ իսկ կարգին հայերեն լեզվին էին տիրապետում: Ես չեմ ուզում կրկնվեն նրման պարագաներ հետ այսու: Ուշադիր պիտի լինենք ձեռնադրությունների ժամանակ, թե՛ քահանայի պարկեշտության ու բարոյական նկարագրի և թե՛ նրա ազնվության ու նրա գիտելիքների նկատմամբ:

Ինչպես հայտնի է ձեզ, երկու տարի տևող քահանայից դասարան ստեղծեցինք Մայր Աթոռում, ուր գովելի աշխատանք տարվեց և տասներկու երիտասարդներ բավարար կրթություն ստացան: Նրանցից մի մասը վերջերս ձեռնադրվել են քահանաներ, երկուսը Լենինականում, մեկը Գեղարդում, մեկը՝ Խորվիրապում: Երեքին այստեղ սարկավագ ձեռնադրեցինք վերջերս, իսկ չորսին էլ Արսեն սրբազանը ձեռնադրեց Իմ կարգադրությամբ՝ Երևանում: Այսպիսով մտածում ենք հետզհետե մեր հոգևոր դասի մտավոր և բարոյական մակարդակը բարձրացնել:

Ահավասիկ, սիրելիներ մեր, այն մի քանի լուսաբանություններն ու հորդորները, որոնք ուզեցի ձեզ ներկայացնել, Գերագույն Հոգևոր Խորհրդի վերջին որոշումների առնչությամբ:

Կրկին կոչ եմ անում բոլորիդ, և խընդրում՝ իբրև Հայոց Հայրապետ, որ աջակցեք Մեզ, Մեզ լավ հասկանաք և գործակցեք Մեզ, որպեսզի միասնաբար, ձեռք-ձեռքի տված, ավելի ու ավելի ամրացնենք հիմքերը մեր եկեղեցական կյանքի մեր ներքին թեմերում ու եկեղեցիներում, ի մըխիթարություն մեր հավատացյալ ժողովրդի:

Թող անսասան ու պայծառ մնա մեր առաքելական Մայր Եկեղեցին այժմ և հավիտյան, ամեն:

* *
*

Սույն հավաքույթին ծանուցվեց նաև Գերագույն Հոգևոր Խորհրդի որոշման մասին, որով վերահաստատվում է տնտեսա-ֆինանսական ստուգումների կարգը, ստուգումներ, որոնք պետք է կատարվեն տարին մեկ-երկու անգամ Մայր Աթոռում կազմված քննիչ հանձնաժողովի կողմից, Արարատյան ու Շիրակի թեմերում ու եկեղեցիներում: Այդ հանձնաժողովի նախագահն է Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ, տնտեսագետ պրն. Կարպիս Կարագյանը, իսկ անդամներն են՝ Մայր Աթոռի Վերստուգիչ հանձնաժողովի անդամ պրն. Մինաս Կարապետյանը և Մայր Աթոռի գլխավոր հաշվապահ պրն. Գառնիկ Քեհյայանը:

Նորին Սրբության խոսքից հետո նույն հարցերի շուրջ ելույթ են ունենում նաև Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ տիար Կարպիս Կարագյանը, Ս. Գեղարդ վանքի վանահայր Տ. Եղիշե ավագ քհն. Սարգսյանը, Երևանի Ս. Սարգիս եկեղեցու թեմական խորհրդի ատենապետ տիար Վալտեր Արամյանը և «Էջմիածին» ամսագրի խմբագիր տիար Արթուն Հատիտյանը:

Բոլոր արտահայտվողներն էլ ողջունում են Գերագույն Հոգևոր Խորհրդի որոշումը և երախտագիտությամբ գնահատում Հայոց Հայրապետի գրավոր հրահանգը՝ ուղղված Տ. Արսեն և Տ. Նարեկ առաջնորդ սրբազաններին:

Հանդիպման ավարտին կրկին անգամ Իր պատգամն ու օրհնությունն է տալիս Վեհափառ Հայրապետը ներկա հոգևորականությանը՝ ըստ արժանվույն գնահատելով նաև երկու թեմերում կատարված հոգևոր ծառայության աշխատանքները՝ ի պայծառություն Հայ Եկեղեցու և ի հոգևոր մխիթարություն մեր ժողովրդի:

Ժամը 20.30-ին հանդիպմանը ներկա գտնվողները մասնակցում են միաբանական սեղանատանը տրված սիրո ընթրիքին:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

Նոր տարվա և Ս. Ծննդյան տոների առիթով, գրավոր միջնորդությամբ Մայր տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպիսկոպոսի, Վեհափառ Հայրապետը Իր ուշադրությանն է արժանացնում Մայր տաճար, Ս. Հռիփսիմե, Ս. Գայանե, Ս. Գեղարդ, Ս. Խորվիրապ, Ս. Ծողակաթ վանքերի վանահայրերի և Էջմիածնի քաղաքամիջի Ս. Աստվածածին եկեղեցու քահանա հայրերի նվիրյալ ծառայություններն ու կատարում մի շարք պարգևատրումներ:

Հունվարի 1-ին, ուրբաթ օրը, Մայր տաճարում Նոր տարվա առթիվ մատուցված սուրբ պատարագից հետո, ժամը 14-ին, Մայր Աթոռի ողջ միաբանությունը և վերոհիշյալ վանքերի և եկեղեցիների վանահայրերն ու ծիսակատար քահանա հայրերը, լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպիսկոպոսի առաջնորդությամբ, ներկայանում են Վեհարան՝ շնորհավորելու Հայոց Հայրապետի Ամանորը:

Այս ուրախ առիթով, հանուն բոլոր ներկաների, Տ. Հուսիկ սրբազանը շնորհավորում է Հայոց Հայրապետի Նոր տարին, քաջառողջություն, երկարամյա եկեղեցաշեն և աթոռանվեր գահակալության սրբազան բարեմաղթություններով:

Նորին Սուրբ Օծությունը սիրով է ընդունում Մայր Աթոռի միաբանության և ներկա քահանա հայրերի սրտաբուխ սույն բարեմաղթությունները, օրհնում բոլորին, շնորհավորում նրանց Նոր տարին՝ տալով հայրապետական Իր օրհնությունն ու պատգամը:

Այս առիթով Վեհափառ Հայրապետը կատարում է հետևյալ շնորհաբաշխությունները.

1. Ավագ քահանայության պատվի տվչություն.

Ս. Գեղարդ վանքի վանահայր Տ. Եղիշե քահանա Սարգսյանին.

Ս. Խորվիրապ վանքի վանահայր Տ. Գուրգեն քահանա Մուրադյանին.

Ս. Հռիփսիմե վանքի եկեղեցու ծիսակատար Տ. Հակոբ քահանա Հակոբյանին:

2. Քահանայական ծաղկյալ փիլոն կրելու իրավունք.

Մայր Աթոռի մկրտարանի վարիչ Տ. Արտակ քահանա Սիմոնյանին.

Ս. Գայանե վանքի վանահայր Տ. Գուրգեն քահանա Աշուրյանին.

Էջմիածին քաղաքի Ս. Աստվածածին եկեղեցու վանահայր Տ. Հովսեփ քահանա Հակոբյանին.

Մայր Աթոռի մկրտարանի ծիսակատար Տ. Եղիշե քահանա Բաղրամյանին:

3. Քահանայական լանջախաչ կրելու իրավունք.

Ս. Ծողակաթ վանքի վանահայր Տ. Ղևոնդ քահանա Հարությունյանին.

Մայր տաճարի հերթապահ Տ. Նարեկ քահանա Մատարյանին.

Մայր Աթոռի մկրտարանի ծիսակատար Տ. Բարսեղ քահանա Ղազարյանին.

Մայր Աթոռի մկրտարանի ծիսակատար Տ. Խաչատուր քահանա Ֆրանգյանին:

Հանուն հայրապետական ուշադրության արժանացած քահանա հայրերի, Ս. Գեղարդ վանքի վանահայր Տ. Եղիշե քահանա Սարգսյանը որդիական երախտագիտության և շնորհակալության խոսք է ուղղում Վեհափառ Հայրապետին՝ խոստանալով, որ պարգևատրվածները նույն նվիրումով կշարունակեն իրենց ծառայությունները՝ հուրախություն Հայոց Հայրապետի և ի մխիթարություն հայ հավատացյալ ժողովրդի:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն շնորհավորում է հայրապետական ուշադրության արժանացած քահանա հայրերին, այն համոզումով, որ նրանք իրենց հետագա եկեղեցական նվիրյալ ծառայություններով կարդարացնեն Հայոց Հայրապետի վստահությունն ու գնահատությունը:





ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հունվարի 3-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Իմաստութիւն Հօր Յիսուս, տուր ինձ իմաստութիւն, զբարիս խորհել, խօսել և գործել առաջի քո յամենայն ժամ» «Հաւատով խոստովանիմ» աղոթքի բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հունվարի 7-ին, հինգշաբթի.—Յիշատակ մեռելոց.

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Եղիշե քհն. Բաղրամյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգստյան պաշտոն՝ «վասն հանգուցելոց»:

*
* *

Հունվարի 10-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Ստեփանոս աբդ. Զաքալյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում Քրիստոսի Հրաշափառ Ծննդյան խորհրդի և նշանակության մասին մարդու փրկության գործում:

*
* *

Հունվարի 11-ին, երկուշաբթի.—Այսօր, Ամանորյա և Ս. Ծննդյան արձակուրդներից հետո, հոգևոր ճեմարանում սկսվում են 1981—82 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի դասընթացները:

Նույն օրը ճեմարանում տեղի է ունենում նաև մանկավարժական նիստ, որն զբաղվում է առաջին կիսամյակի քննության արդյունքներով և ուսումնա-դաստիարակչական այլ խնդիրներով:

*
* *

Հունվարի 13-ին, չորեքշաբթի.—Տօն անուանակոչութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Բարսեղ քհն. Ղազարյանը:

*
* *

Նույն օրը, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ, որի ընթացքում Տ. Գարեգին աբդ. Ներսիսյանը ներկայացնում է Սրիստոտելի «Բարոյագիտություն» աշխատությունը:

*
* *

Հունվարի 15-ին, ուրբաթ.—Այսօր, երեկոյան ժամը 19-ին, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում Գերագույն Հոգևոր Խորհրդի հերթական նիստը:

*
* *

Հունվարի 17-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Զատիկ աբդ. Ավետիքյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում Կանայի հարսանիքում Քրիստոսի կատարած առաջին հրաշքի հոգևոր նշանակության մասին:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հունվարի 20-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ:

Ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Իտալիայի հայոց հոգևոր հովիվ Տ. Սարգիս քհն. Սարգիսյանը խոսում է Իտալահայ գաղութի եկեղեցական, ազգային և մշակութային կյանքի մասին:

*
* *

Հունվարի 24-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Հայկազուն աբդ. Նաջարյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Զի լոյսն եկն յաշխարհ, և սիրեցին մարդիկ զխաւար առաւել քան զլոյս» (Հովհ. Գ 19) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հունվարի 27-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Հունվարի 31-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Հա՛յր, թո՛ղ դոցա, զի ոչ գիտեն զինչ գործեն» (Ղուկ. ԻԳ 34) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Նույն օրը, հավարտ ս. պատարագի, կատարվում է նաև մասնավոր հոգեհանգիստ՝ 1981 թվականի հուլիսի 29-ին, Ղազվինի հայոց հանգուցյալ հոգևոր հովիվ Տ. Հարություն ավագ քահանա Տեր-Մեսրոպյանի հիշատակին:

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Մի պահ ձեռնադրությունից

1981 թվականի դեկտեմբերի 6-ը հոգևոր բերկրանքի օր էր Բուլղարիայի Ռուսե քաղաքի հավատացյալների համար: Այդ օրը Ռումինիայի և Բուլղարիայի հայոց միացյալ թեմերի առաջնորդ Տ. Տիրայր արքեպ. Մարտիկյանը Ռուսե քաղաքի հայոց Ս.

Աստվածածին եկեղեցում ս. պատարագի ժամանակ կատարում է քահանայական ձեռնադրություն և օծում: Քահանա է ձեռնադրվում նույն եկեղեցու երկարամյա սպասավոր Հարություն Կարապետ կիսասարկավագ Խաչիկյանը՝ վերանվանվելով Տ. Հակոբ քահանա:

Ձեռնադրության և օծման արարողությունից հետո, «Հայր մեր»-ից առաջ, պատարագիչ առաջնորդ սրբազան հայրը ոգեշունչ խրատական է խոսում օրվա խորհրդի նշանակության մասին՝ նորընծայի կյանքի և ապագա հոգևոր ծառայությանը նվիրված:

Տեր Հակոբ քահանա Խաչիկյանը (ավազանի անունով՝ Հարություն Կարապետ) ծնվել է 1921 թվականին, Թուրքիայի Պուրսա քաղաքում:

1922 թվականին ծնողների հետ գաղթել է Բուլղարիա և բնակություն հաստատել Ռուսե քաղաքում, ուր և ստացել է իր կրթությունը տեղի Մեսրոպյան ազգային վարժարանում:

Փոքր տարիքից սիրով հաճախել ու մասնակցել է տեղի Ս. Աստվածածին եկեղեցում կատարվող եկեղեցական արարողություններին:

Նորընծա Տեր հայրը, քառասնօրյա պատրաստության շրջանը անցկացնելուց հետո, իր անդրանիկ ս. պատարագը մատուցում է հունվարի 10-ին և խոսում քարոզ:

Առաջնորդ Տ. Տիրայր արքեպ. Մարտիկյանի կարգադրությամբ Տ. Հակոբ քհն. Խաչիկյանը քահանայագործելու է Ռուսեի Ս. Աստվածածին եկեղեցում:





ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՈՒՇԱԿՅԱՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏՈՆԵՐ

Ինչպես ընկերային և քաղաքական կյանքի մեջ պատվադիր հիշատակությամբ կամ տարեդարձ հանդիսավորությամբ կմեծարվին նշանավոր գործիչները և կարևոր դիպվածները, նույնպես կրոնական և եկեղեցական կյանքի մեջ կպատվվին հոգևոր փրկության տեսակետով արժեք ներկայացնող դեպքերուն և դեմքերուն անունն ու հիշատակը:

Այդ ըմբռնումով տեղի ունեցած կատարողությունը ու հանդեսները կկոչվին ՏՈՆ: Բնիկ հայերեն է Տոն բառը, և կածանցի հնախոսական Tapni ձևեն, որ կնշանակեր «զոհ»:

ՏՈՆԵՐՈՒՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Տոներուն նպատակը հանդես կատարել չէ բնավ. հանդիսակատարությունը միջոց մըն է լոկ, նպատակ ունենալով ոգևորություն արթնցնել և այդ կերպով անձը ընդունակ ընել հոգևոր օգուտի և շնորհներու, աստվածային տնօրինությանց, սրբոց բարեխոսության և աղոթանվեր ինքնամփոփման միջոցավ:

Հայ Եկեղեցվո տոները և կրոնական պաշտամունքները երեք տեսակներու կվերածվին. **Տերունի տոներ, Սրբոց հիշատակներ և Պահոց օրեր:**

Առաջիններով կպանծացնենք Քրիստոսի տնօրինությունները, և Քրիստոսի և Ս. Կույսին վերաբերյալ խորհրդավոր հիշատակները:

Երկրորդներով կհիշատակենք քրիստոնեական կյանքին մեջ սրբությամբ և արդյունքներով առաքինացած անձերը:

Իսկ պահոց օրերուն մեջ՝ զղջական և հայցողական զգացումներով կաղոթենք մեր անձերուն փրկության համար:

Նախապատիվ են անշուշտ **Տերունի տոները,** քանի որ Քրիստոսի անձը և քրիստոսական տնօրինությունները և Տիրամոր անձը առանցքն ու միջոցներն են փրկագործության:

ՏԵՐՈՒՆԻ ՏՈՆԵՐՈՒ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Տերունի տոները երեք տեսակի կվերածվին հետևյալ կերպով.

Ա. **Տնօրինական տոնք Քրիստոսի.**
Բ. **Տոնք Ս. Աստվածածնի.**
Գ. **Տերունական հիշատակք:**

Ա. ՏՆՕՐԻՆԱԿԱՆ ՏՈՆՔ ՔՐԻՍՏՈՍԻ

Այս տոներն են.—Ա. **Աստվածահայտնություն:** Բ. **Պայծառակերպություն:** Գ. **Հարություն:**

Քրիստոնեության նախկին դարերուն, Տերունի տոները միայն երկու հատ էին կամ երկու խումբ կը բաղկանային. մին՝ հիշատակությունն էր Քրիստոսի երկրավոր կյանքի առաջին դեպքերուն, իսկ մյուսը՝ Անոր փրկական գործունեության վերջին դեպքերուն: Առաջին խումբը կսկսեր հունվար 5ին և կվերջանար հունվար 13ին. իսկ բուն տոնի օրն էր հունվար 6ը, ինչ օրվան ալ հանդիպեր: Այս տոնը կկոչվեր **Աստվածահայտնություն**, կամ պարզապես **Հայտնություն**: Երկրորդ խումբը կկոչվեր **Հարություն**, և կսկսեր Ծաղկազարդեն ու կտևեր մինչև Հոգեգալուստ:

ԱՍՏՎԱԾԱՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ

Աստվածահայտնության տոնը նախապես իր մեջ կբովանդակեր կարգ մը տնօրինական հիշատակներ, ըստ պատմության Ավետարանի. նախ՝ Ավետումը, որ Գաբրիելի միջոցավ եղավ Ս. Կույսին. հետո բուն Ծընընդյան եղելության հիշատակը, հարակցությամբ հրեշտակաց երկնային փառաբանության, հովիվներու երկրպագության, մոգերու գալստյան, թլփատության և անվանակոչության, Քառասնօրյա ի տաճար ընծայման, Եգիպտոս փախուստին և վերադարձի, ի Հորդանան մկրտության, անապատի մեջ փորձության և Հովհաննես Մկրտիչ վկայվելու իրողությանց հիշատակության: Տոներու այս հոլովին, կամ, թերևս ավելի հատկաբանորեն՝ տոնախմբության հանդիսավորությունը տեղի կունենար ինն օրյա շրջանի մը մեջ, հունվար 5են մինչև 13: Անոնց մեջ ակներևորեն ամենեն նշանավորներն էին Ծնունդը և Մկրտությունը, մանավանդ վերջինը, և երկուքը միասնաբար կկոչվեին նաև Աստվածահայտնություն, և անոնց բուն տոնակատարության օրն էր հատկաբար հունվար 6ը, ի՛նչ օր որ ալ լիներ ան: Որոշ է սակայն թե ավելի կանուխ ժամանակներու մեջ, այսինքն մինչև Բ դարու կեսերը, Մը-կրտությունն է որ Աստվածահայտնությունն անվան ներքև գերակշիռ կնանչվեր քան Ծնունդն իսկ, Արևելքի և Արևմուտքի մեջ միանգամայն: Այդ թվականին է որ Արևմուտքի մեջ հարկ զգացվեցավ Ծնունդի տոնը՝ բաժնելով Աստվածահայտնությենեն՝ կատարել դեկտեմբեր 25ին, այդ օրերուն կատարված հեթանոսական մեծ տոնեն հեռու պահելու համար քրիստոնյաները: Այս սովորությունը ընդունելի եղավ հետզհետե Արևելքի մեջ ևս, մանավանդ որ Երուսաղեմի մեջ մեծ դժվարություն կպատճառեր միևնույն օրվան մեջ Ծնունդը Բեթղեհեմ և Մկրտությունը Հորդանան տոնելու պարտականությունը: Մինչև Դ դարու վերջերը, այսպես, բոլոր եկեղեցիները տակավ առ տակավ հարեցան Ծնունդը դեկտեմբեր 25ին տոնելու սովորության, բացի մեր Եկեղեցիեն, որ չուզեց բաժնվիլ հնագույն կանոնեն: —Աստվածահայտնության մյուս բաղկացուցիչ տոները ևս չպահեցին իրենց նախկին դիրքը. հետ ժամանակաց, տոմարական նկատումներով՝ Ավետումը փոխադրվեցավ ապրիլ 7ին, իսկ երբ Ս. Կույսին տոները մասնավոր բարեպաշտության և ըստ այդմ հատուկ կարգադրության առարկա եղան, Քառասնօրյայի տաճար ընծայումը ևս փոխադրվեցավ փետրվարի 14ին: Թլփատությունը, Անվանակոչությունը և Փորձությունը կատարվեցան Ութօրեքին, այսինքն հունվար 13ին. իսկ մոգերու գալստյան, ինչպես և Եգիպտոս փախուստի և դարձի հիշատակությունը հյուսված մնաց միջանկյալ օրերուն հետ:

(«Սուրբ և տոնք», Երուսաղեմ, 1939, էջ 281—288)





ԱՍՏՎԱԾԱՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ՃԻՇՏ ՕՐԸ ԸՍՏ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

Հայաստանյայց Ս. Եկեղեցին, ինչպես հայտնի է, Քրիստոսի Ս. Ծննդյան և Մկրտության հիշատակները միացնելով տոնում է իբրև մի Աստվածահայտնության տոն հունվարի 6-ին: Մինչդեռ բոլոր մյուս Եկեղեցիները այդ երկու տոները իրարից բաժանում են և առաջինը կատարում են դեկտեմբերի 25-ին: Արարատի ներկա համարին իբրև հավելված հրատարակում ենք մի քաղվածք այն վկայությունների, որ մեր հայրերը բանակովի մեջ գործ էին դնում՝ իրենց Եկեղեցվո հնավանդ սովորությունը օտարների դեմ պաշտպանելիս: Քննադատական ստույգ պատմությունը հաստատում է, որ արդարև իրավունքը նոցա կողմն էր և որ մենք հունվարի 6-ին Հայտնության տոն կատարելով՝ հետևող ենք հանդիսանում մինչև Դ դար ընդհանուր Եկեղեցվո մեջ ընդունված մի ավանդության:

Զարմանալին այն է, որ Կղեմես Աղեքսանդրացու վկայության նայելով, առաջին անգամ Քրիստոսի մկրտության տոնը կատարել են Բ դարում Բազիլիդյան աղանդավորները: Համենայն դեպս այդ դարու վերջերից սկսած հայտնի է, որ արևելյան Եկեղեցիները տոնում էին հունվարի 6-ին Հայտնության տոնը, գլխավորապես ի հիշատակ Փրկչի իր մկրտությամբ իբրև Մեսիա հայտնվելուն, բայց ո՛չ առանց ի նկատ առնելու նաև Նորա առաջին հայտնությունը Կուսական ծննդյամբ: Սակայն այդ երկրորդ նշանակությունը հետզհետե այնպես գերակշռող դարձավ, որ Դ դարում եկեղեցական հայրերը, ինչպես օրինակ երեք մեծ Կապադովկացիք (Բարսեղ Կեսարացին, Գրիգոր Աստվածաբան և Գրիգոր Նյուսացին) և Ս. Հովհան Ոսկեբերան հայտնություն ասելով ավելի Քրիստոսի Ս. Ծնունդն են հասկանում. ուստի և Ս. Բարսեղ, ինչպես հիշյալ քաղվածքի մեջ բերված վկայությունից երևում է, ավելի հարմար է տեսնում հունվարի 6-ի տոնը Աստվածահայտնության տոն անվանել, որովհետև այդ օրը Աստված հայտնվում է ի մարմնի, հայտնվում է հատկապես մոգերին լուսավոր աստղի միջոցով:

Արևմտյան Եկեղեցիների նկատմամբ հիշատակություն չկա, որ Դ դարից առաջ նոքա Հայտնության տոնը կատարած լինեն. բայց այդ դարում արդեն ամեն տեղ կատարում էին: Առաջին անգամ Հռոմի Լիբերիոս եպիսկոպոսը եղավ, որ 352 թվին աթոռի վրա բազմելով՝ սկսեց տոնել հունվարի 6-ը, հավանականաբար սկզբում իբրև Հայտնության տոն՝ Ծնունդ և Մկրտություն միասին, բայց 354 թվին, ժամանակագիրների միաձայն վկայության համաձայն, 2 տոները բաժանվեցան և դեկտ. 25-ը մնաց այնուհետև իբրև հիշատակ Քրիստոսի Ս. Ծննդյան: Եվ որովհետև Հռոմն այդ ժամանակ Նիկիական դավանության ամենաջերմ պաշտպանն էր, որին ապավինել էր ի թիվս այլոց Ս. Աթանաս՝ Հռոմի Եկեղեցվո այս սովորությունը մուտ գործեց նաև արևելյան Եկեղեցիների մեջ այն ժամանակ, երբ Նիկիո դավանությունը հաղթող հանդիսացավ և նրա գլխավոր ջատագովներից մեկը՝ Գրիգոր Աստվածաբանը, տոնեց դեկտ. 25-ը Կ. Պոլսում 379 թվին:

Թե ինչ է եղել այս վերջին տոնի ծագման իսկական պատճառը՝ այդ մասին այլ-

ևս գրեթե կասկած լինել չի կարող: Հռոմում Կոստանդին Մեծի և նրա որդիների օրով դեռ սոնում էին հեթանոսական **սատուրնալեան** տոները դեկտ. 17—24-ին, երբ հարուստ և աղքատի մեջ եղած խնդությունը վերանում էր և ընդհանուր ուրախությամբ կատարվում էր Ոսկեդարի հիշատակը: Իսկ վերջին օրը երեխաներին կավե, մոմե, խմորե պատկերներ և պաճուճապատանքներ էին բաշխում: Դեկտեմբ. 25-ը արեգակի օրն էր, որ **Բրումալիա** էր կոչվում և որի հետ իր նշանակությամբ կապված էր հռոմեական նոր տարվա տոնը: Հայտնի է, թե ինչպես Եկեղեցվո առաջնորդները աշխատում էին ժողովրդի համար սիրելի և նվիրական դարձած այսպիսի տոները քրիստոնեական գաղափարներով սրբագործել և պահպանել, հեթանոս մարդկությունն այսպես աննկատելի կերպով նոր կրոնին ընտելացնելով: Իսկ ի՞նչ կարող էր լինել ավելի խորհրդավոր. քան աշխարհի Փրկչի ծնունդը, փրկության Արեգակի ծագումը՝ կապել այն օրերի հետ, երբ արևադարձը տեղի է ունենում և տարին նոր շրջանառություն է սկսում: Արդեն Եփրեմ Ասորին մի առանձին խորհուրդ էր նկատում այդ հանգամանքի մեջ, որ Քրիստոսը արևադարձից 13 օր հետո է ծնվել: Հասկանալի է ուրեմն, թե ինչու Լիբերիոսի նորամուծությունը այնպես շուտով ընդհանուր ընդունելություն գտավ, մանավանդ եթե ի նկատի ունենանք, որ այդ տոնը նպաստում էր առանձին շուքով հանդես բերելու ժամանակակից դավանաբանական վեճերի գլխավոր խնդիրը՝ մարդեղության ս. խորհուրդը: Բայց մեր Եկեղեցին նախնական սովորությանը հետևելով ոչ միայն իր հարազատ և ավանդապահ լինելն է ցույց տալիս, այլ շարունակում է պահպանել այն խորհրդավոր կապը, որ կա Քրիստոսի Ս. Ծննդյան և Մկրտության՝ իբրև մեր Փրկչի կրկնակի հայտնության մեջ, և շատ ավելի վսեմ է, քան հեթանոսական գաղափարներից վերցված որևէ խորհուրդ:

ՎԿԱՅՈՒԹԻՒՆՔ ՎԱՍՆ ԾՆՆԴԵԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ՄԿՐՏՈՒԹԵԱՆՆ ՏԱՒՆԵԼ Ի ՄԻՈՒՄ ԱՒՈՒՐ Ի ՅՈՒՆՈՒԱՐԻ ՎԵՑՆ

Ի Կղեմայ յառաքելասահման կանոնացն:
Կարգեցին առաքելքն Տեառն զօր ծնընդեանն Տեառն ի վեցն յունվարի:

Մակարիա Երուսաղեմայ Հայրապետին:
Մկրտութեանն խորհրդոյ յերիս տօնս առաւել փափագեցին հարքն մեր՝ ի զատիկն, ի պենտակոստն, ի ծնընդեանն և ի մկրտութեանն, զոր ի միում աւուր տաւնեմք:

Յովհաննու Երուսաղեմայ Հայրապետին:
Կանոնք և սահմանք եկեղեցւոյ՝ զաւուրս **ը.** (8) պահեսցեն ծերք և տղայք, ընդ նմին զշաբաթ և զկիրակէ, և յորում աւուր դիպեսցի կատարեսցին զօր ծննդեանն և մկրտութեանն Տեառն. վասն զի աստուածայինք են և փրկագործք:

Նեքտարեա Հռոմայ Հայրապետին:
Սահմանք ուղղափառութեան եկեղեցւոյ յառաքելոցն հաստատեալ. **խ.** (40) օր պահել կրօնաւորաց և ապաշխարողաց. և **ը,** (8) օր համօրէն ժողովրդն, ընդ նմին զշաբաթ և զմիաշաբաթ և զտօն աստուածայայտնութեանն՝ զծննդեանն ասեմ և զմկրտութեանն, վասն զի աստուածայինք են և փրկագործ. յորում աւուր դիպեսցի կատարեսցեն:

Գրիգորի Աստուածաբանի:
Կարգեսցէ եպիսկոպոսն իւրոյ եկեղեցւոյն ի **գ.** (6) յունուարի զօր ծննդեանն Տեառն և մկրտութեանն. և **ժդ.** (14) փետրուարի՝ զեկեալն ի տաճարն: **Նորին.** Երիս ծնունդս գիտէ մեզ բանս. զմին՝ փրկչմամբն. Հոգի սուրբ եկեսցէ ի քեզ, և ի քթթել ական բանն խառնեաց իւր մարմին. և զմիւսն մարմնանալովն և մկրտութեամբն: Տեսանե՞ս զծնունդն և զմկրտութիւն անբաժանելի ասէ և զմիւսն յարութեամբն. և վերաւգրէ զճառն ի յայտնութիւն Տեառն: Եւ սկսանի թէ Քրիստոս ծնեալ լինի. և թէ երևեցաւ Աստուած մարդ ծնանեամբ. և ի նոյն աւուր ասէ, մկրտութիւն է աւուրս և պարտ է վաստակել: Որ ցուցանէ թէ ծընունդն երեկոյնն էր և մկրտութիւնն առաւաւտուն: Եւ այս արար հարկ առաջին հարցն. առնել զծնունդն երեկոյնն, որպէս զի երևեսցի պատիւ մկրտութեանն առ առաւաւտուն:

Սրբոյն Բարսղի:
Անուն դիցուք տօնիս աստուածայայտնութիւն:

Հիպոլիտայ եպիսկոպոսի:
Ինանմսեայ Տէրն ծնաւ և երեսնամեայ մկրտեցաւ՝ ի նմին աւուր ըստ Ղուկայ. Եւ Յիսուս էր ամաց իբրև երեսնից,' և յետ սակաւուց զմկրտութենէն ճառէ: Քանզի անանման էր յայլում աւուր ծնանել և յայլում աւուր մկրտիլ, և թերահաւատութիւն ի մէջ արկանել՝ զի զայլ ծնեալ և զայլ մկրտեալ ասէիր. զի երկու բնութիւնս և երկուս որդիս

խոստովանեցան, և այնու յերկուս տօնս բաժանեցին որք անհնազանդք էին: **Իսկ եկեղեցի հաւատացելոց ի միում աւուր տօնէ զտօնս ծննդեանն եւ մկրտութեանն:**

Սեբերիանոսի եպիսկոպոսի ի Ղուկասու Աւետարանին մեկնութենէն:

Նախնիքն երկուս օրս ի շաբաթն պահեցին, և զյիշատակ սրբոցն յաւուրս յայտնսիկ յառաջիկայսն անցուցին. բայց միայն զաստուածայնոյն և զաստուածորդւոյն տօն ուր և հանդիպի կատարել, զի Աստուած է և զամենայն լուծանէ՝ զծննդեանն ասեմ և զմկրտութեանն ի միում աւուր տաւնել:

Ի թղթին Մելիտոնի եպիսկոպոսի

Տօնեմք ըստ աւետեաց հրեշտակին **թ.** (9) ամսեայ՝ զծնունդն. **ը.** (8) օրեայ՝ ըզթըլփատութիւնն. երեսնամեայ՝ զմկրտութիւնն: Եւ պատուել այսպէս զծնունդն և զմկրտութիւնն ի միում աւուր տաւնել:

Կիպրիանոսի եպիսկոպոսի:

Քրիստոս ըստ մարմնոյ **լ.** (30) ամ լցեալ յայսմ աւուր մկրտի յորում և ծնաւ ի սրբոյ կուսէն Մարիամայ:

Մարութային Նըփրտայ եպիսկոպոսի:

Եւ զայս ասեմ ո՛չ թէ այլև այլ են տօն ծննդեանն և մկրտութեանն Տեառն, այլ ի միում աւուր տօնել պարտ է. բայց գործս այլ են, որ այսօր պատահեցան:

Ի հարցաքննութեանց Ասորոց վարդապետաց:

Դարձեալ ասէ Սահակ առ Աֆրիմ վարդապետն իւր. Եւ արդ՝ որպէս հրամայեցեր բազում անգամ, թէ ի **զ.** (6) յունուարի ի վերջին քանունն ծնաւ Որդին Աստուծոյ ի կուսէն. իսկ ընդէ՞ր տօնեն եկեղեցիք ի դեկտեմբերի ի **իե.** (25) որ է առաջին քանուն:

Վարդապետն ասէ: Աշխարհն հոովմայեցւոց ի կռապաշտութեանն արեգականն երկիրպագանէին և ի **իե.** (25) դեկտեմբերի, որ է առաջին քանունն, յորժամ սկիզբն առնէր տիւն ի գիշերէն՝ մեծաւ ուրախութեամբ տօնէին արեգականն և հարսանիք արեգականն ասէին զօրն զայն: Իսկ յորժամ ծնաւ Որդին Աստուծոյ ի կուսէն, զնոյն տօն կատարէին նոքա թէպէտ և դարձան ի կոոցն յԱստուած. և զայն տեսեալ առաջնորդացն, և առին զտօն ծննդեան Քրիստոսի որ էր յունուարի **զ.** (6)-ն և եդին անդ, և խափանեցին զտօն արեգականն՝ զի ոչինչ էր որպէս նախ ասացաք: Իսկ ծնունդն Քրիստոսի ստոյգ յունուարի **զ.** (6)-ն է, որ է վերջին քանուն, որպէս գրեցին սուրբ առաքեալքն ի գիրս կանոնացն յիջանել Հոգւոյն: Զոր ուսեալ երջանիկն Ղուկաս գրեաց յիւրում աւետարանն և ասէ. Յիսուս էր ամաց երեսնից սկսեալ յօրն յորում մկրտեցաւ: Քանզի մեծ խորհուրդ ունի զծնունդն և զմկրտութիւնն ի միում աւուր տօնել. զի որպէս երկու բնութիւնն Աստուծոյն և մարդոյն միացան անշփոթ, նոյնպէս և **բ.** (2) տօնինք ի մի հաստատեցան ի լինիլ հաւատ եկեղեցւոյն սրբոյն:

Ի Կարնոյ կանոնացն, որ եղաւ հրամանաւ Յուստիանոսի:

Վասն մեծի յայտնութեանն, զոր կարգեցին առաքեալքն ի **զ.** (6)-ն յունուարի՝ ուրախութեամբ տօնել ի փառս Աստուծոյ: Եւ որ այլ ազգ խորհի և **իե.** (25) դեկտեմբերի ծնունդ առնէ հետևելով Արտեմոնի, յԱստուծոյ և ի սուրբ ժողովոյս նզովեալ եղիցի. ամէն ամէ՛ն:

(«Արարատ», 1896, էջ 3 և 49)

ԿԱՐԱՊԵՏ Վ.(ԱՐԴԱՊԵՏ)
(ՏԵՐ-ՄԿՐՏՉՅԱՆ)





ԵԶՆԻԿ ՔԱՀԱՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱՎԵՏԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայկական գրերի գյուտից և Աստվածաշընչի հայերեն թարգմանությունից անմիջապես հետո հայ թարգմանիչները, որոնք երկար տարիներ ուղարկվել էին Եդեսիա, Կ. Պոլիս, Աթենք, Ալեքսանդրիա՝ ուսանելու հունարեն և ասորերեն լեզուները, իրենց հետ Հայաստան բերելով Եկեղեցու հայրերի ու վարդապետների աշխատությունները՝ թարգմանելու նպատակով, հայերենի են վերածում բազմաթիվ մեկնողական գործեր Ս. Գրքի վերաբերյալ, այդ թվում՝ Հովհան Ոսկեբերանի «Մատթեոսի մեկնությունը», Եփրեմ Ասորու «Համաբարբառի մեկնությունը», Գրիգոր Նյուսացու «Ինն Երանությանց մեկնությունը» և «Հայր Մերի մեկնությունը», Եպիփան Կիպրացու շուրջ 50 ճառերը, որոնք զանազան ավետարանական հատվածների մեկնություններն են, Կյուրեղ Ալեքսանդրացու «Ղուկասի մեկնությունը», Հիպպոլիտոս Բոստրացու «Հովհաննու մեկնությունը» և այլն:[1]

Թարգմանական գրականությունը հայ մատենագրության մեջ լայն ծավալ է ստանում նաև հետագա դարերում: Ավետարանների մեկնություններից թարգմանվում են նաև Հովհան Ոսկեբերանի «Հովհաննու» (ԺԲ դ.) և «Ղուկասու» մեկնությունները, Նանա Ասորու (Թ դ.) և Նիկողայոս Լյուրացու «Հովհաննու մեկնությունները» և այլն[2]:

Ավետարանների մեկնությունների թարգմանություններին զուգահեռ ստեղծվում են նաև ինքնուրույն գործեր:

Հայաստանի մի շարք վանքեր դառնում են Ս. Գրքի մեկնության հռչակավոր դպրոցներ, որոնցից ամենանշանավորը Սյունյաց Վարդապետարանն էր, որը երկար դարեր (Զ—ԺԵ դդ.) հայ իրականության մեջ կոչվում էր «երկրորդ Աթենք»: Հիշվում են այս դպրոցի նշանավոր ներկայացուցիչներ Պետրոս եպս. Սյունեցին (+557), Մաթուսաղան (634—641), Մովսես եպս. Սյունեցին (+725), Ստեփանոս եպս. Սյունեցին (+735) և այլն:

Դժբախտաբար, սակայն, Սյունյաց Վարդապետարանի շուրջ 600 տարվա գրական աշխատանքը ոչնչացավ մեկ օրում, 1170 թ., երբ սելջուկների կողմից գրավված Բաղաբերդ ամրոցում այրվեցին պաշտպանության համար այնտեղ հավաքված ողջ Սյունիքի ձեռագրերը, ավելի քան 10.000 օրինակ: Ավետարանների մեկնության միակ ամբողջական երկը, որ փրկվել է Սյունյաց դպրոցից, Ստեփանոս Սյունեցու «Մեկնութիւն չորից Աւետարանացն» գործն է, որի մասին պիտի խոսենք քիչ հետո:

Այս գործից բացի, մեզ հասած Ավետա-

[1] Տես Հ. Գարեգին Զարբհանալեան, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, (Դ—ԺԳ դդ.), Վենետիկ, 1889;

[2] Անդ:

դանների միջնադարյան ամբողջական մեկնությունները գրվել են ԺԱ—ԺԵ դարերում:

Իսկ Ե—Ժ դարերից մեզ են հասել միայն հատվածներ ու ճառատիպ մեկնություններ Ավետարանների այս կամ այն հատվածների մասին: Ստորև նշում ենք դրանցից մի քանիսը.

1. Մամբրե Վերծանող (Ե դար)
ա. Ճառ ի յարութիւնն Ղազարու[3]:
բ. Ճառ ի գալուստ Տեառն յԵրուսաղէմ[3]:
գ. Յաղագս եկաւորութեան Փրկչին յԵրուսաղէմ[3]:
դ. Ի Ծնունդն Փրկչին[4]:
ե. Մեկնողական հատվածներ Ղուկասի և Հովհաննեսի Ավետարանների մեկնություններից՝ Սարգիս Կունդի համառոտ խմբագիր մեկնություններում:

2. Եղիշե (Ե դար)
ա. Յայտնութիւն Տեառն ի Թաբոր լերին[5]:
բ. Ի Մկրտութիւնն, ի Մատնութիւնն, ի Հարչարանս, ի Խաչելութիւնն, ի Թաղումն և ի Յարութիւնն Քրիստոսի[5]:
գ. Մեկնութիւն Հայր Մերի[5]:

3. Մովսես Քերթող (Զ դար)
Մեկնողական հատվածներ Ղուկասի և Հովհաննեսի Ավետարանների մեկնություններից՝ Սարգիս Կունդի խմբագիր մեկնություններում:

4. Պետրոս եպս. Սյունյաց (557)
ա. Գովեստ ի Ս. Աստուածածինն[6]:
բ. Ճառ ի Ծնունդն Քրիստոսի[6]:
գ. Մեկնութիւն չորից Աւետարանացն (կորած):

5. Անանիա Շիրակացի (Է դար)
ա. Ճառ ի յայտնութիւն Տեառն[7]:
բ. Ճառ ի Զատիկն Տեառն[7]:

6. Գրիգոր եպս. Արշարունի (Է—Ը դդ.)
Մեկնութիւն Ընթերցուածոց[8]:

7. Զաքարիա կթղ. Զագեցի (Թ դար)
Մեկնողական ճառեր Ավետարանների զանազան հատվածների վերաբերյալ[9]:

8. Ավետարանների մեկնության առատ նյութ է պարունակում «Տօնապատճառ»[10] ժողովածուն, որը Հայ Եկեղեցու տոների բացատրությունն է և յուրաքանչյուր տոնին ընթերցվող Ավետարանների մեկնությունը:

Մեզ են հասել «Տօնապատճառի» երեք խմբագրություններ[11], որոնցից առաջինը կազմել է Սամվել Կամրջաձորեցին (Ժ դար) և այլն:

Անշուշտ մենք այստեղ նպատակ չունենք ներկայացնելու բոլոր նմանատիպ գործերը: Այս փոքրիկ աշխատասիրությամբ ցանկանում ենք ներկայացնել միայն Ավետարանների մեզ հասած հայ միջնադարյան ամբողջական մեկնությունները՝ մատենագիտական ձևով:

Ա.—Հորս Ավետարանների մեկնություն

1. ՍՏԵՓԱՆՈՍ ՍՅՈՒՆԵՑՈՒ (+735)

Ստեփանոսի Հայոց Իմաստասիրի և Սիւնեաց եպիսկոպոսի կարճառատ մեկնութիւն չորից աւետարանչացն Քրիստոսի Աստուծոյ

Սկ. «Գիրք Ծնընդեան Յիսուսի Քրիստոսի, որդւոյ Դաւթի»

«Գիրք լինելութեան» ասեն հերձուածողք. այնոքիկ, որ ասեն, եթէ ոչ էր մըշտընջենաւորակից Քրիստոս՝ Որդի Աստուծոյ, Հաւր գոյացութեամբ, այլ եղեալ ասեն և սկիզբն առ ի Մարիամա: Իսկ մեք ոչ այդպես, այլ «գիրք լինելութեան» ասեմք. զլինելութեանն, որ յաղագս մերոյ փրկութեանն եղեւ մարդ և նմանեցաւ մեզ ամենեիմբ, բայց ի մեղաց[12]:

Ինչպես նշեցինք արդեն, Ստեփանոս Սյունեցու այս գործը Սյունյաց մեկնողա-

---

[3] Կորիւն Վարդապետի, Մամբրէի Վերծանողի եւ Դաւթի Անյաղթի մատենագրութիւնք, Վենետիկ, 1833, էջ 35—93:

[4] Ձեռագիր Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի (այսուհետև՝ Երևանի), № 1798:

[5] Սրբոյ Հօրն մերոյ Եղիշէի մատենագրութիւնք, Վենետիկ, 1838, էջ 220—284:

[6] **Գ. Տէր-Մկրտչեան**, Պետրոս եպս. Սիւնեաց, Վաղարշապատ, 1902:

[7] Անանիա Շիրակացւոյ Մնացորդք Բանից, հրտ. Ք. Պ. Ս. Պետերբուրգ, 1877, էջ 4—26:

[8] **Հ. Ք. Զրաքեան**, Մեկնութիւն ընթերցուածոց Գրիգորիսի եպս. Արշարունւոյ, Վենետիկ, 1964:

[9] «Արարատ», 1888, էջ 461—475, «Բազմավէպ», 1910, էջ 550—556, Ձեռ. Երևանի 524, 724, 942, 993, 996, 1007, 1147 և այլն:

[10] Երևանի ձեռ. 2021, 2039, 4139, 1007 և այլն:

[11] **Փայլակ Անթաբյան**, «Տօնապատճառ» ժողովածուն, «Բանբեր Մատենադարանի», 1971, № 10, էջ 103—127:

[12] Երևանի Մատենադարանի ձեռագիր հմր. 5551, էջ 224ա:

կան դպրոցի հին շրջանից մեզ հասած Քրիստոսի Ավետարանի մեկնության միակ ամբողջական երկն է (Ը դար):

Երկար ժամանակ այս երկը կորած էր համարվում: 1917 թ. Գարեգին եպս. Հովսեփյանին հաջողվում է գտնել այն 1155 թ. գրված մի ձեռագրում[13]: 1951—52 թթ. նույն Գարեգին Հովսեփյանը, արդեն իբրև Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո, հրատարակության է հանձնում այս մեկնությունը, որի շարվածքը բռնում է 140 մեծադիր էջ[14]: Սակայն, դժբախտաբար, հրատարակչի մահվան պատճառով տպագրությունը կիսատ է մնում, և գործը մինչև այժմ չի հրապարակվում:

Ստեփանոս Սյունեցին իր այս մեկնությունը գրել է Հայոց Դավիթ Ա. (728—741 թթ.) կաթողիկոսի պատվերով:

Գործը ունի բնագրային պարզաբանական բնույթ. Սյունեցին մեկնել է Ավետարանների «դժուարապատում» բառերը և խոսքերը, բնագրային ճշտումներով: Այս եղանակով նախ մեկնել է ըստ Մատթեոսի Ավետարանը և ապա մյուս երեք Ավետարաններից այն հատվածները, որոնց համապատասխան հատվածները չկան ըստ Մատթեոսի Ավետարանում:

Ըստ Մատթեոսի Ավետարանի մեկնությունը մեզ է հասել միայն վերոհիշյալ՝ Երևանի Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի № 5551 ձեռագրով, էջ 224ա—291բ: Մեզ հաջողվեց գտնել նաև այս մեկնության մի փոքրիկ համառոտագրություն, Երևանի Մատենադարանի № 1138 ձեռագրում (գրված՝ 1347 թ.), էջ 389բ—390ա:

Ըստ Մարկոսի Ավետարանից մեկնված է միայն ԺԴ 53 համարը: Այդ հատվածը նույնպես մեզ է հասել միայն Երևանի № 5551 ձեռագրով, էջ 292ա:

Ըստ Ղուկասի Ավետարանի մեկնությունը, բացի Երևանի № 5551 ձեռագրից, էջ 292բ—307ա, մեզ է հասել նաև Վենետիկի № 740 ձեռագրով[14], էջ 2բ—178բ (գրված՝ 1835 թ.):

Ըստ Հովհաննու Ավետարանի մեկնությունը, բացի Երևանի № 5551 ձեռագրից, էջ 307ա—322ա, մեզ է հասել նաև Երևանի №№ 1349 (ԺԷ դ.), 1350 (ԺԶ դ.), 2520 (1306 թ.), 9372 (ԺԶ դ.) և Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի Ձեռագրատան № 1046, էջ 5—25, ձեռագրերով[14]:

Ստեփանոս Սյունեցու ըստ Ղուկասի և ըստ Հովհաննու Ավետարանների մեկնությունները օգտագործվել են Սարգիս Կունդի խմբագրած ըստ Ղուկասի և ըստ Հովհաննու Ավետարանների խմբագիր մեկնություններում, իբրև կարևոր աղբյուրներ:

Բ.—**Ըստ Մատթեոսի Ավետարանի մեկնություններ**

2.—ԱՆԱՆԻԱ ՍԱՆԱՀՆԵՑՈՒ (+1070 թ.)

[Մեկնութիւն Ա]ւետարանին Մատթէոսի Ա]նանիայի Հայոց վարդապետի ի խնդրոյ հօր [Դիոսկոր]ոսի, զոր յետոյ իմ աղաչեալ զլուսաւորիչ վար[դապե]տն Սարկաւագ ըստ մականութեան և երկրորդ լուսաւ[որիչ] հայ ազգին և յաղագս սիրոյն զոր էր առ իմ անպիտանութիւն [բ]ազում ջանիւ և աշխատութիւն կրեաց յաղագս այսր տառիս.

Սկ. Ընկալայ զհրաման տեառն իմոյ հօր Դիոսկորոսի և հոգեւոր վարդապետի Սանահնի սուրբ ուխտի առաջնորդի, զոր յոյժ ըղձիւ և սիրական բաղձանօք հարցեալ պահանջեցեր ի մէնջ, վասն բացայայտութեան տէրունական բանից կենսաբեր աւետարանին...[15]:

Անանիա Սանահնեցին այս երկը գրել է Սանահին վանքում, Սանահնի վանահայր Դիոսկորոսի (1037—1063 թթ.) խնդրանքով:

Դժբախտաբար փրկվել է միայն երկի սկզբնական մասը՝ Ա—Ժ-ի մեկնությունը, միայն մեկ՝ Երևանի Մատենադարանի № 2686 ձեռագրով, գրված ԺԲ դարում, էջ 1ա—109բ:

Նույն Մատենադարանի № 2859 ձեռագիրը արտագրություն է վերոհիշյալից՝ կատարված ԺԹ դարում:

3.—Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ (+1173թ.)

Ս. Ներսես Շնորհալին սկսել է մեկնել Մատթեոսի Ավետարանը իր եղբոր՝ Գրիգոր Գ. Պահլավունի կաթողիկոսի (1113—1166) խնդրանքով, հավանաբար, Հռոմկլայում, սակայն, դժբախտաբար, չի կարողացել ամբողջացնել այն: Մեկնել է մինչև Ե 17 համարը:

Սկզբում ունի մի արժեքավոր ներածություն, ուր խոսում է 10 խորհրդների և չորս ավետարանիչների մասին:

Երկը տպվել է 1825 թ. Կ. Պոլսում[16], մեկ ձեռագրի վրայից (էջ 5—106):

---

[13] **Նույնը**, էջ 223ա—322բ:

[14] **Մեսրոպ վրդ. Գ. Գրիգորեան**, Ստեփանոս Սիւնեցի, Պէյրութ, 1958, էջ 48—68:

[15] Երևանի ձեռագիր հմր. 2686, էջ 2ա:

[16] Մեկնութիւն Սուրբ Աւետարանին որ ըստ Մատթէոսի, արարեալ ի սրբոյն Ներսիսէ Շնորհալւոյ մինչ ի համարն 17 հինգերորդ գլխոյն և անտի

Այսօր գոյություն ունեն այս երկը պարունակող ավելի քան 60 ձեռագրեր, որոնցից հնագույններն են. Երևանի 1098 (1320 թ.), 1247 (ԺԳ դար), էջ 2ա—98ա, 1283 (ԺԳ դար), էջ 11ա—65ա, 1257 (ԺԴ դար), 1398 (ԺԴ դար), 2523 (ԺԴ—ԺԵ դդ.), 2610 (1363 թ.), 4139 (1267 թ.), 5933 (ԺԴ դար), Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի Մատենադարանի (այսուհետև՝ Երուսաղեմի) 332 (1278 թ.), 458 (ԺԳ դար):

4. ԱՐԻՍՏԱԿԵՍԻ ԵՎ ԵՓՐԵՄԻ (ԺԲ—ԺԳ դդ.)

Ս. Ներսես Շնորհալու աշակերտներ Արիստակեսը և վերջինիս աշակերտ Եփրեմը, ցանկանալով ամբողջացնել Շնորհալու կիսավարտ գործը, շարունակել են այն՝ խմբագիր մեկնության ձևով:

Այս շարադրանքի հիմքում ընկած է Հովհան Ոսկեբերանի մեկնությունը: Հավաքողները օգտագործել են նաև Եպիփան Կիպրացու, Եփրեմ Ասորու, Կյուրեղ Ալեքսանդրացու և Հին Եկեղեցու այլ հայրերի գրվածքները:

Ձեռագրերում այս երկը միշտ հաջորդում է Ս. Ն. Շնորհալու մեկնությանը, նրա հետ կազմելով մի ամբողջություն: Բաղկացած է չորս մասերից[17].

1. Առաջինն Ներսէսի Հայոց Կաթողիկոսի, ի խնդրոյ նորին եղբօրն Գրիգորիսի վերադիտողի հաւոց (15ա—134ա):

2. Նորին Յոհաննու (Ոսկեբերանի) ի Կապեռնաւում: Գիրք երկրորդ (134ա—224ա):

3. Նորին Յոհաննու Ոսկեբե(րանի): Գիրք երրորդ: Կեսարացւոց (224ա—294բ):

4. Տեառն Յոհաննու Ոսկեբերանի: Գիրք չորրորդ: Փարիսացւոց (294բ— 353ա):

Այս աշխատությունը մեզ է հասել շուրջ երեսուն ձեռագրերով, որոնցից հնագույները հետևյալներն են. Երևանի 1283 (ԺԳ դար, 11ա—65ա—180ա), 1257 (ԺԴ դար), 1253 (1590 թ., 15ա—134ա—353ա), 1280 (ԺԵ դար), 1245 (1613 թ.), 1282 (1604 թ.), Երուսաղեմի 332 (1278 թ.), 283 (1486 թ.), Զմմառի վանքի Մատենադարանի (այսուհետև՝ Զմմառի) 125 (հին 49, ԺԵ դար) և այլն:

5. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԾՈՐԾՈՐԵՑՈՒ (+1325 թ.)

Հովհաննես Ծործորեցին նույնպես շարունակել է Ս. Ներսես Շնորհալու կիսավարտ գործը՝ սկսելով Ե 18-ից: Սակայն ոչ թե նախորդ՝ խմբագիր մեկնության նման, այլ ինքնուրույն մեկնությամբ, Ծործորի Ս. Աստվածածնի վանքում:

Այս գործը հրատարակվել է 1825 թ. Կ. Պոլսում[16], մեկ ձեռագրի վրայից, Ս. Ներսես Շնորհալու մեկնության հետ միասին (էջ 107—625):

Այս գործը նույնպես ձեռագրերում միշտ հաջորդում է Շնորհալու մեկնությանը:

Այս գործի մեզ հասած ձեռագրերը հետևյալներն են. Երևանի 2220 (1789 թ.), 2271 (1724 թ.), 2687 (1476 թ.), 4032 (1659 թ.), 7284 (ԺԸ դար), 7854 (ԺԸ դար), 8198 (ԺԴ դար), Երուսաղեմի 275 (1779 թ.), 416 (—), 581 (1674 թ.), 719 (—), 967 (ԺԸ դար), Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի (այսուհետև՝ Նոր Ջուղայի) 188 (1402 թ.), 189 (1667 թ.):

6. Ս. ՀՈՎՀԱՆ ՈՐՈՏՆԵՑՈՒ (+1387)

Յոհաննու Որոտնեցւոյ տիեզերալոյս բարբուռնապետի արարեալ բան յԱւետարանէն Մաթէոսէ.

Սկ. Մաթէոս մարդ անուանեցաւ...[18]:

Ս. Հովհան Որոտնեցու Մատթեոսի Ավետարանի մեկնությունը մեզ է հասել միայն մեկ՝ Երուսաղեմի № 1282 ձեռագրով (էջ 109—194):

7.—Ս. ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒ (+1409 թ.)

Գրիգորի՝ աշակերտի եռամեծի եւ տիեզերալոյս վարդապետի Յովհաննու Որոտնեցւոյ, Հաւաքեալ քաղուածոյ Մեկնութիւն Սուրբ Աւետարանին Մաթէոսի, նախերգաբար բաղդատութիւն չորս գետոցն Եդեմաբուղխ չորից Աւետարանչացն հոգեբուղխ: Աւգնեա Հոգի Սուրբ Աստուած ճշմարիտ:

Սկ. Արդ չորս գետն նման չորից աւետարանչացն: Փիսոն, որ է Անգէս, կամ Ինդոս, ի Մաթէոս համեմատի ըստ հնգից յեղանակաց: Նախ՝ ըստ անուանն...[19]:

Ս. Գրիգոր Տաթևացին այս գործը գրել է շատ հավանաբար Տաթևի վանքում:

Այն բաղկացած է 6 հատորից: Յուրաքանչյուր հատորի առջև կա նյութերի ցանկ, իսկ մեկնության սկզբում կա մի արժեքավոր ներածություն, ուր խոսվում է 4 գետերի և 4 կենդանիների՝ ավետարանիչների հետ համեմատելու, Ավետարանների գրության ժամանակի և վայրի, չորս ավե-

---

աւարտեալ յերանելւոյն Յոհաննու Երզնկացւոյ որ և կոչի Ծործորեցի, Կ. Պոլիս 1825:

[17] Երևանի ձեռ. 1253, էջ 15ա—134ա—353ա:

[18] Մայր Յուցակ Ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, կազմեց Նորայր եպս. Պողարեան (այսուհետև՝ Մ.Յ.Ձ.Ս.Յ.) հտ. Դ, Երուսաղէմ, 1969, էջ 473:

[19] Երևանի Մատենադարանի ձեռագիր հմր. 1300, էջ 12ա:

տարանիշների, Ավետարանների կանոնի և ներածական այլ հարցերի մասին:

Այս մեկնությունը մեզ է հասել ավելի քան 100 ձեռագրով: Այստեղ նշում ենք միայն հնագույնները. Երևանի 1198 (1413 թ.), 1264 (1416 թ.), 1266 (ԺԵ դար), 1295 (1410 թ.), 1298 (ԺԵ դար), 1299 (ԺԵ դար), 1300 (1456 թ., էջ 7ա—316ա), 1301 (1451 թ.), 1303 (1417 թ.), 1304 (ԺԵ դար), 1305 (ԺԵ դ.), 1306 (1419 թ.), 5060 (ԺԵ դար), 6102 (ԺԵ դար), 6649 (ԺԵ դար), 9470 (ԺԵ դար), 3578 (1402 թ.), 3930 (1407 թ.), 3942 (ԺԵ դար), 4419 (1449 թ.), 5133 (1427 թ.), 5232 (1403 թ., էջ 4ա—55ա, թերի), Երուսաղեմի 1223 (1411 թ.), 1877 (1434 թ.), Զմմառի 407 (հին 417, 1415 թ.):

Գ. Ըստ Մարկոսի Ավետարանի մեկնություն

8. ԲԱՐՍԵՂ ՄԱՇԿԵՎՈՐՑՈՒ (+1345(50)

Բարսեղ Մաշկևորցու այս գործը Մարկոսի Ավետարանի միակ հայ միջնադարյան մեկնությունն է: Այն գրվել է 1325 թ. Կիլիկիայի Մաշկևոր վանքում:

Դժբախտաբար մեզ է հասել միայն երկի Բ մասը, որը Թ 11—ԺԶ-ի մեկնությունն է: Այն հրատարակել է Հ. Անդրեաս վրդ. Նարինեան Ակնեցին, երկու ձեռագրերի համեմատությամբ (ԺԶ—ԺԷ դարերի), 1826 թ. Կ. Պոլսում[20]:

Շուրջ երեսունհինգ ձեռագրեր մեզ են ավանդել այս գործը: Եվ որ կարևորն է, մեզ է հասել նաև հեղինակի ձեռագիրը (Երևանի 1314, 1325 թ.):

«Լույս» պարբերականի 1905 թ. համարում Բաբկեն ծ. վ. Կյուլեսերյանը հրատարակել է երկու մեծ հատվածներ այս մեկնությունից՝ աշխարհաբար թարգմանությամբ (էջ 1096—1100, 1117—1121):

Ավետարանի յուրաքանչյուր հատվածի մեկնությունից հետո հեղինակը գրել է մի խրատ/հորդորակ, որոնց աշխարհաբար թարգմանությունը վերջերս հրատարակվեց Անուշավան վրդ. Դանիելյանի թարգմանությամբ[21]:

Դ. Ըստ Ղուկասի Ավետարանի մեկնություններ

9. ԻԳՆԱՏԻՈՍ ՍԵՎԼԵՌՆՑՈՒ (+1160)

Իգնատիոսը իր այս գործը գրել է շուրջ 1130-ական թթ., Կիլիկիայի Սև լեռան Շափրին վանքում: Հայոց Կաթողիկոս Գրիգոր Գ Պահլավունու (1113—1166) խնդրանքով:

Պատմվում է[22], թե երբ Գրիգոր Գ Պահլավունի Կաթողիկոսը հանձնարարում է Իգնատիոսին գրել Ղուկասու Ավետարանի մեկնությունը, վերջինս դժկամում է և չի ձեռնարկում այն: Եվ մի օր տեսիլք է ունենում, թե ինչպես մի լուսավոր պալատում ուրախություն էին անում Եկեղեցու վարդապետները: Ինքն էլ է փափագում ներս մտնել, սակայն չեն թողնում՝ ասելով, թե քանի որ չաշխատեցիր Ավետարանի մեկնության համար, այստեղ չես կարող մտնել: Այդ տեսիլքից ազդված, Իգնատիոսը սկսում է գրել Ղուկասու Ավետարանի մեկնությունը Գրիգոր Գ Պահլավունու (1113—1166) խնդրանքով:

Այս երկը ունեցել է երկու տպագրություն Կ. Պոլսում 1735 թ. և 1824 թ.[23] մի ձեռագրի վրայից:

Այսօր կան այս երկը պարունակող ավելի քան վաթսուն ձեռագրեր, որոնցից հնագույններն են. Երևանի 1283 (ԺԳ), 1342 (1292 թ.), 1523 (ԺԳ դար), 3405 (1357 թ.), 3782 (ԺԲ) հատված), 3787 (ԺԴ դար), 3952 (ԺԳ դար), 5353 (ԺԳ դար), Երուսաղեմի 295 (1381 թ.), 334 (1204 թ.), 352 (1272 թ.), 453 (1371 թ.) և Զմմառի 507 (1371 թ.):

Երևանի № 1138 ձեռագրում (էջ 252ա—265ա), գրված 1347 թ., կա այս մեկնության մի համառոտագրությունը, ուր և կան 7 համառոտ հատվածներ Եփրեմ Ասորու «Համաբարբառի մեկնությունից»:

10.—ՍԱՐԳԻՍ ԿՈՒՆԴԻ (+1184(90)

Մեկնութիւն սուրբ Աւետարանին Ղուկասու, հաւաքեալ Սրբոյն Սարգսի Հայոց վարդապետին և անյաղթ հռետորի ի սրբոց աստուածաբան վարդապետացն մերոց Եփրեմի, Ոսկեբերանի, Կիւրղի, Ստեփանոսի,

---

[20] Մեկնութիւն Սրբոյ Աւետարանին որ ըստ Մարկոսի, Արարեալ երանելւոյն Բարսղի Շնորհալի Վարդապետի Ճոն կոչեցելոյ՝ ըստ մակադրական անուանն, լուսաւոր մտօք և իմաստալի յորդորակօք, հատոր երկրորդ, Կ. Պոլիս, 1826 թ.:

[21] **Բարսեղ Մաշկեւորցի**, Յորդորակներ, աշխարհաբարի վերածեց Անուշաւան վրդ. Դանիէլեան, Անթիլիաս, 1980 թ.:

[22] **Կիրակոս Գանձակեցի**, Պատմություն Հայոց, աշխ. Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961 թ., էջ 111—112:

[23] Մեկնութիւն Սրբոյ Աւետարանին որ ըստ Ղուկասու, Արարեալ սուրբ վարդապետին Իգնատիոսի ի խնդրոյ Տեառն Գրիգորիսի Հայոց Կաթողիկոսի, Կ. Պոլիս, 1824:

Իգնատիոսի եւ այլոց վարդապետացն մերոց, զոր տեսանեմ յառաջիկայդ:

Աւգնեա Հոգի Սուրբ Աստուած ճշմարիտ:

Սկ. Լնուլ զայս իմաստ աստուածային քո ըղձից՝ պարտ համարեցայ, ո՞վ Գրիգորիոս քահանայապետական գլուխ և սիւն հաստատութեան եկեղեցւոյ...[24]:

Այս երկը պետք է նկատել Ս. Գրքի առաջին մեկնողական գործը հայ մեկնողական գրականության մեջ, որ շարադրվել է «խմբագիր» գրական ժանրով: Հեղինակը այն կազմել է 1178 թ.:

Աշխատության հիշատակարանում[25] խմբագրողը հիշատակում է իր աղբյուրները, որոնք հետևյալներն են. Եփրեմ Խուրի, Կյուրեղ Ալեքսանդրացի, Ստեփանոս Սյունեցի և Հովհան Ոսկեբերան, որպես հիմնական աղբյուրներ, և Գրիգոր Աստվածաբան, Եպիփան Կիպրացի, Ս. Գրիգոր Նարեկացի, Սարկավագ Վարդապետ, Մովսես Քերթող և Մամբրե Վերծանող և Ոսկեբերանի աշակերտ Թեոփիլոս:

ԺԵ դարում այս երկը օգտագործվել է իբրև դասագիրք Մեծոփի վանքում[26]:

Այս երկը փրկվել է միայն 3 ձեռագրերով.

Երևանի 2609 (1184 թ.), էջ 1ա—318բ:
5591 (1427 թ.), էջ 23ա—240ա:
Երուս. 149 (1821 թ.):

11. ՄԱՏԹԵՈՍ ՋՈՒՂԱՅԵՑՈՒ (+1415(20)

Նուաստ և յետին աշակերտ Մաթէոս եռամեծաց Յովհաննու և Գրիգորի աշխատասիրեաց հաւաքումն Բանին Աւետարանին Ղուկասու և քարոզ յոլովք ի վայելումն մանկանց Հայաստանեայց:

Սկ. Ամենայն ոք որ ծոյլ է յաստուածային ուսումն ընդունել զխրատս հոգեշահս, յորժամ սկսանի ընթեռնուլ զգիրս սուրբս, չորս կերպիւ այպանէ, նախ թէ երկար բանիւ է գրեալն...[27]

Մ. Ջուղայեցին այս երկը գրել է 1391 թ. Երնջակի Ապրակունյաց վանքում. «առ ոտս Հռետորին Գրիգորի»:

Երկը գրված է հարց ու պատասխանի և ճառերի ձևով: Բաղկացած է 22 ճառերից, որոնք իրենց մեջ պարունակում են 158 հարցեր:

Երկը պահպանվել է ավելի քան 40 ձեռագրերով: Բարեբախտաբար մեզ է հասել նաև հեղինակի ձեռագիրը (Երևանի 2519, էջ 4ա—74բ), որը, սակայն, եղծված է էջերի եզրերում: Նկատի ունենալով այս հանգամանքը, նշում ենք նաև մի քանի հնագույն ձեռագրեր, որոնք պետք է օգտագործել տեքստի նախնական վիճակը վերականգնելու համար:

Երևանի 20 (1497 թ.), 1130 (ԺԵ դար, էջ 196բ—261բ), 5232 (1403 թ., էջ 58ա—154ա), Երուսաղեմի 1248 (1422 թ.), 1258 (ԺԵ դար), 1284 (ԺԵ դար), 1574 (1420 թ.):

Ե.—Ըստ Հովհաննու Ավետարանի մեկնություններ

12.—ՍԱՐԳԻՍ ԿՈՒՆԴԻ (+1184(90)

Սկ. Պատճառ սուրբ Աւետարանին Յոհաննու: Որք արտաքին հանդիսիցն լինին տեսողք...[28]:

Սարգիս Կունդը, Ղուկասի Ավետարանի խմբագիր մեկնությունը կազմելուց հետո, նույն եղանակով շարադրել է նաև Հովհաննու Ավետարանի մեկնությունը:

Երկը հիմնված է Ստեփանոս Սյունեցու, Ոսկեբերանի և Եփրեմի գրությունների վրա: Լուսանցքում հիշվում են նաև Նանա (26 անգամ), Սեբ. (3), Կդ. (1), Մամբրե վերծանող (3), Գրիգոր հայոց կթղ. (1), Զաքարիա հայոց կթղ. (19), Մովսես (1), Թեոփիլոս աշկ. Ոսկ. (3) և Իգնատիոս (8):

Այս երկը մեզ է հասել միայն երկու ձեռագրով.

Երևանի № 4006 (1644 թ.), էջ 1ա—138բ:
Երուս. № 855 (1706 թ.ից առաջ), էջ 1—500:

13. Ս. ՀՈՎՀԱՆ ՈՐՈՏՆԵՑՈՒ (+1387)

Այս գործը մեզ է հասել միայն երկու ձեռագրերով, որոնք երկուսն էլ գտնվում են Երուսաղեմում. 412 (1828 թ., էջ 32—188), 1282 (—, էջ 313—378):

Յոհաննու Որոտնեցւոյ տիեզերալուր վարդապետի արարեալ բան յԱւետարանէն Յոհաննու, որ ասէ. Ի սկզբանէ էր Բանն և Բանն էր:

Սկ. Բազումք սկզբմունք աշխարհի, նոքա որպէս սկզբմունք արարչականք երկնի և երկրի...[29]:

[24] Երևանի Մատենադարանի ձեռագիր հմր. 5591, էջ 23ա:

[25] Անդ, էջ 239բ—240ա:

[26] Անդ, էջ 240բ:

[27] Երևանի ձեռագիր հմր. 2519, էջ 5ա:

[28] Երևանի Մատենադարանի ձեռագիր հմր. 4006, էջ 1ա:

[29] Մ.Հ.Ս.Հ., հտ. Բ, Երուսաղէմ, 1967, էջ 353:

[30] Երևանի ձեռագիր հմր. 1300, էջ 317ա:

14.—Ս. ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒ (+1409 թ.)

Գրիգոր եռամեծի եւ քաջ հռետորի եւ իմաստասիրի՝ աշակերտի Յովհաննու Որոտնեցւոյ Մականուն կախելոյն ի սէրն Յիսուսի, ի յիղձ բաղձանաց բանասէր անձանց նորին աշակերտաց արարեալ Լուծումն համառատ յառաջաբան Աւետարանին Յովհաննու:

Սկ. Յառաջաբան: Լուծումն նախերգանս ոչ է Նանայի մեկնչէ, այլ վարդապետին, որ վասն խոնարհութեան զանուն իւր ոչ գրէ, որ թարգմանեալ է ի մեր լեզուն:

բն. Ոչինչ ըղձալի:

լծ. Քան բազում բարի...[30]:

Ս. Գրիգոր Տաթևացին ըստ Մատթեոսի Ավետարանի մեկնությունից հետո գրում է ըստ Հովհաննու Ավետարանի մեկնությունը, որը բաղկացած է երեք ստվարածավալ հատորներից:

Ինչպես ըստ Մատթեոսի, այնպես էլ ըստ Հովհաննու Ավետարանի մեկնությունը Տաթևացին շարադրել է իր աշակերտների խնդրանքով. երկու մեկնություններն էլ եղել են Տաթևացու դասավանդությունների արդյունք:

Երկը ունի մի արժեքավոր ներածություն, ուր հանգամանորեն խոսվում է Ս. Հովհաննես Ավետարանչի և Հովհաննու Ավետարանի աստվածաբանության մասին:

Այս երկը մեզ է հասել շուրջ 40 ձեռագրերով, որոնցից հնագույնները հետևյալներն են. Երևանի 1394 (1437 թ., էջ 2ա—363բ), 3584 (ԺԵ դար, էջ 1ա—177բ), 1300 (1456 թ., էջ 317ա—596բ), 1395 (ԺԵ դար), 1396 (ԺԵ դար), 3191 (ԺԵ դ.), Երուսաղեմի 1284 (ԺԵ դար), 1877 (1433 թ.):

15. ՄԱՏԹԵՈՍ ԶՈՒՂԱՅԵՑՈՒ (+1415(20)

Մաթէոսի վարդապետի եւ տիեզերալուսաբուսապետի արարեալ բան յԱւետարանէն որ ասէ. Ի սկզբան էր Բանն եւ Բանն էր առ Աստուած:

Սկ. Կահաւորիմ ով կահառք լուսերամից և դասք սերովբէից սակս տրամաբանութեան երկուց ներհակ հոմանուանց[31]:

Մատթեոս Զուղայեցին Ղուկասու Ավետարանի մեկնությունից հետո գրում է Հովհաննու Ավետարանի մեկնությունը՝ դարձյալ նույն ճառերի և հարց ու պատասխանների ձևով:

Մի շարք ձեռագրերում Մատթեոս Զուղայեցու այս գործը սխալմամբ վերագրված է Հովհաննես Որոտնեցուն (օր. Երևանի 3918, 5502, 5871, 7527 և այլն):

Ինչպես վկայում է հեղինակը իր հիշատակարանում[32], այս գործը Հովհաննու Ավետարանի կարևոր դրվագների մեկնությունն է:

Այս երկը մեզ է հասել 35 ձեռագրերով, որոնցից հնագույնները հետևյալներն են. Երևանի 2178 (ԺԴ դար), 5232 (1403 թ., էջ 154բ—241ա), 1131 (ԺԵ դ.), 1357 (ԺԶ դար, էջ 128ա—188ա), 3918 (1591 թ.), 5502 (ԺԶ դ.), 5871 (ԺԴ—ԺԷ դդ.), 1288 (1612 թ.), 4412 (1613 թ.), Երուսաղեմի 1248 (1422 թ.), 1258 (ԺԴ դ.), 998 (1623 թ., էջ 1—199):

16. ԳՐԻԳՈՐ ԽԼԱԹԵՑՈՒ (+1425)

Համառատ Մեկնութիւն Յովհաննու Աւետարանին: Աւգնեա Յիսուս:

Սկ. Ի սկզբանէ էր բանն: Գիտել պարտ է, թէ վասն է՞ր զսկիզբն ճառիս ի բանն դնէ և ոչ ի Հայր...[33]:

Գրիգոր Խլաթեցին այս երկը գրել է 1400 թ., Սուխարա վանքում: Ինչպես որ վկայում է նույն ինքն հեղինակը իր գործի վերջաբան-հիշատակարանում[34], այս գործի հիմքում ընկած են հեղինակի ուսուցիչ Սարգիս վրդ. Այրարկունեցու դասավանդությունները:

Այս երկը մեզ է հասել միայն մեկ՝ Երուսաղեմի 2521 ձեռագրով, էջ 1—530, որը և, բարեբախտաբար, հեղինակի ձեռագիրն է:

Օգտագործված ձեռագրացուցակների ցանկը.

1. Ցուցակ Հայերէն Ձեռագրաց Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի, հատոր Ա. կազմեց Սմբատ Տէր—Աւետիսեան, Վիեննա—1970:
2. Ցուցակ Հայերէն Ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանին. կազմեց Մեսրոպ վրդ. Քէշիշեան, Վիեննա—1964:
3. Ցուցակ Հայերէն Ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանին, հատոր Բ. «Անտոնեան հաւաքածոյ» կազմեցին Հ. Ն. Ակինեան և Հ. Հ. Ոսկեան, Վիեննա—1971:
4. Մայր Ցուցակ Ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, կազմեց Նորայր եպս. Պողարեան, հտ. Ա—Թ, Երուսաղէմ 1966—1979:

[31] Երևանի ձեռագիր հմր. 1357, էջ 128ա—բ:

[32] Երևանի ձեռագիր հմր. 5232, էջ 241ա:

[33] Մ.Ց.Ձ.Ս.Ց., հտ. Ը, Երուսաղէմ, 1977, էջ 194:

[34] Անդ, էջ 194—195:



Ա. ՀԱՏԻՏՅԱՆ

ՏԻՄՈԹԵՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՑԻ ԵՎ ՆՐԱ «ՀԱԿԱՃԱՌՈՒԹԻՒՆ ԱՌ ՍԱՀՄԱՆԵԱԼՍՆ Ի ԺՈՂՈՎՈՅՆ ՔԱՂԿԷԴՈՎՆԻ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ե դարի երկրորդ հիսնամյակին Ալեքսանդրիայի պատրիարքական Աթոռի Հայրապետների մեջ, իրենց առաքելական-եկեղեցական գործունեությամբ և մատենագրական վաստակով բացառիկ տեղ են գրավում նաև Դիոսկորոս և Տիմոթեոս Ալեքսանդրացի Հայրապետները, որպես այդ Աթոռի մեծանուն վարդապետներ, ինչպիսիք էին Դ—Ե դարերում Ս. Աթանասն ու Ս. Կյուրեղ Ալեքսանդրացիները:

Դիոսկորոսն ու Տիմոթեոսը Հայ Եկեղեցում մեծարվում են որպես «պատուական Հարք, պատուական և հոգեկիր վարդապետք Եկեղեցոյ, ուղղափառ հովիւք, ընդ մարտիրոսն դասեալ»[1]:

444 թվականին վախճանվում է Ս. Կյուրեղ Ալեքսանդրացի Հայրապետը (412—444)[2], որին և հաջորդում է Դիոսկորոսը (444—451), որպես նրա նախկին սարկավագն ու գաղափարակիցը Եփեսոսի ժողովում (431) ընդունված «Հաւատոյ ուղղափառ դաւանութեան» պաշտպանության հարցում, ընդդեմ Նեստորի քրիստոսաբանական մոլորության[3]:

Դիսկորոսը որպես ջերմ կյուրեղյան, քրիստոսաբանական իր ուղղության մեջ «երկաթի նման ամուր էր իր վճիռների մեջ... մի մարմնացումն եգիպտական վանականության... Կյուրեղյան ուղղափառության միաբնակ ըմբռնմամբ... մի մարդ, որ իշխում էր ոչ միայն իր թեմում, այլ Անտիոքում և Կ. Պոլսում որպես պապ, որ կարծես կոչված էր Ալեքսանդրիայի արդեն գագաթնակետին հասած զորությունը կամ ավելի ևս ավելացնելու, կամ խորտակելու, այն»[4]:

Դիոսկորոսի հետ միասին որպես նրա սարկավագն և Ալեքսանդրիայի Աթոռի վրա նրա հաջորդը, Տիմոթեոսը «հիրավի անցնում է միաբնակության ամենանշանավոր հայրերի շարքը և հիշվում է հանախ Կյուրեղից անմիջապես հետո,

---

[1] Գիրք թղթոց, Մատենագրութիւն նախնեաց, Թիֆլիս, 1901, էջ 97—98: «Պատասխանի թղթոյն Սորմենայ, որ առ Վրթանէս վարդապետ գրեաց»:

[2] Ս. Կյուրեղ Ալեքսանդրացու կենսագրության և մատենագրական վաստակի մասին տես «Էջմիածին» ամսագիր, 1977, № Գ 9 և № Դ 34:

[3] Նեստորի մոլորության մասին տես «Էջմիածին» ամսագիր, 1981, № Ժ 34—38:

[4] Երվանդ վարդապետ Տեր-Մինասյանց, Ընդհանուր եկեղեցական պատմություն, Ս. Էջմիածին, 1908, էջ 296 և 322:

Դիսկորոսի հետ միասին հայոց եկեղեցական գրականության մեջ»[5]:

Տիմոթեոս Ալեքսանդրացու կենսագրության մասին մինչ պատրիարք ընտրվելը, շատ բան ծանոթ չէ:

Ընդհանուր Եկեղեցու պատմության մեջ նա իր հակառակորդների կողմից կոչվել է «Էլուրոս»՝ «իր մարմնի վտիտության համար»: «Էլուրոսը» հունարեն մի բառ է, որ կատու, աքիս է նշանակում: Հայտնի չէ, թե նրան ինչո՞ւ այդ մականունն են տվել: Մեր նախնիք, գուցե ավելի իրավացի կերպով Կուզ են թարգմանել այդ բառը»[6]:

451 թվականին, Քաղկեդոնի ժողովից հետո, որտեղ Դիսկորոսը զրկվում է իր Աթոռից և աքսորվում՝ Քերսոն (Սև ծովի ափը) քաղաքը, «ոչ թե յուր դավանանքի պատճառով, այլ եկեղեցական կարգապահությունը խախտած լինելու համար», Տիմոթեոսը որպես նրա սարկավագը ուղեկցում է իր անիրավված եպիսկոպոսին մինչև նրա աքսորավայրը: Այնուհետև Տիմոթեոսը գլուխ է կանգնում այն շարժմանը, որը չէր ընդունում ո՛չ Քաղկեդոնի ժողովի ընդունած նոր «Հաւատոյ դաւանութիւնը» և ոչ էլ նույն ժողովի վճռով աթոռազուրկ եղած Դիոսկորոսին, ո՛չ էլ կառավարության կողմից դրածո նոր Պատրիարքին:

457 թվականին Դիոսկորոսի մահից հետո (454, սեպտեմբերի 4) Տիմոթեոսը իր կողմնակիցների կողմից ընտրվում է Ալեքսանդրիայի Աթոռի Հայրապետ: Նա «աշխատում է ամեն կերպ հեռու պահել իր հոտից քաղկեդոնականությունը: Նա պատրիարքական Աթոռ բարձրանալուն պես անմիջապես սկսում է իր իշխանությունը հաստատուն դարձնելու համար մաքրել եպիսկոպոսական Աթոռները քաղկեդոնականներից և նզովում Քաղկեդոնի ժողովը: Թե որքան մեծ է եղել նրա ազդեցությունը ու գործունեության հետևանքները, երևում է այն հանգամանքից, որ ժամանակակիցները նրան Մեծ անունն են տվել»[7]:

Տիմոթեոսը իրեն համարում է «տրուպս ուղղափառ եպիսկոպոսացն», այդ թվում Ս. Աթանասին, Ս. Կյուրեղին և Դիոսկորոսին: Քաղկեդոնականներին դեմ գրելով նա համարձակորեն շեշտում է. «Ցորո՞ւմ ստորագրութեանն ձերում հաւատացուք՝ յԵփեսոսին թէ՝ ի Քաղկեդովնին»:

Քաղկեդոնի ժողովից հետո, 451 հոկտեմբերին սկսվում է պայքարը Տիմոթեոսի և Ալեքսանդրիայի Աթոռի դեմ: Տխուր և դատապարտելի համաձայնության են գալիս Մարկիանոս կայսրը (450—457), Պուլգերիա կայսրուհին, Հռոմի Լևոն Պապը (440—461) և Կ. Պոլսի քաղկեդոնիկ Պատրիարքը՝ ընդմիշտ ազատվելու համար «Սրևելքի ամենագլխավոր խռովարարից», «որպեսզի Ալեքսանդրիայի Աթոռի աստղը էլ ավելի չբարձրանա»:

Նախ սկսվում է հալածանքը Ալեքսանդրիայի Աթոռի և նրա կորովի Պատրիարքի դեմ: Տիմոթեոսը այս առթիվ նշում է. «Հալածեցին զուղղափառսն ի քրիստոսասէր քաղաքին Աղեքսանդրի և յամենայն Եգիպտոսին... յայլ քաղաքս սպանին և սպանանեն և մինչև այժմ հալածեն... խնդրեն և զանձն իմ... ես խորհեալ եմ դարձեալ ընդդէմ ասել նոցայն ամբարշտութեան, քաջալոյս ելով ի զաւրութիւն տեառն իմոյ և Աստուծոյ՝ Յիսուսի Քրիստոսի, ասաւղին ուղղափառի ամենայնի»[8]:

Ալեքսանդրիայի Աթոռի և նրա Պատրիարքի դեմ ատելությամբ են լցվել նաև Պուլգերիա կայսրուհին, և Հռոմի Պապը: Կայսրուհին, որ մի ժամանակ Ս. Կյուրեղ Ալեքսանդրացուն կողմնակից էր, այժմ նրա «քաղաքական սկզբունքն է որ ավելի հարմար է և լավ որ Բոսփորի ափին լինի եկեղեցական կենտրոնը, ոչ թե Նեղոսի ափին»[9]:

451 թվականի հոկտեմբերին բացվում է Կ. Պոլսի արվարձանում՝ Քաղկեդոնի ժողովը, որը ձևականորեն զբաղվում և Եվտիքեսի քրիստոսաբանական մոլորության դատապարտումով, ինչ որ նորություն չէր, մինչ «գլխավոր խնդիրը ոչ թե պարզապես աստվածաբանական վերացյալ կետ մըն էր, Քրիստոսի Բնությանց տեսակետը, այլ բուն նպատակը՝ կատարելապես գործնական ու գերազանցապես թանձրացյալ կետ մըն էր, այսինքն է հայրապետական (պատրիարքական) Աթոռներու փոխա-

[5] Տիմոթէոսի եպիսկոպոսապետի Աղեքսանդրեայ «Հակաճառութիւն առ սահմանեալսն ի ժողովոյն Քաղկեդովնի», ի լոյս ընծայեալ աշխատութեամբ Կարապետ ծ. վարդապետի (Տէր-Մկրտչեանի) և Երուանդ վարդապետի (Տէր-Մինասեանց), Ս. Էջմիածին, 1908, «Հառաջաբան», էջ XIII:

[6] **Կարապետ ծ. վարդապետ,** Տիմոթեոս Էլուրոսի նորագյուտ երկը և նորա մի քանի նոր հատվածները, նախկին հայերից առած, «Արարատ», 1897, հունիս, էջ 251—257: Տես նաև «Հակաճառութիւն», «Հառաջաբան», նույնը, էջ VI:

[7] **Կարապետ ծ. վարդապետ,** «Արարատ», նույնը, էջ 251—252:

[8] **Կարապետ ծ. վարդապետ,** նույնը, էջ 255:

[9] **Երվանդ վարդապետ,** նույնը, էջ 326:

դարձ հարաբերությանց և առավելագույն ազդեցության խնդիրը»[10]:

Քաղկեդոնի ժողովում, «Հռոմի և Կ. Պոլսի Աթոռները դաշնակցած էին հասարակաց հակառակորդին դեմ և Մարկիանոս կայսրի աշխարհական բազուկն ալ իրենց պաշտպան հանդիսացած էր և այս անուղիղ միջոցներով կրցած էին Քաղկեդոնի մեջ հաղթանակել Ալեքսանդրիայի Աթոռի դեմ»[11]:

Քաղկեդոնի ժողովում կայսրն ու կայսրուհին «Հռոմը իրենց կողմն ունենալու համար, պարտավորվեցան Լևոն Պապի տոմարը ընդունիլ իբր սահման հավատոյ»[12]:

Կ. Պոլսի Աթոռի գերագահության այս ձգտումը Ալեքսանդրիայի և Անտիոքի Աթոռների դեմ, սրտովը չէր Հռոմի Աթոռին և Լևոն Պապին: Այս իսկ պատճառով Հռոմը չի ընդունում Քաղկեդոնի ժողովի 28-րդ կանոնը, որ Կ. Պոլսի Աթոռին «նախաթոռ ըլլալու իրավունք կուտար»[13]: «Այդ պատճառով Հռոմ չընդունեցավ Քաղկեդոնի ժողովի 28-րդ կանոնը և միևնույն ժողովին նկատմամբ ընդունելի և անընդունելի կանոններու տարբերություն մը սկսա դնել»[14], որովհետև Քաղկեդոնի ժողովի 28-րդ կանոնով «կվտանգվեր Հռոմի դիրքը»[15]:

Հայ Եկեղեցին Քաղկեդոնի ժողովին չի մասնակցել: Հայաստանում Վարդանանց պատերազմի ծանր օրերն էին: 480—484 թվականներին, երբ Տիմոթեոս Կուզի «Հակաճառութիւն»-ը, Հովհան Մանդակունու օրով հայերենի էր թարգմանվում, Հայ Եկեղեցին երբեք չի փոխել երեք տիեզերական ժողովների «Հաւատոյ ուղղափառ դաւանութիւնները» և պաշտոնապես իր դիրքը որոշել է Քաղկեդոնի դեմ:

Ըստ Հայ Եկեղեցու Նիկիայի (325), Կ. Պոլսի (381) և Եփեսոսի (431) տիեզերական ժողովներում ընդունված հավատի դավանությամբ և սահմանված կանոններով վերջ գտան ընդհանուր Եկեղեցու պատմության մեջ աստվածաբանական և քրիստոնեական բոլոր հիմնական վեճերն ու վիճաբանությունները և հաստատվեց վերջնականապես ուղղափառությունը:

«Առանց հիմնական պատճառի չէ որ Հայոց Եկեղեցին իրավունք ունեցավ Եփեսոսի (431) ժողովը իբր վերջին տիեզերական ժողով նկատել և առաջ չանցնիլ, որովհետև անով վերջացավ բոլոր գլխավոր Եկեղեցիներու համակարծիք համամտության շրջանը»: Երեք տիեզերական ժողովներով վերջացել էին «հիմնական քրիստոնեական կրոնքին իսկությունը և յուր էական խորհուրդները, այսինքն Երրորդությունը, Մարդեղությունն ու Փրկագործությունը»[15]:

Երեք տիեզերական ժողովներում սահմանված «Հաւատոյ դաւանութիւնները» և ընդունված կանոները Հայ Եկեղեցու դավանաբանների համար հետագա դարերում հանդիսացել են ուղղափառության մանիֆեստ, դավանաբանական մեծ վեճերի ժամանակ:

Այնուամենայնիվ, «Հայ Եկեղեցին Կյուրեղ Ալեքսանդրացու քրիստոսաբանությունը **«միակատար կերպով ընդունելուց հետո, միևնույն կետի վերա անշարժ կանգնած չմնաց,** այլ յուր մասնակցությունն ունեցավ դավանական զարգացման հաջորդ աստիճանների ստեղծած շարժումների մեջ, բայց միշտ հավատարիմ մնալով **Կյուրեղյան քրիստոսաբանությանը,** նորա ոգով պարզաբանելով յուր առաջ դրված նոր խնդիրները և մերժելով այն ամենը, ինչ որ շեղվում էր նորանից ու նորմուծություն բերում»[16]:

457 թվականին, Հռոմն ու Կ. Պոլսի Աթոռները տխուր համաձայնությամբ միմյանց հետ դաշնակցած, Մարկիանոս կայսրի հրամանով Տիմոթեոսին աթոռազուրկ են հռչակում և կայսերական զինվորների խիստ հսկողությամբ Կ. Պոլսի վրայով աքսորում են Գանգրա և ապա Քերսոն, որտեղ մեծ Հայրապետը մնում է մինչև 476 թվականը և նույն տարին վերադառնում է Ալեքսանդրիա, իր Աթոռը: Բայց հյուծած ու հիվանդագին նա մահանում է իր Աթոռի վրա 477 թվականի հուլիսի 31-ին, իսոր ծերության մեջ:

Տիմոթեոս Կուզի «Հակաճառութիւն առ սահմանեալսն ի ժողովոյն Քաղկէդովնի» աշխատության հայերեն թարգմանության ժամանակը

Տիմոթեոս Կուզը Քաղկեդոնի ժողովի դեմ իր «Հակաճառութիւն»-ը գրել է աքսո-

[10] **Մաղաքիա արքեպ. Օրմանյան,** Հայոց Եկեղեցի, Կ. Պոլիս, 1912, էջ 42—43:

[11] **Մաղաքիա արքեպ. Օրմանյան,** Ազգապատում, Ա հատոր, 1959, Բեյրութ, էջ 494:

[12] «Հայոց եկեղեցի», նույնը, էջ 93:

[13] Նույնը, էջ 44:

[14] Ազգապատում, նույնը, էջ 494:

[15] **Մաղաքիա արքեպ. Օրմանյան,** Հայոց Եկեղեցի, նույնը, էջ 103—104:

[16] Կնիք հաւատոյ, նույնը, էջ LXXXV: Հատվածի մեջբերումների ընդգծումները Կարապետ եպիսկոպոսինն (Տեր-Մկրտչյան) են:

ռավայրում, նախ Գանգրայում և ապա Քերսոնում, 457—476 թվականներին:

Տիմոթեոս Կուզի ողջ կյանքը «բանիւ և գրով» եղել է պայքար Քաղկեդոնի ժողովի դեմ: Նա Ե դարի երկրորդ հիսնամյակում հանդիսացել է «Միաբնեայց (այսինքն՝ միաբնակների) կուսակցության» պարագլուխներից մեկը, միաբնակներ՝ որոնք «Ասորիքի ու Եգիպտոսի մեջ իրենց բովանդակ ուժովն՝ բռամբ, բանիւ և գրով ախոյեան (հակառակորդ) հանդիսացան Քաղկեդոնի ժողովոյն (հաւատոյ նոր) սահմանին դէմ»[17]:

Այս իմաստով Կուզի «Հակաճառութիւն»-ը «ամեն մասամբ եղած է նշանակալից հայ մատենագրության համար... և շատ կարևոր էջ պիտի բանա հայ աստվածաբանական պատմության մեջ... և բացի տոհմային գրականության համար ունեցած մեծ նշանակությունեն, անպայման հարգ ունի նաև հայրախոսական ուսման համար»[18]:

Քաղկեդոնի ժողովից հետո, Ե դարի երկրորդ կեսին բորբոքվում են եփեսոյան կյուրեղյան «Հաւատոյ դաւանութեան» պաշտպան ուղղափառ միաբնակների և քաղկեդոնիկ երկաբնակների միջև դավանաբանական վեճերը:

Այդ վեճերի ժամանակ Տիմոթեոս Կուզի գրած «Հակաճառութիւն»-ը «բազմակողմանի, պատմական կարևորություն ունեցող մի հիշատակարան է», որովհետև քաղկեդոնականները, «թշնամական ոգով լցված» տարածում էին իրենց «ստությունը» թե «Քաղկեդոնի ժողովի հակառակորդները և կամ **մի Բնության** պաշտպանները եվտիքական են եղել»[19]:

451—490-ական թվականներին Բյուզանդական ողջ կայսրության մեջ սրվում են Քաղկեդոնի դեմ դավանաբանական վեճերը:

Քաղկեդոնի պաշտպան Մարկիանոս (մահացած՝ 457), Լևոն Բ (մահացած՝ 474) կայսրերից հետո, իշխանության գլուխ է անցնում Բասիլիսկոս կայսրը, որ «բացարձակ կերպով անցնում է միաբնակների կողմը: 476-ին կայսրը մի այլ հրովարտակով դատապարտում է Քաղկեդոնի վճիռները: 500 եպիսկոպոսներ իրենց համաձայնությունը հայտնեցին կայսեր այս հրովարտակին»: Աքսորված ուղղափառ եպիսկոպոսները, այդ թվում Տիմոթեոս Կուզը և Անտիոքի Պետրոս Ֆուլլո Պատրիարքները և ուրիշներ վերադարձան իրենց Աթոռներն ու թեմերը[20]:

Բասիլիսկոս կայսրի հաջորդ Զենոն կայսրը 482 թվականին իր ծանոթ «Հենետիկոն» հրովարտակով որը կոչվում է «Գիր միավորության» (Գիրք թղթոց, էջ 289), «Քաղկեդոնի ժողովին հեղինակությունը կմերժեր» և Քրիստոսի «Բնությունների մասին վիճելն արգելում էր և առաջին երեք տիեզերական ժողովների դավանությունը միայն ուղղափառ էր ճանաչում... և շեշտում էր առանձնապես Կյուրեղի քրիստոսաբանական վարդապետությունը և լռելյայն կերպով մերժում էր Քաղկեդոնի որոշումները», որովհետև «Քաղկեդոնի կանոնները առկախ կմնային և ընդհանուր կերպով ամեն եկեղեցիներե և բովանդակ քրիստոնեությունեն ընդունված չէին»[21]:

Քաղկեդոնի ժողովը «սկզբից ևեթ իր դեմ հանեց քրիստոնեության խոշոր մեծամասնությանը, և ո՛չ միայն քրիստոնեական դավանագիտության օրրան Աղեքսանդրիայի առաջնակարգ պատրիարքությունը, որ Նիկիո և Եփեսոսի տիեզերական ժողովների դավանական սկզբունքներն էր թելադրել, այլ շուտով նաև Երուսաղեմը... Անտիոքը և վերջապես Կ. Պոլիսը, որոնք նկատեցին Քաղկեդոնի որոշումներն իբրև նախկին երեք ժողովներով ընդունած քրիստոսաբանության անհարիր և խորթ նորմուծություն, ոտքի կանգնեցրին նոցա դեմ (Քաղկեդոնի որոշումների դեմ) ամբողջ արևելյան քրիստոնեությունը, Նոր Հռոմից (Կ. Պոլսից) սկսած մինչև Ասիայի և Ադրիկեի խորքերը, և Հին Հռոմը իրեն ենթարկյալ վիճակներով հավատարիմ մնաց նոցա, որ իրենից բխել էին»[22]:

«Ժամանակակցությունները բերելով կըգտնենք թե Հենետիկոնի հրատարակությունը տեղի ունեցավ ճիշտ այն միջոցին, երբ Վահան Մամիկոնյանը ոգի ի բռին կմաքարեր (պարսիկների դեմ) հավատո

[17] **Հ. Ներսես Ակինյան,** Կուզը հայ մատենագրության մեջ, քննական ուսումնասիրություն, Վիեննա, 1909, էջ 5:

[18] Նույնը, էջ 43—44:

[19] «Արարատ», նույնը, էջ 253:

[20] **Երվանդ վարդապետ,** նույնը, էջ 333—334, «Հակաճառութիւն», «Հառաջաբան», նույնը, էջ VIII—IX:

[21] **Մաղաքիա արքեպ. Օրմանյան,** Հայոց Եկեղեցի, նույնը, էջ 44: «Ազգապատում», նույնը, էջ 496—497: **Երվանդ Տեր-Մինասյանց,** նույնը, էջ 334: **Մանուկ Աբեղյան,** «Հայոց հին գրականության պատմություն», I, 1944, էջ 355:

[22] **Կարապետ եպիսկոպոս** (Տեր-Մկրտչյան), Շողակաթ, Ս. Էջմիածնի հայագիտական ժողովածու, գիրք առաջին, Վաղարշապատ, 1913, «Հովհան Մանդակունի և Հովհան Մայրագոմեցի», էջ 91:

պաշտպանության համար Ներսեհապատի ճակատամարտին մեջ»[23]:

Նույն ժամանակաշրջանում Ս. Հովհան Մանդակունի կաթողիկոսը (478—490), Վահանի սպարապետության և ապա մարզպանության օրերին, հարմար ժամանակ էր գտնում զբաղվելու Հայ Եկեղեցու բարեկարգական մի շարք հարցերով: Ս. Սահակի և Ս. Մեսրոպի մահից հետո, անցնող 40 տարիների ընթացքում, խանգարվել էին Սահակ-Մեսրոպյան եկեղեցական, մշակութային ու ազգային-հասարակական կարգերը, մանավանդ Վարդանանց պատերազմից հետո, մինչև Վահանյանց փայլուն հաղթանակը:

Մանդակունին զբաղվում է նաև իր ժամանակ Ընդհանրական Եկեղեցուն հուզող դավանաբանական հարցերով՝ որոշելու համար Հայ Եկեղեցու պաշտոնական դիրքը, Եկեղեցու ներքին խաղաղությունն ու միությունը վրդովող քաղկեդոնական վեճերի մեջ:

«Ս. Սահակի և Ս. Մեսրոպի աշակերտ Մանդակունին, նոցա հոգևոր մեծ ձեռնարկությունները վերակենդանացնող և առաջ տանող Մանդակունին, չէր կարող հավատարիմ չմնալ նոցա ավանդած Եփեսոսյան դավանական սկզբունքներին և մերժել Քաղկեդոնի նորմուծությունը»[24]:

480-ական թվականներին Մանդակունին «շատ որոշ դիրք է բռնում ժամանակակից դավանաբանական վեճերի վերաբերմամբ: Նա հանդես է գալիս ընդդեմ երկաբնակության: Ընդհանուր Եկեղեցու մեջ դավանաբանական պառակտում էր ընկած և Հայոց Եկեղեցին չէր կարող անուշադիր թողնել այդ: Սկսվում է պայքար երկաբնակության և քաղկեդոնականության դեմ և այդ պայքարի գրականությունը»[25]:

Դավանաբանական այդ պայքարի կամ «մաքառման» գրականության նշանավոր ստեղծագործությունն է հանդիսանում Տիմոթեոս Կուզի «Հակաճառութիւն»-ը և դրա հայերեն թարգմանությունը:

Այսօր հայագիտության մեջ «տոմարագիտական հաշիվների վրա հիմնված» (Մ. Աբեղյան) վերջնականապես ընդունված փաստ է, որ Տիմոթեոս Կուզի «Հակաճառութիւն»-ը թարգմանվել է Հովհան Մանդակունիի նախաձեռնությամբ, 480—484 փետրվարի 28-ին[26]:

Տիմոթեոս Կուզը «Հակաճառութիւն»-ը գրել է Գանգրայում և Քերսոնում: Նա «պարապ չէր նստել երկար տարիներ յուր աթոռավայրում: Հեռու մնալով յուր հոտից (համայնքից և Աթոռից) և այլևս չկարողանալով անմիջական մասնակցություն ունենալ յուր Եկեղեցու համար այնքան կարևորություն ունեցող դավանական վեճերի մեջ Քաղկեդոնի ժողովի մասին, նա յուր ժամանակը գործ է ածել Քաղկեդոնի ժողովի վարդապետության դեմ ընդարձակ հերքումներ գրելով»[27]:

Մայր Աթոռի միաբան Կարապետ ծայրագույն վարդապետը (Տեր-Մկրտչյան) առաջինը ուշադրություն է դարձրել Տիմոթեոս Կուզի «Հակաճառութեան» վրա «Արարատ» ամսագրի 1897 թվականի մայիսի համարում իր հրատարակած «Տիմոթեոս Էլուրոսի նորագյուտ երկը և նորա մի քանի նոր հատվածները նախնի հայերից առած» ուսումնասիրությամբ[28]:

Այսուհետև, 1906 թվականին, Կարապետ ծ. վարդապետը, ընկերակցությամբ դարձյալ Մայր Աթոռի միաբան Երվանդ վարդապետի (Տեր-Մինասյանց) հրատարակության են պատրաստում Մայր Աթոռի Մատենադարանի Կարինյան ցուցակի № 1915-ում հայտնաբերված Տիմոթեոս Կուզի «Հակաճառութեան» օրինակը, որպես Քաղկեդոնի դեմ գրված «վկայությունների ընդարձակ և ստվար մի ժողովածու»:

«Հակաճառութիւն»-ը լույս է տեսնում Մայր Աթոռի տպարանից, 1908 թվականին, մեկենասությամբ Մայր Աթոռի միաբան Տ. Սուքիաս արքեպ. Պարզյանի, որպեսզի այդ հույժ կարևոր աշխատությունը, իր բովանդակալից հառաջաբանով, դրվի «գիտական աշխարհի դիմաց»[29]:

Տիմոթեոս Կուզի «Հակաճառութիւն»-ը բաղկանում է երկու մասերից: Թարգմանվել է հունարեն բնագրից»[30]: «Հայտնի էին մինչև այժմ միայն մի քանի եկեղեցական մատենագիրների հիշատակություններ և նոցա պահած աննշան հատվածներ»[31]:

---

23 **Մաղաքիա արքեպ. Օրմանյան,** Ազգապատում, նույնը, էջ 497:

24 **Կարապետ եպիսկոպոս,** նույնը, էջ 92:

25 Տե՛ս «Շողակաթ», նույնը, **Կարապետ եպիսկոպոս,** էջ 89—94, և նույն տեղ **Գալուստ Տեր-Մկրտչյան,** «Հայ մատենագրության հնագույն թվականները», էջ 158—163:

26 **Գալուստ Տեր-Մկրտչյան,** նույնը, էջ 163:

27 «Հակաճառութիւն», նույնը, հառաջաբան, էջ IX:

28 «Արարատ», նույնը, էջ 251—255: Նաև «Հակաճառութիւն», «Հառաջաբան», էջ V:

29 «Հակաճառութիւն», նույնը, «Հառաջաբան», էջ VI:

30 «Արարատ», նույնը, էջ 252, «Հակաճառութիւն», նույնը, «Հառաջաբան», էջ XII:

31 «Արարատ», նույնը, էջ 252:

1908 թվականի Մայր Աթոռի տպարանի հրատարակությամբ «Հակաճառութիւն»-ը ամբողջական վիճակով հայտնի է դառնում գիտական աշխարհին:

«Հակաճառութեան» հրատարակությունը «շատ կարևոր է հատկապես այն պատճառով, որ նրա հեղինակը շատ եռանդուն մասնակցություն է ունեցել դավանական վիճաբանությունների մեջ Քաղկեդոնի ժողովից հետո և պարզում է մեզ այն դիրքը, որ բռնել էին իսկական միաբնակները»[32]:

Հրատարակված «Հակաճառութիւն»-ը բաղկանում է 396 էջերից և հերետիկոսների 14 գլուխ «հայհոյություններից» և «պիտառութիւն»-ներից, այսինքն, Նեստորի, Եվտիքեսի, Լևոն Ա Պապի թղթից (տոմար) և այլ մոլորություններից կատարված քաղվածքներից: Ապա հաջորդում են Եկեղեցու հայրերի ուղղափառ ընդարձակ վկայություններն ու հեղինակի խորհրդածությունները և Աստվածաշնչից քաղված համապատասխան վկայություններ:

«Հակաճառութիւն» աշխատության հրատարակությունը սկսվում է Կարապետ և Երվանդ վարդապետների բովանդակալից և գիտական լուրջ հիմք ունեցող «Հառաջաբան»-ով, էջ V—XXIV:

Այնուհետև ներկայացվում է գրվածքի բովանդակությունը, «Վկայութիւնք Սրբոց Հարցն մերոց» վերնագրով, որպես առաջին գլուխ, էջ 2—34:

Տիմոթեոս Կուզը մեջբերումներ է կատարում մինչև Քաղկեդոնի ժողովը ապրած ընդհանրական Եկեղեցու մեծ Հայրապետների գրվածքներից, որոնց քրիստոսաբանական «Հաւատոյ դաւանութիւն»-ը հիմնվել է Նիկիայի, Կ. Պոլսի և մանավանդ Եփեսոսի ժողովի Կյուրեղյան «Մի է Բնութիւն Բանին Մարմնացելոյ» ուղղափառ վարդապետության վրա:

Եկեղեցու մեծ վարդապետների և ուղղափառ հայրերի շարքում Տիմոթեոսը հիշում է Հռոմի Փիլիկոս, Ալեքսանդրիայի Պետրոս, Ալեքսանդր, Աթանաս, և ապա Եպիփան, Կիպրիանոս, Գրիգոր Սքանչելագործ, Բարսեղ, Գրիգոր Նյուսացի, Գրիգոր Աստվածաբան, Պրոկղ և շուրջ 22 ուղղափառ հայրերի անունները:

Գրքի առաջին գլխում, Տիմոթեոսի «Հանաճառություններն» ու խորհրդածությունները գրավում են 32—54 էջերը:

«Հակաճառութեան» երկրորդ մասի Բ—ԺԴ գլուխները (էջ 52—144) սկսվում են Հռոմի Պապի ծանոթ թղթի կամ «Լևոնի տոմար»-ի և նրա նախորդ Պողոս Սամոստացու, Նեստորի, Թեոդորետի հերետիկոսությունների և նրանց գրվածքների քննությամբ և հակաճառությամբ, ապա «Պիտառութիւնք հերձուածողաց», «Նախաբան հակաճառութեան հայհոյութեանց թղթոյն Ղեովնայ» (Լևոն Պապի) և վերոհիշյալ հերետիկոսների, որոնք համարվում են «տապալիչք նախասացելոցն հայհոյութեանցն հերձուածողաց և նզովիչս զնոցայն ամպարշտութիւն» (էջ 52):

«Հակաճառութեան» երկրորդ մասն էլ ունի Ա մասի ծրագիրն, ու կառուցվածքը, «Պիտառութիւնք» (քաղվածքներ) վերոհիշյալ հերետիկոսների գրվածքներից, ապա «Պիտառութիւնք երանելեացն մերոց հարանց», և այնուհետև «Հակաճառութիւն Տիմոթէոսի առ ասացեալսն ի Ղեովնայ և նախ քան զնա հերձուածողացն»:

«Հակաճառութիւն»-ը սակայն, այս 14 գլուխներով չի ավարտվում:

ԺԴ գլխից հետո կա «մի կես պատմական, կես վիճաբանական մի ծանոթություն», նվիրված «ի ժողովն Քաղկէդոնի» (էջ 144—150), որին կրկին հետևում են նույն ձևով 5 գլուխ «հայհոյութիւնք և Պիտառութիւնք Նեստորի», «Պիտառութիւնք հարանց», «Հակաճառութիւն Տիմոթէոսի», «Երկոտասան նզովք Կիւրղի» (էջ 151—279) Ալեքսանդրացու Նեստորի դեմ, որոնք ընդունվեցին Եփեսոսի ժողովում:

«Հակաճառութեան» 329—333 էջերում կա Տիմոթեոսի «մի բավական ընդարձակ, բայց թերի մնացած մի վերջաբան» և «Հիշատակարան», ուր հեղինակը խոսում է քաղկեդոնականների կողմից իր և ուղղափառ հայրերի կրած անլուր չարչարանքների մասին: «Ես երբեք չեմ ուրանա ուղղափառ հավատը, և պատրաստ եմ մեռնել մեր Տեր և Աստված Հիսուս Քրիստոսի համար, որը իմ միտքս բաց արեց և ինձ գործակցեց որպեսզի ես շարադրեմ այս մատյանը, ինչպես որ սովորեցի սուրբ ավետարանիչներից, սուրբ առաքյալներից, սուրբ մարգարեներից, սրբերից և ուղղափառ եպիսկոպոսներից, դեռևս այս բոլորը լսելով ճշմարիտ հավատից մոլորվածները, որոնք իրենց գրվածքներով ուրացան Տիրոջը և նրան երկու Բնությունների բաժանեցին, և նրանք՝ որ ընդունեցին նրանց ամբարշտությունը, դառնան և ապաշխարեն, և փախչեն Աստուծուց նրանց վրա դրված բարկությունից»[33]:

Մի ճաշակ տալու համար մեր ընթերցողներին, «Հակաճառութեան» հայերեն

[32] «Հակաճառութիւն», «Հառաջաբան», էջ XI:

[33] «Հակաճառութիւն», նույնը, էջ 329—333:

սույն հատվածի թարգմանության գրաբար բնագիրն էլ ենք հրատարակում[34]:

«Եւ այսուհետև Տիմոթեոսի (անիմա ?)-ստնագունի ամենայն մարդոյ, յարտասահմանութեան պարապաւղի, սակս ոչ ուրանալ ինձ զուղիղն հաւատ, և պատրաստապէս ունելով զիս մեռանել վասն Տեառն մերոյ և Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի, եբաց զիմս միտս ինքն Յիսուս և գործակցեաց ինձ, և շարագրեցի նախ այսորիկ մատեան Աստուծոյն բայից, որպէս ուսայ ի սրբոցն աւետարանչաց, և ի սրբոց առաքելոց, և ի սրբոց մարգարէից, և ի սրբոց և ուղղափառաց եպիսկոպոսապետաց, թերևս լսելով նոցա մոլորեալքն յուղղափառ հաւատոյն և ներգրաբար ուրացեալք զՏէրն և բաժանել զնա յերկուս բնութիւնս, և որք հաւասարեցին նոցայն ամպարշտութեան, դարձցին և ապաշաւեսցեն Աստուծոյ, և փախիցեն զառ ի Աստուծոյն նոցա ի վերայն կացեալ բարկութիւնն»:

«Հակաճառութիւն»-ը ունի «ամենայն խընամքով կազմված երեք տեսակ ցանկեր.

«Ցանկ վկայությանց Սուրբ Գրոց» (էջ 343—354):

«Ցանկ հատուկ անվանց» (էջ 355—361):

«Ցանկ նյութոց» (էջ 362—396):

Ուսումնասիրողների և ընթերցողների «դյուրության համար, գրքի Հառաջաբանին հետևում է բովանդակության ընդարձակ մի ցանկ, ուր նշանակված է փակագծի մեջ առանց թվանշաններով, թե յուրաքանչյուր եկեղեցական հորից քանի վկայություն կա և որ գրքերից առած (եթե այդ հիշված է Տիմոթեոսի երկասիրության մեջ»[35]:

«Հակաճառութեան» հայերեն թարգմանությունը, ինչպես նշվել է վերևում, կատարվել է 480—484 (փետրվար) թվականներին: Սույն թարգմանությունը «մի տեսակ հայերեն է ստեղծել դավանաբանական խնդիրների համար՝ որոշ դավանաբանական արտահայտություններ և բառաձևեր, որոնք հաջորդ դարերում ընդհանուր գործածության մեջ են մտել դավանական թղթերի և այլ գրվածքներում»[36]:

«Հակաճառութիւն»-ը «մեծ նշանակություն է ունեցել ոչ միայն իր բովանդակության տեսակետով, այլև իր ոճի և լեզվի: «Հակաճառութիւն»-ը սահմանված լինելով քաղկեդոնականների դեմ վեճերի համար, թարգմանիչն աշխատել է ըստ ամենայնի բառացի ճշտությամբ և բնագրի մոտ թարգմանել, որպեսզի վիճաբանությունների ժամանակ ոչ մի տեղիք չլինի թյուրիմացության: Այդպիսով ստեղծվել է մի խիստ հունաբան հայերեն, և դավանաբանական խնդիրների համար մի նոր, առանձին տեսակի ոճ, արտահայտության հատուկ ձևեր և բառաձևեր»[37]:

«Թարգմանության լեզուն շատ հեռու է օրինակելի լինելուց... այնքան խորթ է այդ հայերենը»[38]: Այնուամենայնիվ «Հակաճառութեան» ազդեցությունը, «ամեն մասամբ եղած է նշանակալից հայ մատենագրության վրա (Հ. Ն. Ակինյան, նույնը, էջ 43):

«Հակաճառութեան» թարգմանչի մասին որևէ որոշ բան ասել դժվար է: «Բայց թարգմանված է դավանաբանական վեճերի սաստկացած միջոցին, երբ Քաղկեդոնի ժողովի որոշումները զորեղ ընդդիմության էին հանդիպում արևելյան քրիստոնյաների կողմից և «կայսերական կառավարությունը» ստիպված էր դրանք գործադրել տալու համար զենքի դիմել և մեծ արյունահեղություններ անել»[39]:

Այս բոլոր հանգամանքները ցույց են տալիս Տիմոթեոսի «Հակաճառութեան» «գրքի ունեցած մեծ նշանակությունը հայոց եկեղեցական գրականության տեսակետից և ապացուցելու, որ հիրավի այդ գիրքն ծառայել է Հայոց Եկեղեցու վարդապետների համար իբրև զինարան Քաղկեդոնի վարդապետության դեմ կռվելու համար: Այդ է անշուշտ պատճառը, որ Տիմոթեոսի «Հակաճառութիւն»-ը այնքան վաղ թարգմանվել է հայերեն»[40]:

Ե դարից սկսած Հայ Եկեղեցու մեծ դավանաբանները օգտվել են Տիմոթեոս Կուզի «Հակաճառութիւն»-ից, ինչպես օրինակ Մովսես Խորենացին, Հովհան Մանդակունին[41], Ստեփանոս Սյունեցին, Թեոդորոս

---

[34] Նույնը, էջ 329—340:

[35] Նույնը, «Հառաջաբան», էջ XXIV:

[36] Նույնը, էջ XVII—XVIII:

[37] **Մանուկ Աբեղյան**, նույնը, էջ 355—356: Տես նաև **Հրաչյա Աճառյան**, «Հակաճառութեան» մեջ գործածված հայերեն նորամուտ մի շարք բառերի մասին, Վիեննա, 1909, էջ 66—106:

[38] «Հակաճառութիւն», «Հառաջաբան», էջ XXI:

[39] **Մանուկ Աբեղյան**, նույնը, էջ 356 և նույն հեղինակի «Տիմոթեոս Կուզի «Հակաճառութեան» թարգմանվելու ժամանակը, նույն տեղ, էջ 356 և 613—618.

[40] «Հակաճառութիւն», «Հառաջաբան», էջ XXI:

[41] Երանելի Քերթողահայրն Մովսէսի Խորենացի եպիսկոպոսի, Գիրք թղթոց, նույնը, էջ 23—28: Երանելոյն Յովհաննու հայոց եպիսկոպոսապետի, «Ապացոյց յերկուց Բնութեանց ասել զՓրկիչն և կամ մի Բնութիւն», Գիրք թղթոց, նույնը, էջ 29—40; Տես նաև «Կնիք հաւատոյ», նույնը, «ի հակա-

Քոթենավորը, Մաթուսաղան, Օձնեցին, Խոսրովիկը, Շնորհալին, Տուտեորդին, Անանիա Սանահնեցին, Զուքարիա Զագեցին, Սամվել Անեցին, Կիրակոս Գանձակեցին և ուրիշներ[42]:

«Հակաճառութիւն»-ից բացի Տիմոթեոս Կուզը ունեցել է նաև «մի քանի գրական աշխատանքներ, որոնց բոլորի նպատակն է եղել երկու Բնության վարդապետության դեմ կռիվ մղել և յուր հոտը նրանից զգուշացնել»[43]:

Տիմոթեոսի «Հակաճառութեան» թարգմանությունը հայ դավանաբանների համար «ամենալավ զենքերն էր մատակարարում նեստորականության և քաղկեդոնականության դեմ մաքառելու համար»[44]:

477 թվականի հուլիսին մահանում է Տիմոթեոս Կուզը, հյուծած ու հիվանդագին, և Ալեքսանդրիայի Աթոռի վրա նրան հաջորդում է 481 թվականին Պետրոս Մոնգոսը, որ Տիմոթեոսի ուղղափառության և հակաքաղկեդոնական պայքարի ջերմ պաշտպանն էր:

Պետրոս Մոնգոսի մահով Ալեքսանդրիայի Աթոռը կորցնում է իր առաջնակարգ ու ղեկավար դերն ու նշանակությունը ընդհանրական Եկեղեցու պատմության մեջ ի պաշտպանություն ուղղափառ հավատի, ինչ որ ունեցել էր այդ փառավոր Աթոռը Դ—Ե դարերում:

Տիմոթեոս Կուզի «Հակաճառութեան» թարգմանությամբ փակվում է Ալեքսանդրիայի և Հայ Եկեղեցիների հարաբերության պատմության էջը:

հառութենէն Քաղկեդոնի ժողովոյն, որ ասի Ապացոյց», էջ 130—133:

[42] «Հակաճառութիւն», «Հառաջաբան», էջ XVIII—XXI: Նաև **Մանուկ Աբեղյան,** Հայոց Եկեղեցու դերը քաղկեդոնականության վերաբերյալ 5-րդ դարի երկրորդ կեսին, նույնը, էջ 623—637: Գիրք թղթոց, նույնը, Պատասխանի թղթոյն, Սորմենայ, որ առ Վրթանէս գրեաց, էջ 93—98: Տես նաև «Գիրք թղթոց», նույնը, էջ 101, 103, 126, 140:

[43] «Հակաճառութիւն», «Հառաջաբան», էջ X:

[44] Նույնը, էջ XV—XVI:





ՀԱԿՈԲ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԼԼԸՆՃՅԱՆ

ՅՈԹՆԵՐՈՐԴ ՕՐՎԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Վեց օրերի միջև ընկնող ստեղծագործության ավարտումից հետո, Ս. Գիրքը հաղորդում է. «Եվ յոթներորդ օրը հանգստացավ Աստված իր այն բոլոր գործերից, որ կատարել էր: Եվ օրհնեց Աստված յոթներորդ օրը ու սուրբ հռչակեց այն» (Ծննդ. Ա 2—3):

Այստեղ Ծննդոց Գրքի քահանայական գրչի հեղինակը մտացածին կարծիքներ չի հայտնում Աստծու աշխատանքի կամ հանգստի մասին: Վերջապես Աստված մարդկանց նման հանգստի կարիք չունի, նա մշտապես գործում է և ներգործում ամեն ինչի վրա (տե՛ս Հովհ. Ե 17): Մյուս կողմից էլ Աստված կարող էր նույնիսկ մեկ օրում ստեղծագործությունն ավարտել, պետք չուներ վեց օրերի, մանավանդ որ հազար տարին Աստծու համար մի օրվան կամ գիշերվան մի պահի նման է (հմմտ. Սղմ. ՁԹ 4), սակայն սկզբից ի վեր, հենց ստեղծագործությունը վեց օրերի միջև բաժանելով, նույնիսկ երկու ստեղծագործություն մեկ օրվա մեջ գցելով, քահանայական գրիչը ուզում է վեր հանել յոթներորդ օրվան, Տիրոջ հանգստի օրվան նշանակությունը:

Նախ մարդկային տեսանկյունից էլ դիտված հրաշալի մի երևույթ է վեց օրվան աշխատանքի և մի օրվան հանգստի դրությունը, իսկ կրոնական իմաստով էլ բարձր է յոթներորդ օրվան նշանակությունը, քանի որ այն Տիրոջ օրհնած և սրբած օրն է: Անավասիկ այստեղ, վերոհիշյալ զեկույցում, հրեական պաշտամունքի գլխավոր օրվան՝ շաբաթ օրվան, դեռևս քողարկված, հիմքը կա, որը հետագայում Մովսեսի կողմից պարզաբանում է ժողովրդին և տասնաբանյա պատվիրաններին մաս է կազմում (տե՛ս Ելից Ի 8—11, ԼԱ 12—17):

Հարցական է, թե արդյոք Մովսեսից առաջ գոյություն ունե՞ր շաբաթ օրը, սուրբ պահելու սովորությունը, արդյոք եբրայեցիք այն հարևան ազգերի՞ց են վերցրել: Սույն հարցերին դեռևս մի սպառիչ լուծում կարելի չէ եղած տալ: Մի բան սակայն պարզ է, որ ոչ մեկ ազգ շաբաթ օրվան նշանակությունը հասկանում էր այնպես, ինչպես հրեաներն էին այն հասկանում:

Բաբելոնում գոյություն ուներ մի օր, որ գրեթե անվանակից էր եբրայական «շաբաթ»-ին: Այն կոչվում էր «շապաթու» և համապատասխանում յուրաքանչյուր ամսի 15-րդ օրվան, լուսնի լրման հետ: Սակայն բաբելոնյան «շապաթու»-ն նկատվում էր դժբախտաբեր և չարաբաստիկ օր: Այս օրվա մասին մի բաբելոնյան օրենք հետևյալն է սահմանել. «Մեծ ազգերի Հովիվը (այսինքն՝ թագավորը իր քահանայական պաշտոնի մեջ) ածուխի վրա եփված միս և խմորեղեն պետք չէ ուտի: Մարմնի վրայի շապիկը պետք չէ փոխի: Մաքուր զգեստներ պետք չէ հագնի, զոհ պետք չէ մատուցի: Թագավորը կառքով պիտի չշրջի, տիրակալի նման նա պետք չէ խոսի: Խորհրդակատարման վայրում ողջակեզին նայողը պետք է լուռ մնա: Բժիշկը իր ձեռքը ոչ մեկ հիվանդի վրա պետք չէ դնի: Մի

որոշում կատարելու համար օրը հարմար չէ»[1]:

Յոթներորդ օրը, Հին Կտակարանում, Տիրոջ պաշտամունքին նվիրված սուրբ օրն է: Հրեաները, սակայն, կառչելով այդ օրը սահմանված հանգստի տառին, մթագնեցին նրա բուն իմաստը: Մակաբայեցիների շրջանում, օրինակ, հրեաները նույնիսկ մերժում էին շաբաթ օրով կռվել թշնամիների դեմ: Մատաթիան, սակայն, որոշում է շաբաթ օրով էլ ինքնապաշտպանության դիմել (Ա Մակաբ. Բ 40—41):

Քրիստոսի ժամանակաշրջանում էլ խիստ կանոններ գոյություն ունեին՝ հարգելու համար շաբաթ օրվան հանգիստը:

Քրիստոս հիմնականում չդատապարտեց շաբաթ օրը, այլ դատապարտեց դպիրների մտածելակերպը, դրա համար էլ ասաց, թե Մարդու Որդին է տերը նաև շաբաթ օրվան, և թե շաբաթ օրը մարդու համար է, և ոչ թե մարդը՝ շաբաթ օրվան (տե՛ս Մրկ. Բ 27 և 28): Այսինքն շաբաթ օրվան սահմանված օրենքը ոչ թե ի վնաս, այլ ի շահ մարդու պետք է լինի: Քրիստոս հասկացնել էր ուզում նաև այն, թե կարելի է շաբաթ օրվան օրենքը զանց անել, ոչ միայն մի մարդու կյանք ազատելու պարագայում, այլ նաև մի բարի գործ կատարելու դեպքում (տե՛ս Մրկ. Գ 4: Ղուկ. ԺԳ 14—17): Մի խոսքով **Սիրո օրենքը** մնացյալ օրենքների մեջ վեհագույնն է:

Յոթներորդ օրվան— լինի դա շաբաթ օրվան կամ կիրակիի— նշանակությունը այլ է քրիստոնյաների մոտ: Թեև կիրակին տաշտամունքի օրն է կամ ավելի ճիշտ «Տիրոջ օրը»՝ համաձայն բասի[2] ստուգաբանությանը, սակայն այն այս աշխարհում լոկ **նմանությունն** է երկնային հանգստյան օրվան, երկնային յոթներորդ օրվան, որ վերջին և **հավիտենական** օրն է հանգստի և խաղաղության:

Այսպիսով, յոթներորդ օրը ապացուցում է, թե Աստված խաղաղության մեջն է, թե **նա** խաղաղություն է: Նա սուրբ է հռչակում, այսինքն՝ առանձնացնում է այդ օրը, մի խոսքով իր խաղաղությունը անջատում է այն խաբուսիկ խաղաղությունից, երբ մարդ հանգստանալիս, հիրհելիս կամ մահանալիս է լինում, այն չի նմանվում աշխարհի տված խաղաղության (Հովհ. ԺԴ 27): Աստծու այդ օրվան մեջ կա նաև օրհնություն. այդ օրվան չի հաջորդում երեկո, սրա համար էլ ստեղծագործության մեջ օրերի հաջորդականությունը նշող «եղավ երեկո և եղավ առավոտ» նախադասությունը գոյություն չունի այդտեղ: Ով այդ օրվան մեջ մտնի, պիտի օրհնվի, պիտի սրբվի և մասնակից պիտի դառնա Աստծու խաղաղությանը, որին կոչված է ամբողջ մարդկությունը և որի համար Աստված մարդն ստեղծեց:

[1] Սույն հատվածի թարգմանությունը կատարված է W. Zimmerli-ի 1. Mose գրքից, էջ 100:

[2] Հայերեն «կիրակի» բառը գալիս է հունարեն Κυριακή=Kyriaki բառից և նշանակում է «տերունական»:





ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ

Վաղարշապատ։ Հայոց թափուր մայրաքաղաք։
Հայոց կաթողիկոսարան.
Վեհարանում՝ մի փառաւոր լուսի դագաղ,
Դագաղի շուրջ՝ սուգ ու շիվան,
Խմբված մարդիկ—իշխանական ու շինական,
Զորականներ, վեղարավորք...
Վեհ ու հուզմունք, սարսուռ ու դող.
Որտե՞ղ փնտրել արծանի հող
Ի պահ տալու աճյունը սուրբ, նվիրական...
Ո՞վ էր արդյոք այդ հարգարժան ննջեցյալը,
Արքա՞ էր նա,
Իշխանավո՞ր էր մեծանուն, տոհմիկ մի ա՞յր,
Թե՞ քաջազուն մի զորավար...
Օ՜, ո՛չ, նա սոսկ վարդապետ էր, ռաբբի էր նա,
Նա որդի էր մի հասարակ շինականի,
Որ թափանցեց հոգու մեջն իր ժողովրդի
Եվ կենազեն ոգին դարձավ,
Ուսուցիչ և ուսուցչապետը անդրանիկ...
Ուսուցիչը, որ, իրավամբ ամենայնի,
Կոչվել է ու պիտ կոչվի սուրբ.
Սուրբ Մաշտոցն էր ննջեցյալը,
Սակայն ո՛չ, նա միայն սուրբ չէ,
Պետք է տաներ հորինողին աստված կոչել

. . . . . .

Օ՜, փրկություն անվերապահ,
Հուսատու միտք, օ՜, նշողյուն,
Անծախ երկունք, քերկրառիթ պահ,
Անստվեր գյուտ, հավերժություն...

Հայոց ոչ մի արքա ու տեր Մեսրոպի չափ
Հայոց ազգին ժառանգություն չպարգևեց.
Հազարամյա պայքարներից
Մնաց միայն անմարելի մի հաղթություն՝
Մեսրոպյան մեծ հաղթությունը,
Որ դիմացավ փորձությանը ժամանակի
Ու մեզ հասավ, որպես դեղթափ...
Հայոց անցյալ արքաները,
Բոլորն եկան ու գնացին,
Հայոց հզոր արքաները
Հայն օտարից չփրկեցին
Եկավ միակ թագավորը՝
Գրոց արքան ամենակալ,
Եկավ միակ փառավորը,
Որպես լույս ու արևագալ,
Ջիամրող իր իմաստությամբ.
Եկավ հայոց Վիրգիլիոսը՝
Իր սաների ուղեկցությամբ,
Եկավ Հայոց Քրիստոսը՝
Մարդ ու աստված միասնությամբ,
Բացեց դռները երկնքի,
Լուսամուտներն արեգական
Եվ սերմերն իր ցանեց ոսկի,
Ցանեց բուռ-բուռ ու լիասիրտ,
Արևաբույր, հայրենական.
Աստղերի պես հակինթ-հակինթ,
Ցանեց ոգի ու կենաց երգ
Ու տառերգեց անձեռակերտ
Հայոց բոլոր հոգիներում...
Ու հայ մարդը վարձահատույց,
Իր իսկ հոգում հայրենատենչ,
Իր տառապած արյան միջից
Հնչյուններին այդ փառապանծ
Հուշարձաններ կոչեց-կոփեց
Ադամանդով ոսկեկառույց...

Եկավ հանճարն անզուգական,
Տարոնածին սուրբ-արբոցը,
Արքաների անմեռ արքան՝
Ազգափրկիչ մեծ Մաշտոցը...
Եկավ, որ էլ ետ չգնա,
Մնա մեզ հետ անվերադարձ,
Մնա քանի աշխարհը կա,
Դառնա հացը մեր հանապազ,
Բախտի ճամփան մեր վերընթաց
Ու մեզ տանի անշեղ, արթուն
Դեպի կյանք ու հավերժություն...

ՎԱՀԱԳՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Գ. Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՀՈՎՀԱՆ ՈՐՈՏՆԵՑՈՒ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՆՔԸ
(Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1980 թ., 241 էջ)

Հայաստանի գիտությունների ակադեմիայի հրատարակչությունը լույս ընծայեց ևս մի կարևոր ու արժեքավոր ուսումնասիրություն՝ նվիրված ԺԴ դարի հայ նշանավոր փիլիսոփա, աստվածաբան Ս. Հովհան Որոտնեցու կյանքին ու գործունեությանը, փիլիսոփայական հայացքների պարզաբանմանը:

Մենագրության հեղինակն է փիլիսոփայական գիտությունների դոկտոր Գևորգ Գրիգորյանը, որը հայտնի է իր մի քանի արժեքավոր ուսումնասիրություններով, որոնք նվիրվել են մեր մշակույթի այլ նշանավոր գործիչներին[1]:

Փիլիսոփայությունը միջնադարյան Հայաստանում առավել տարածված գիտություններից մեկն էր՝ սկսած Ե դարից: Պատճառն այն է, որ միջնադարում փիլիսոփայությունը համարվել է աստվածաբանության աղախին, և Հայ Եկեղեցու վարդապետները միշտ էլ կարիք են զգացել այդ գիտությանը՝ ապացուցելու մի շարք աստվածաբանական դրույթներ, առավել ևս՝ պաշտպանելու համար Հայ Եկեղեցու դավանանքը: Այդպես էլ Հայ Եկեղեցու մեծ աստվածաբան, փիլիսոփա Ս. Հովհան Որոտնեցին մեծ տեղ է տվել փիլիսոփայությանը, ընդհանրապես՝ արտաքին գիտություններին, սակայն մի վերապահությամբ, որ այն ամենը, որոնք կհակադրվեն Ս. Գրքին, անընդունելի են և մերժելի: Ըստ Որոտնեցու, արտաքին գիտությունները կարևոր են և իրենց մեջ պարունակում են ճշմարտություն, սակայն միակ ճշմարիտը Ս. Գիրքն է և, ուսումնասիրելով արտաքին գիտությունները, չպետք է շեղվել Ս. Գրքից:

Աստվածաբանական դրույթների իմաստը բացահայտելիս Որոտնեցին և հայ միջնադարյան գրեթե բոլոր աստվածաբաններն ու իմաստասերները դիմել են փիլիսոփայական-տրամաբանական գիտելիքների օգնությանը՝ աստվածաբանական դրույթները ավելի հասկանալի դարձնելու նպատակով:

Աստվածաբանությունը միջնադարում համարվել է «թագուհի գիտութեանց», և, անշուշտ, փիլիսոփայությունը, որը, ըստ Դավիթ Անհաղթի, համարվում էր «արհեստ արհեստից և մակացութիւն մակացութեանց»[2] (արվեստների արվեստ և գիտությունների գիտություն), պետք է դառնար միակ արժանի աղախինը բոլոր գիտությունների թագուհու, այն է՝ աստվածաբանության:

Հովհան Որոտնեցին ընդհանրապես մեծ

---

[1] **Գ. Հ. Գրիգորյան**, Հովհաննես Երզնկացու փիլիսոփայական հայացքները, Երևան, 1962: **Գ. Հ. Գրիգորյան**, Վահրամ Բաբունու փիլիսոփայությունը, Երևան, 1969: **Գ. Հ. Գրիգորյան**, Հասարակական-փիլիսոփայական միտքը հայկական Կիլիկիայում (12-րդ դարի երկրորդ կես), Երևան, 1979:

[2] **Դաւիթ Անյաղթ**, Երկասիրութիւնք փիլիսոփայականք, Երևան, 1980, էջ 55:

և պատվավոր տեղ է գրավել հայ բանասիրության մեջ՝ իր գրական-մանկավարժական ու հասարակական ակտիվ ու եռանդուն գործունեության, ինչպես նաև հայ մշակույթի զարգացման գործում խաղացած մեծ դերի պատճառով:

Որոտնեցու փիլիսոփայական հայացքների մասին մասնագիտական ուսումնասիրություն գրելու առաջնությունը պատկանում է Վազգեն Զալոյանին, որն իր ռուսերեն լեզվով հրատարակած «Փիլիսոփայական մտքի զարգացման հիմնական փուլերը Հայաստանում» հոդվածում[3] առաջինը Որոտնեցուն բնութագրել է որպես փիլիսոփայի, շոշափելով մի շարք հարցեր, ինչպիսիք են փիլիսոփայության հիմնական հարցի լուծումը ըստ Որոտնեցու, ընդհանուրի և եզակիի փոխհարաբերության հարցը, ճանաչողության խնդիրները և այլն: Վ. Զալոյանը այստեղ առաջադրված թեզերը ավելի ընդարձակել է ու հիմնավորել իր հետագա ուսումնասիրություններում:

Որոտնեցիագիտության մեջ իրենց մեծ նպաստը ունեն նաև Ա. Ադամյանը, Ս. Արևշատյանը և Ս. Լալաֆարյանը՝ իրենց հրատարակած հոդվածներով, ուսումնասիրություններով, Որոտնեցու գործերի հրատարակություններով՝ գրաբար և ռուսերեն թարգմանությամբ, և այլն:

Որոտնեցու փիլիսոփայական հայացքների լուսաբանմանը անդրադարձել է նաև Հ. Գաբրիելյանը իր «Հայ փիլիսոփայության մտքի պատմության» մեջ[4]:

Պետք է նշել, որ վերը հիշված հեղինակները իրենց առջև խնդիր չեն դրել տալու Որոտնեցու հայացքների ամբողջական, ծավալուն և մանրամասն շարադրանքը և վերլուծությունը, այլ անդրադարձել են միայն այս կամ այն հարցին: Գրախոսվող գիրքը Որոտնեցու հայացքներին նվիրված մենագրություն գրելու առաջին փորձն է, ուր հանգամանորեն լուսաբանվում են մեծ իմաստասերի գոյաբանական, իմացաբանական, տրամաբանական, հոգեբանական և բարոյագիտական հայացքները և շեշտվում նրա տեղն ու դերը հայ փիլիսոփայական մտքի պատմության մեջ: Հեղինակը ձգտել է հիմնականում շարադրել Որոտնեցու հայացքները, տարբեր հարցերի մասին արծարծած նրա մտքերը՝ նպատակ հետապնդելով, ինչպես ինքն է ասում, «հնարավորության սահմաններում ամբողջականորեն ընթերցողին ներկայացնել միջնադարյան փիլիսոփայի մտածողության առանձնահատկությունը՝ այսօրվա մարդուն պատկերացում տալու համար միջնադարյան մտավորականի հարցադրման բնույթի, դատողության ընթացքի, թեզերի հիմնավորման ու ապացուցման եղանակի և այլ հարակից խնդիրների վերաբերյալ»[5]:

Աշխատությունը բաղկացած է վեց գլուխներից.

Գլուխ առաջին. Հովհան Որոտնեցու կյանքն ու գործը (5—44).

Գլուխ երկրորդ. Գոյաբանությունը (45—108).

Գլուխ երրորդ. Ուսմունք հոգու մասին (109—136).

Գլուխ չորրորդ. Իմացաբանությունը (137—163).

Գլուխ հինգերորդ. Բարոյագիտությունը (164—186).

Գլուխ վեցերորդ. Տրամաբանությունը (187—218):

Վերջում ունի նաև բավականին ընդարձակ ամփոփում (էջ 219—241), ուր հակիրճ և հստակ ձևով ի մի են բերված աշխատության մեջ արծարծված հարցերը, եզրահանգումները և այլն:

Առաջին գլուխը նվիրված է Որոտնեցու կյանքին ու գործունեությանը: Այս գլուխը, պետք է խոստովանել, մյուս գլուխների համեմատությամբ ավելի թույլ է: Այսպես, բերելով տարբեր գիտնականների՝ Հ. Միքայիլ Չամչյանի, Մաղաքիա արքեպ. Օրմանյանի, Հարությունն Գյուրտյանի, Հ. Ղևոնդ Ալիշանի, Լևոն Խաչիկյանի և ուրիշների կարծիքները Որոտնեցու ծննդյան և մահվան թվականների մասին, հեղինակը չի փորձել վերջնական խոսք ասել կամ էլ մատնանշել իր սեփական կարծիքը[6]:

Այս բոլորը, անշուշտ, չի կարելի թերություն համարել, քանի որ հեղինակը, ելնելով աշխատության բնույթից, հիմնական ալաքը ուղղել է Որոտնեցու փիլիսոփայական հայացքների պարզաբանմանը:

Հեղինակը իրավացիորեն Որոտնեցու գործունեությունը կապում է տվյալ ժամանակաշրջանի (ԺԴ դար) հայոց կյանքի քաղաքական ու գաղափարական գործոնների հետ: Նշվում է, որ Որոտնեցու գործունեության ամենահատկանշական էջերից մեկը Տաթևի համալսարանի հիմնադրումն է, 1373 թ., որը հսկայական դեր է

[3] Տե՛ս Հայկ. ՍՍՀ ԳԱ. փիլիսոփայության ինստիտուտի Աշխատություններ, Երևան, 1950, էջ 113—142:

[4] Տե՛ս Հ. Գաբրիելյան, Հայ փիլիսոփայական մտքի պատմություն, հ. 2, Երևան, 1958:

[5] Հովհ. Որոտնեցու փիլիսոփայական ուսմունքը, Երևան, 1980, էջ 42:

[6] Նույնը, էջ 5—6:

խաղացել հայ ժողովրդի թե՛ մշակութային և թե քաղաքական կյանքում:

Ըստ արժանվույն է գնահատվում նաև Որոտնեցու՝ կաթոլիկ միսիոներների, այսպես ասած, կաթոլիկ Եվրոպայի գաղութատիրական նպատակների այդ առաջին մուտենտիկների և նրանց համախոհ հայ ունիթորների դեմ մղած պայքարը:

«Որոտնեցու մաքառումը Հայ Եկեղեցու ինքնուրույնության ու նրա դավանանքի անաղարտության համար՝ հայրենասիրական-առաջադիմական պայքար էր հանուն պետականության կորցրած հայ ժողովրդի ազգային ավանդույթների, մշակույթի ու, վերջապես, լեզվի հետագա պահպանման»[7], իրավացիորեն գրում է Գ. Գրիգորյանը: Բանն այն է, որ միջնադարում կրոնական-ծիսական առանձնահատկությունները եղել են որպես ազգային հիմնական հատկանիշներ: Կրոնական գաղափարախոսությունը եղել է միակ միջոցը ազգային մտածողության առանձնահատկությունը դրսևորելու համար: Եվ պատահական չէ, որ կաթոլիկները և օրթոդոքս Բյուզանդիան ամեն կերպ ձգտել են վերացնել Հայ Եկեղեցու ինքնուրույնությունը, ձգտել են հայ ժողովրդին դավանափոխ անել՝ նրան ազգայնապես դիմազրկելու և իրենց ազդեցության ոլորտի մեջ առնելու: Ահա թե ինչու Որոտնեցին բուռն պայքար է մղել ունիթորների դեմ՝ ամեն կերպ ձգտելով պահպանել նախ Հայ Եկեղեցու ինքնուրույնությունը և նրա ազգային ավանդույթները:

Գրքի երկրորդ գլուխը նվիրված է գոյաբանությանը (էջ 45—108): Նշվում է, որ ըստ Որոտնեցու գոյություն ունեն ստեղծագործության երեք տեսակներ.

1) **Արհեստի (արվեստի)** ստեղծագործություն, որն իրականացնում է մարդը: Արվեստի ստեղծագործությունը կարիք ունի պատրաստի վիճակում հանդես եկող նյութի, օրինակ՝ փայտի, բրդի և այլն:

2) **Բնության** ստեղծագործություն, որը մի քայլ առաջ է, քան մարդկայինը, քանի որ բնությունը ի վիճակի է այնպիսի նյութեր և նոր իրեր առաջ բերել, որոնք ոչ միայն ձևականորեն, այլև էականորեն տարբերվում են ստեղծագործության համար հիմք ծառայած նյութերից: Այսպիսով, մարդու և բնության ստեղծագործությունները նման են նրանով, որ երկուսն էլ կարիք ունեն իրական նյութի, բայց տարբերվում են ստեղծագործության արդյունքի որակով:

3) **Աստվածային** ստեղծագործություն, որը միակ ճշմարիտ ստեղծագործությունն է, քանի որ կարիք չունի իրական նյութի. «ոչինչ կարօտանայ հիման, որպէս արհեստն և բնութիւնն, այլ ինքն ստեղծանէ զհիմն և տայ նմա զձև արհեստական և զտեսակ գոյացական»[8]:

Այս գլխում հանգամանորեն քննվում և բացատրվում են Որոտնեցու դատողությունները եզակիի և ընդհանուրի միջև եղած հարաբերության մասին, դատողությունը «եղեղութիւն» և «անեղութիւն» հասկացությունների բովանդակության վերաբերյալ, չորս տարրերի (օդի, ջրի, կրակի և հողի) մասին ուսմունքը և այլն[9]:

Հեղինակը այս գլխում անդրադարձել է նաև զուտ աստվածաբանական մի շարք հարցերի, ինչպիսիք են Աստուծո գոյության ապացուցումը բնության՝ Աստուծո ստեղծագործության գոյության փաստով, Աստուծո մեկ լինելը, Աստուծո նախախնամությունը և այլն[10]:

Ուշադրության է արժանի հատկապես երրորդ գլուխը (109—136), ուր հանգամանորեն պարզաբանվում է Որոտնեցու ուսմունքը հոգու մասին:

Ըստ Որոտնեցու, Հոգին սահմանվում է հետևյալ կերպ. «Էութիւն, անմարմին, անմահ, անձնիշխան, բնական»[11]: Նշվում է, որ միջնադարյան իմաստասերը Արիստոտելի նման Հոգին բաժանում է երեք մասերի՝ **տնկական, զգայական, բնական**: Ընդ որում բույսերը ունեն միայն առաջին՝ տնկական մասը, կենդանիները՝ տնկականը և զգայականը, իսկ մարդիկ՝ բոլորը միասին: Բայց մարդու մոտ բուսական, զգայական և բանական հոգիները հանդես չեն գալիս որպես առանձին ու անկախ իրողություններ, այլ կազմում են մեկ ամբողջություն:

Իմացաբանության գլխում (137—163) խոսվում է հիմնականում դատողության մասին: Նշվում է զգայարանների դերը արտաքին աշխարհը ճանաչելու գործում:

Գրքի հինգերորդ գլուխը (164—186) նվիրված է Որոտնեցու բարոյագիտական հայացքներին, որոնք, ըստ հեղինակի, ամուր թելերով կապված են հոգու մասին ուսմունքին և խարսխվում են կամքի ազատության վերաբերյալ սկզբունքի վրա: Ըստ Որոտնեցու մարդը «անձնիշխան» է:

Թե՛ այս և թե՛ երրորդ գլխում (հոգու մա-

[7] Նույնը, էջ 9:

[8] Նույնը, էջ 45—46:

[9] Նույնը, էջ 49—59:

[10] Նույնը, էջ 61—66:

[11] Նույնը, էջ 110:

սին) քննվել են զուտ աստվածաբանական հարցեր:

Այս գլխում հեղինակը կանգ է առել նաև կրոնի դերի և հավատքի նշանակության վրա: «Ըստ Որոտնեցու,—գրում է Գ. Գրիգորյանը,—իսկական հավատը նաև բարոյական կատարելության հիմք է և պայմանավորում է մարդու արարքների բարոյական մաքրությունը, բարձր արժեքը: Այն առաջնորդում է իրագործելու աստվածային պատվիրանները: Հավատով ղեկավարվելով, մարդը կձգտի նմանվել կատարյալին, հասնել նրան և մարմնավորել իր մեջ նրա բարձրագույն առաքինությունները»[12]:

Գրքի վեցերորդ գլխում (187—218) հանգամանորեն քննվում են նաև Որոտնեցու տրամաբանական ըմբռնումները, որոնք արտացոլվել են գլխավորապես Արիստոտելի «Կատեգորիաների» և «Պերի արմենիասի» մեկնությունների մեջ: Ելնելով հիշյալ մեկնությունների ընձեռած նյութերից, հեղինակը ընդհանուր պատկերացում է կազմել Որոտնեցու գիտելիքների մասին՝ հասկացությունների և դատողությունների վերաբերյալ, որոնք համարվում են տրամաբանության երկու հիմնական բաժինները: Հեղինակը նշում է, որ Որոտնեցու տրամաբանությունը սահմանափակվում է միայն հասկացության և դատողության բնագավառներով, ինչպես Կիլիկիայում ԺԳ դարի իմաստասեր—տրամաբան Վահրամ վարդապետ Բաբունու մոտ:

Գրախոսվող գիրքն ունի մանր թերություններ: Հեղինակը իր առջև խնդիր չի դրել տալ Որոտնեցու աշխատությունների ամբողջական ցանկը, որը թերևս անհնարին էր, քանի որ միջնադարյան մտավորականը իր գործերից շատերը ինքը չի գրել, այլ՝ նրա աշակերտները: Հայտնի է նաև, որ շատ քարոզներ տարբեր ձեռագրերում վերագրվում են մե՛կ Որոտնեցուն, մե՛կ Տաթևացուն, մե՛կ Մատթեոս Ջուղայեցուն և այլն: Կազմել Որոտնեցու մատենագրական ողջ ցանկը՝ դուրս է եղել հեղինակի նպատակից: Այդ չէ, որ մենք մատնանշում ենք որպես թերություն, այլ այն, որ հեղինակը իր գործի մեջ օգտագործել է այնպիսի նյութեր, որոնց Որոտնեցուն պատկանելու հարցը կասկածելի է: Գուցե դրանք բոլորն էլ, իսկապես, Որոտնեցուն են պատկանում, բայց կարծում ենք, որ ուսումնասիրողը պետք է փաստարկներ բերեր այդ գործերը Որոտնեցուն վերագրելու համար: Այսպես. Հովհաննու Ավետարանի «Ի սկզբանէ էր Բանն և Բանն էր առ Աստուած» (Յովհ. Ա 1) հատվածի մեկնությունը, ըստ 6573 ձեռագրի, որն օգտագործել է հեղինակը, պատկանում է Որոտնեցուն: Բայց Մատենադարանի բազմաթիվ ձեռագրերում այս գործը հանկանե հանվանե նշվում է, որ պատկանում է Մատթեոս Ջուղայեցուն[13]: Ձեռագրացուցակում միայն 8144 համարի ձեռագրում է նշված, որ գործը Որոտնեցունն է, այն էլ, կարծում ենք, թյուրիմացության արդյունք է: Տեսնում ենք, որ թվերի պարզ հարաբերությունը արդեն խոսում է Ջուղայեցու օգտին: Ընդ որում այս գործը Ձեռագրացուցակի որոշ համարներում (ձեռ. № 5871, 7527 և այլն) նշված է Մատթեոս Ջուղայեցու անվան տակ և փակագծում գրված է՝ «վերագրեալ Յովհ. Որոտնեցւոյ»[14]: Եթե հեղինակը համոզված էր, որ գործը իսկապես Որոտնեցունն է, պետք է այդ ապացուցեր՝ կատարելով լուրջ բանասիրական քննություն:

Այս ամենով հանդերձ, չի կարելի թերագնահատել գրքի արժեքը: Իր այս ուսումնասիրությամբ Գ. Գրիգորյանը նոր ներդրում է բերում հայ փիլիսոփայության պատմության զարգացման գործում:

Գիրքը աչքի է ընկնում իր գիտական լուրջ կառուցվածքով, մտքերի պարզությամբ ու հստակությամբ: Հեղինակը, քննելով Որոտնեցու դիրքորոշումը փիլիսոփայական այս կամ այն հարցի վերաբերյալ, հաճախ զուգահեռներ է անցկացնում հայ միջնադարյան մի շարք նշանավոր փիլիսոփաների՝ Դավիթ Անհաղթի, Հովհ. Իմաստասերի, Վահրամ Բաբունու, Հովհ. Երզնկացու, ինչպես նաև կաթոլիկ միսիոներ Բարթուղիմեոս Բոլոնացու և նրա աշակերտ հայազգի Հովհ. Քոնեցու հետ և այլն: Այս համեմատությունները ավելի են ընդգծում գրքի գիտական արժեքը:

Գրախոսվող գիրքը հիրավի մի արժանի տուրք է՝ մատուցված ԺԴ դարի հայ նշանավոր վարդապետ, աստվածաբան և փիլիսոփա, հայ մշակութային ու հասարակական աչքի ընկնող գործչի, Հայ Առաքելական Ս. Եկեղեցու մեծագույն ջահակիրներից մեկի՝ Ս. Հովհան Որոտնեցու անմահ հիշատակին:

ՎԱՐԴԱՆ ՍՐԿ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
(Հոգևոր ճեմարանի Գ լսարանի ուսանող)

[12] Նույնը, էջ 172:

[13] Մատենադարան, ձեռ. № 1131, 1288, 1289, 1356, 1357, 1358, 1359, 1392, 1393, 1431, 1771, 1278, 4412, 5154, 5232, 5502, 6380, 8326, 9651 և այլն: Տե՛ս նաև «Էջմիածին» ամսագրի սույն համարում՝ **Եզնիկ քհն. Պետրոսյան**, Ավետարանների միջնադարյան հայկական մեկնություններ, էջ 41:

[14] Տես Ձեռագրացուցակ, Երևան, 1970, հատ. Բ:



ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ԿԱՅԱՆԱԼԻՔ ԱՌԱՋԻԿԱ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԺՈՂՈՎԸ

Սույն թվականի հունվարի 26—28 օրերին Մոսկվայում տեղի ունեցավ «Կրոնական գործիչները միջուկային աղետից կյանքի սրբազան պարգևի պաշտպանության համար» ճշանաբանով առաջիկա մայիս ամսին Մոսկվայում կայանալիք համաշխարհային կոնֆերանսի միջազգային նախապատրաստական կոմիտեի հերթական երրորդ ժողովը, որին մասնակցում էին աշխարհի տարբեր ցամաքամասերի 25 երկրներից ժամանած տարբեր կրոնների շուրջ 70 ներկայացուցիչներ:

Հանուն Մայր Աթոռի միջազգային նախապատրաստական ժողովին, որպես իրավասու անդամ, իր մասնակցությունը բերեց նաև Շիրակի թեմի առաջնորդ Տ. Նարեկ եպիսկոպոս Շաքարյանը:

Ժողովն սկսվեց հունվարի 26-ին, երեքշաբթի օրը, ժողովուրդների կողմից խըմբովին արտասանված աղոթքով:

Ժողովականները հավաքվել էին հաջորդական հինգ նիստերի ընթացքում քննարկելու համար առաջիկա կոնֆերանսի հետ կապված մի շարք կարևոր հարցեր:

Ժողովում առաջինը հանդես եկավ Բելոռուսիայի և Մինսկի միտրոպոլիտ, Միջազգային նախապատրաստական կոմիտեի նախագահ Տ. Ֆիլարետը ընդարձակ զեկուցումով: Ապա տեղի ունեցավ մտքերի լայն փոխանակություն ժողովի մասնակիցների միջև:

Միջազգային կոմիտեի սույն ժողովում կազմվեց և հաստատվեց առաջիկա համաշխարհային կոնֆերանսի աշխատանքային ծրագիրը, որոշվեցին գլխավոր զեկուցումների թեմաները և զեկուցողները, ճշտվեցին մասնակիցների քանակը և կազմը, քննության առնվեցին կոնֆերանսի ֆինանսական ապահովման և այլ հարակից հարցեր:

Միջազգային կոմիտեն իր աշխատանքը ավարտեց իր վերջին նստաշրջանի աշխատանքների մասին պաշտոնական մի հաղորդագրության կազմումով, որն ընդունվեց և միաձայնությամբ հաստատվեց ժողովականների կողմից:

Հաղորդագրության մեջ մի անգամ ևս պարզ ընդգծվում է, որ «բոլոր կրոնները, չնայած իրենց միջև եղած տարբերություններին, ընդունում են սիրո, եղբայրության գաղափարը մարդկային հարաբերությունների բարձր սկզբունքով... Սակայն հավատքը նրանցից պահանջում է նաև գործ, որովհետև եթե կրոնը հանդիսանում է կյանքի հիմքը, ապա այն որոշում է նաև մարդկային վերաբերմունքի բարոյական բնույթը»:

Վերոհիշյալ հաղորդագրության մեջ նշվում է նաև, որ «ի նպաստ խաղաղության արված ծառայության հաջողությունը կախում ունի կրոնների հիմքում եղած մարդասիրական

գաղափարները մարդկանց հասցնելուց: Այդ է նաև աստվածային կամքի թելադրանքը, որին ընդառաջ չգնալը պիտի նշանակեր անտեսել, չկատարել աստվածային կամքը»:

Հունվարի 27-ին Մոսկվայի և համայն Ռուսիո պատրիարք Տ. Պիմենը, ի պատիվ ժողովի մասնակիցների, Մոսկվայի «Միջազգային տան» սրահում կազմակերպեց ընդունելություն, որին ներկա էին նաև հրավիրյալներ Մոսկվայի կրոնական շրջանակներից և սովետական խաղաղասիրական կազմակերպություններից:





ՑՈՒՑԱԿ
ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

№ 544
ԿԱԼՈՒԱԾԱԳԻՐ
(Տաճկերէն)

Թերթերը՝ 2:— **Մեծությունը՝** 55.4×18.7 սմ.:— **Նյութը՝** դեղնած և կնդտոտած հաստ թուղթ:—**Կազմ՝** չունի:— **Պահպանակներ՝** չունի:—**Վիճակը՝** բավարար:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** 1ա, 2ա և 2բ:— **Տողերը** 32:— **Գծումներ՝** չունի:— **Գիրը՝** արաբական նասխի տառեր:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատուն՝** անհայտ:— **Ժամանակը՝** 1873/74 թթ.:— **Վայրը՝** Արտվին:— **Ծանոթագրություն՝** Երևանից բարեպաշտ մի կին է նվիրել կալվածագիրը: Ձեռագրատունս ստացել է այն Վեհափառ Հայրապետից 15 սեպտեմբերի 1981 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կալվածագրի բովանդակությունն այգու կապակցությամբ վեճի մասին է: Այն գրված է Արևմտյան Հայաստանի Լազիստանի շրջանի Արտվին քաղաքում, Հիջրայի 1290 թվականին: Տեքստում տրվում է հայկական անուններ:

Թ. 1ա.— (Վերևում կա երկու տող, ապա հետևյալ արաբական թվականը) 11 Ջումադա էլ-Ասվալ 1290: (Այստեղ կա մի փոքր կնիք 2 սմ. տրամագծով: Անունը անընթեռնելի է:)

Թ. 1բ.— (Վերևում կա մի սև շրջանակ 3.1 սմ. տրամագծով: Կենտրոնում տուղբան է, որի շուրջ երկու բառ և երկու համար կա:)

Սրա ներքևում կա երկու փոքր արձանագրություն և փոքր կնիք:

Թերթի ներքևում շեղակի գրված են ութ ստորագրություններ:

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի № № Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի № № Ը—Ժ-ից, 1968 թվականի № Է-ից, 1970 թվականի № № Դ—Ե-ից, Ժ-ից, ԺԲ-ից, 1971 թվականի № № Ե—Ը-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1972 թվականի № № Ա—Բ-ից, Դ-ից, 1973 թվականի № № Ա—Գ-ից, Ը-ից, 1974 թվականի № № Գ-ից, Է—Ը-ից, 1975 թվականի № № Ա-ից, Գ-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1976 թվականի № № Բ—Ե-ից, Է—Թ-ից, ԺԲ-ից, 1977 թվականի № № Գ—Ժ-ից, 1978 թվականի № № Ա-ից, Դ-ից, 1979 թվականի № № Բ-ից, Դ-ից, Զ—Է-ից, ԺԲ-ից, 1980 թվականի № № Բ—Գ-ից, Ը-ից, Ժ—ԺԲ-ից և 1981 թվականի № № Ա—Դ-ից, Է-ից և Թ—ԺԲ-ից:

№ 545
ԿԱԼՈՒԱԾԱԳԻՐ
(Տաճկերէն)

Թերթերը՝ 2:— **Մեծությունը՝** 36.9×23.9 սմ.:— **Նյութը՝** դեղնած և կեղտոտած բարակ թուղթ:— **Կազմ՝** չունի:— **Պահպանակներ՝** չունի:— **Վիճակը՝** բավարար:— **Գրությունը** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** 1ա, 2ա և 2բ:— **Տողերը՝** 9:— **Գծումներ՝** չունի: **Գիրը՝** արաբական նասխի տառեր:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատուն՝** անհայտ:— **Ժամանակը՝** 1880 թ.:— **Վայրը՝** Արտվին:— **Ծանոթագրություն՝** Երևանից բարեպաշտ մի կին է նվիրել կալվածագիրը: Ձեռագրատունս ստացել է այն Վեհափառ Հայրապետից 15 սեպտեմբերի 1981 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կալվածագրի բովանդակությունը հողի սեփականության մի փաստաթուղթ է: Նախորդի նման այն գրված է Արևմտյան Հայաստանի Լազիստանի շրջանի Արտվին քաղաքում, 1880 թ.: Տեքստում տրվում է հայկական անուններ:

Թ. 1ա.— (Վերևում կան երեք փոքր արձանագրություններ և ստորագրություն:)

(Արձանագրության ներքևում էլ կան չորս ստորագրություն և չորս փոքր կնիքներ:)

Թուղթն ստացված է Եվրոպայից: Թերթի վերևի ձախակողմյան անկյունում կա թղթի գործարանի դրոշմանշանը, ուղղանկյուն, 1.9×1.6 սմ. չափերով, որի մեջ կա արքայական մի թագ և հետևյալ գրությունը գրված մեծատառերով BATH:

№ 546
ԿԱԼՈՒԱԾԱԳԻՐ
(Տաճկերէն)

Թերթերը՝ 2:— **Մեծությունը՝** 36.8×23.9 սմ.:— **Նյութը՝** ղեղնած և կեղտոտած բարակ թուղթ:— **Կազմ՝** չունի:— **Պահպանակներ՝** չունի:— **Վիճակը՝** անբավարար, կողքերը մաշված են:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** 1ա, 2ա և 2բ:— **Տողերը՝** 26:— **Գծումներ՝** չունի:— **Գիրը՝** արաբական նասխի տառեր:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատու՝** անհայտ:— **Ժամանակը՝** 1880 թ.:— **Վայրը՝** Արտվին:— **Ծանոթագրություն՝** Երևանից բարեպաշտ մի կին է ձեռքիս կալվածագիրը: Ձեռագրատունս ստացել է այն Վեհափառ Հայրապետից 15 սեպտեմբերի 1981 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կալվածագրի բովանդակությունը հողի սեփականության մասին մի փաստաթուղթ է: Նախորդ երկուսի նման սա ևս գրված է Արևմտյան Հայաստանի Լազիստանի շրջանի Արտվին քաղաքում, 1880 թ.: Տեքստում տրվում է հայկական անուններ:

Թ. 1ա.— (Ներքևում կա տաճկերեն ստորագրությունը և թվականը, նաև հայերեն հետևյալ ստորագրությունը)

Հովհաննէս Թումոյեան.

(Սրա կողքին, ձախակողմյան մասում կա մի ուրիշ հայերեն ստորագրություն, որ հստակ չէ)

Յուտոյսիմ Յարություն Ազնայուրիեանց:

(Թուղթն ստացված է Եվրոպայից: Թ. 2բ-ի աջակողմյան ներքևի անկյունում կա թղթի նույն գործարանի դրոշմանշանը, ինչպես նախորդ կալվածագրում, նույն չափերով: Այստեղ կա արքայական նույն թագը և գրված է BATH:)

Թ. 2բ.— (Հայերեն գրված է)

Ազնայոր Արութէն ապիմէն ապածը:

(Շարունակելի)



«ЭЧМИАДЗИН»
ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
(ЯНВАРЬ 1982 г.)

1. Патриаршая проповедь по случаю праздника Святого Рождества в Кафедральном Соборе от 6 января 1982 года (стр. 3—5).

2. Обмен приветственными телеграммами и посланиями между Католикосом Всех Армян и главами сестр-церквей по случаю Нового года и св. Рождества (стр. 6—8).

3. Приветственное послание Всеармянского Патриарха адресованное трем иерархическим пристолам Армянской церкви, епархиальным правителям и церковным общинам по случаю праздников Новолетия и Святого Рождества (стр. 9—10).

4. Обмен Новогодными приветственными телеграммами между Католикосом Всех Армян и государственными высокопоставленными деятелями (стр. 11—14).

5. **Редакционная статья:** Жертво и обед любви. Жертвоприношение в доисторические времена и в жизни еврейского народа. Христианская литургия жертвоприношения святого Тела и Крови Христа. Жертвоприношение по христианскому восприятию является современная литургия (стр. 15—17).

6. Торжества Святого Рождества в Первопрестольном Эчмиадзине (стр. 18).

7. Патриаршия литургия и проповедь в Кафедральном Соборе по случаю праздника Рождества Христова от 6 января (стр. 19).

8. Встреча духовенства Араратской и Ширакской епархии со Святейшим Католикосом 21 января, в патриарших покоях. Выступление Патриарха по этому поводу (стр. 20—23).

9. Патриаршие поощрения: выдача церковных наград некоторым настоятелям и священникам внутренних епархий в связи с Новолетием и Святого Рождества (стр. 24—25).

10. **Церковная жизнь**—сообщения: литургии, произнесенные проповеди и другие церковные обряды совершенные в Кафедральном Соборе за январь 1982 года (стр. 26—27).

11. Рукоположение священников в армянской церкви города Русе (Болгария) от 6 декабря архиепископом Тирайром Мартикяном, начальником объединенной епархии Румынии и Болгарии (стр. 28—29).

12. **Архиепископ Торгом Гушакян**—Богоявление. Цели церковных празднеств (стр. 30—31).

13. **Архимандрит Карапет (Тер-Мкртчян)**—Точный день праздника Богоявления по историческим данным, а также свидетельства о праздновании Рождества и Крещении Христа в день 6 января по данным церковных отцов (стр. 32—34).

14. **Священник Езник Петросян**—Средневековые армянские толкования Евангелей, переводные и оригинальные произведения в армянских монастырях (научное исследование (стр. 35—41)).

15. **Артун Атитян**—О содержании армянском переводе и печатании произведения Патриарха Александрийского Тимофея «Возражения об установках Халкедонского собора» (научное исследование (стр. 42—49).

16. **Архимандрит Акоп Глнджян**—Бог, после сотворения мира, седьмой день недели объявил святым и стал отдыхать от своих дел (стр. 50—51).

17. **Вачаган Ованнисян** — Святой Месроп Маштоц. Стихотворение посвященное жизни и творчеству создателя армянского алфавита (стр. 52).

18. **Дьякон Вартан Багдасарян**—рецензия на книгу Г. А. Григоряна «Философское учение Овнана Воротнеци» (стр. 53—56).

19. Заседание подготовительного комитета по проведению в мае с. г. всемирного конгресса, состоявшиеся в Москве 25—28 января (стр. 57—58).

20. **Нубар Микаэлян**—Список новых рукописей полученных в св. Эчмиадзине (№ 544—546) (стр. 59—60).



„ETCHMIADZIN"
OFFICIAL JOURNAL OF HOLY ETCHMIADZIN
(JANUARY 1982)

1. Patriarchal sermon in the Holy Cathedral, on the occasion of the feast of Holy Christmas, 6-th January 1982 (pages 3—5).

2. The cables and letters of greetings exchanged between His Holiness and the Spiritual heads of the Sister Churches, on the occasion of New Year and Holy Christmas (pages 6—8).

3. The congratulatory letter of His Holiness written to the three hierarchical Sees of the Armenian church, on the occasion of the feasts of the New Year and Holy Christmas (pages 9—10).

4. Cables exchanged between His Holiness Vasken I, Catholicos of All Armenians, and statesmen of highrank on the occasion of New Year (pages 11—14).

5. Editorial—The offering and the dinner of love. The sacrifice in the religious life of the prehistorical and jewish peoples. The Christian mass is the sacrifice of the holy body and blood of Christ. The Christian comprehension of offering is the Holy Mass of today (pages 15—17).

6. The festivities of Holy Christmas in the Mother See (page 18).

7. Patriarchal Mass and sermon in the Holy Cathedral on the occasion of the feast of Holy Christmas (page 19).

8. The meeting of His Holiness with the clergymen of the dioceses of Ararat and Shirak, in the Patriarchal Residency, on 21-st of January. The speech of His Holiness on this occasion (pages 20—23).

9. Patriarchal appreciation: His Holiness renders worthy to His attention the services of some superiors of convents and priests of internal dioceses, executing church donations, on the occasion of the feasts of New Year and Holy Christmas (pages 24—25).

10. Description of the Divine liturgy services and sermons delivered in the Holy Cathedral and feasts taken place in the Holy See during the month of January (pages 26—27).

11. Priest ordination, on the 6-th of December 1981, in the city of Ruse (Bulgaria), by the Archbishop Tirayr Martikian, the prelate of the united dioceses of the Armenians of Rumania and Bulgaria (pages 28—29).

12. **Archbishop Torgom Kushagian**—Epiphany: the purpose of the church feasts (pages 30—31).

13. **Reverend Karapet (Ter-Megrdchian)**—The exact day of the feast of Epiphany according the history and testimonies about the execution of the feast of Holy Christmas and Baptism of Christ, on the 6-th of January, according the testimony of the Church Fathers (pages 32—34)

14. **Priest Yeznik Petrossian**—Mediaeval Armenian interpretations of the Gospels. translations and autograph works in the Armenian monasteries: a scientific study (pages 35—41).

15. **Arthoon Hadidian**—The Patriarch of Alexandria Timotheus and the contents of his work "Controversy to the decrees of the Council of Chalcedon", the Armenian translation and the publication. A study (pages 42—49).

16. **Reverend Hakob Kelenjian**—After the creation God proclaims holy the seventh day and rests from his works (pages 50—51).

17. **Vachagan Hovhannissian**—Saint Mesrop Mashtotz: poem dedicated to Saint Mesrop Mashtotz, the creator of the Armenian alphabet, his work and life (page 52).

18. **Deacon Vardan Baghdasarian**—Literary critique dedicated to the work of G. H. Grigorian „The philosophical study of Hovhan Vorotnetzi", 1980 (pages 53—56).

19. The preparatory committee's assembly during the days of 26—28-th January, for the World Conference of the religious workers, to be held at Moscow during the month of May of this year (pages 57—58).

20. **Nubar Mikaelian**—The list of the newly received manuscripts of the Mother See of Holy Etchmiadzin under the numbers 544—546 (page 59—60).



„ETCHMIADZINE"
ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE D'ETCHMIADZINE
(JANVIER 1982)

1. Homélie de Sa Sainteté Vasken Ier prononcée le 6 janvier 1982 dans la cathédrale de Saint-Etchmiadzine à l'occasion de la fête de la Nativité de notre Seigneur Jésus-Christ (pages 3—5).

2. Echange de télégrammes et de lettres de félicitation entre Sa Sainteté Vasken Ier et les Chefs des Eglises soeurs à l'occasion des saintes fêtes de Noël et du Nouvel An (pages 6—8).

3. Lettres de félicitation de Sa Sainteté adressées aux Chefs des trois sièges hiérarchiques, aux prélats diocésains et aux communautés religieuses de l'Eglise arménienne à l'occasion des fêtes de Noël et du Nouvel An (pages 9—10).

4. Echange de télégrammes entre Sa Sainteté et les hautes personnalités d'Etat de la R. S. S. d'Arménie à l'occasion de la fête du Nouvel An (pages 11—14).

5. **Editorial:** Immolation et agape. Le sacrifice dans la vie religieuse des peuples préhistoriques et du peuple juif. La messe chrétienne comme sacrifice du corps et du sang de Jésus-Christ. La sainte messe d'aujourd'hui comme conception chrétienne de l'immolation (pages 15—17).

6. Solennités au Saint—Siège d'Etchmiadzine consacrées à la fête de la sainte Nativité (page 18).

7. Le 6 janvier, célébration de la sainte Messe dans la Cathédrale et homélie de Sa Sainteté (page 19).

8. Le 21 janvier 1982, dans la résidence patriarcale, rencontre de Sa Sainteté Vasken Ier avec le clergé des diocèses d'Ararat et de Chirak. Allocution de Sa Sainteté prononcée à cette occasion (pages 20—23).

9. Distribution des dons de la grâce par Sa Sainteté Vasken Ier aux supérieurs des monastères et à certains prêtres des paroisses du diocèse d'Ararat et du diocèse de Chirak pour les services qu'ils ont rendus à l'Eglise (pages 24—25).

10. Sous la rubrique „Nouvelles du Saint-Siège" sont publiées de brèves informations concernant la célébration des saintes messes, les sermons prononcés à cette occasion et d'autres cérémonies religieuses qui ont eu lieu dans la cathédrale de Saint-Etchmiadzine au cours du mois de janvier 1982 (pages 26—27).

11. Le 6 décembre 1981, ordination de prêtres dans l'église arménienne de la ville de Roussé (Bulgarie) par l'archevêque Tiraïr Martikian, prélat des Arméniens de Roumanie et de Bulgarie (pages 28—29).

12. **Archevêque Torgom Gouchakian**—„Epiphanie. Le but de la célébration des fêtes religieuses" (pages 30—31).

13. **Père Karapet Ter-Mekertchian**—„Le jour précis de la fête de l'Epiphanie d'après l'histoire et le 6 janvier comme jour de la célébration de la naissance et du baptême de Jésus-Christ d'après le témoignage des Pères de l'Eglise" (étude)—(pages 32—34).

14. **Père Yeznik Pétrossian**—Interprétations des Evangiles par les Pères de l'Eglise arménienne à l'époque médiévale. Traductions et textes originaux écrits au Moyen Age dans les monastères arméniens" (étude)—(pages 35—41).

15. **Artoun Hatitian**—Timothée, Patriarche d'Alexandrie" (étude sur la vie et l'héritage littéraire du célèbre Père de l'Eglise d'Alexandrie, ainsi que sur la traduction et publication de son ouvrage intitulé „Discours contre les décisions prises au Concile de Chalcédoine")-(pages 42—49).

16. **Père Hakob Kelendjian**—„Après la création du monde, Dieu sanctifie le septième jour et il se repose ce jour-là" (pages 50-51).

17. **Vatchagan Hovhannissian**—„St. Mesrop Machtots" (poème dédié à la mémoire de St Mesrop, inventeur de l'alphabet arménien)—(page 52).

18. **Diacre Vartan Baghdassarian**—Compte rendu de l'ouvrage de G H. Grigorian intitulé „La philosophie de Hovhan Vorotnétsi" (ouvrage publié à Erévan en 1980)-(pages 53—56).

19 Information sur la réunion du Comité préparatoire international de la prochaine Conférence Mondiale: „Les hommes de religion pour la sauvegarde du don sacré de la vie, contre la catastrophe nucléaire", qui se tiendra à Moscou du 10 au 24 mai 1982 (pages 57—58).

20. **Noubar Mikaélian**—Index des manuscrits que le Saint-Siège d'Etchmiadzine a récemment reçus et placés sous les numéros 544—546 (pages 59—60).



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայրապետական քարոզ Փրկչի հրաշափառ Սուրբ Ծննդյան տոնի առթիվ Մայր տաճարում 3

Ամանորի և Փրկչի հրաշափառ Սուրբ Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և քույր Եկեղեցիների հոգևոր պետերի միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները 6

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհավորական գիրը Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ՝ ուղղված Հայաստանյայց Եկեղեցու նվիրապետական երեք Աթոռներին, թեմական բոլոր առաջնորդներին և եկեղեցական համայնքներին 9

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և պետական բարձրաստիճան անձնավորությունների միջև փոխանակված հեռագրեր Նոր տարվա առթիվ . . 11

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ—Մատաղ և սիրո ճաշ 15

Սուրբ Ծննդյան հանդիսությունները Մայր Աթոռում 18

Հայրապետական հանդիսավոր ս. պատարագ և քարոզ Մայր տաճարում՝ Փրկչի հրաշափառ Ծննդյան տոնի առիթով 19

Հայոց Հայրապետի հետ Արարատյան և Ծիրակի թեմերի հոգևորականության հանդիպում 20

Հայրապետական գնահատություն 24

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ—Եկեղեցական բեմ. լուրեր 26

Քահանայական ձեռնադրություն 28

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՈՒԾԱԿՑԱՆ—Եկեղեցական տոներ . . . 30

ԿԱՐԱՊԵՏ Վ(ԱՐԴԱՊԵՏ) (ՏԵՐ-ՄԿՐՏՉՅԱՆ)—Աստվածահայտնության տոնի ճիշտ օրը ըստ պատմության 32

ԵՋՆԻԿ ՔԱՀԱՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ—Ավետարանների միջնադարյան հայկական մեկնություններ 35

Ա. ՀԱՏԻՏՅԱՆ—Տիմոթեոս եպիսկոպոսապետ Ալեքսանդրացի և նրա «Հանգամառութիւն առ սահմանեալսն ի ժողովոյն Քաղկեդովնի» աշխատության հայերեն թարգմանությունն ու տպագրությունը 42

ՀԱԿՈԲ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԼԼԸՆՃՅԱՆ—Ցոթներորդ օրվան խորհուրդը . . 50

ՎԱՉԱԳԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ—Մեսրոպ Մաշտոց 52

ՎԱՐԴԱՆ ՍՐԿ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ—Գրախոսություն. Գ. Հ. Գրիգորյան. Հովհան Որոտնեցու փիլիսոփայական ուսմունքը 53

Մոսկվայում կայանալիք առաջիկա համաշխարհային կոնֆերանսի նախապատրաստական կոմիտեի ժողովը 57

Ցուցակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի . . . 59

«Эчмиадзин» официальный журнал Эчмиадзинского Католикосата . . . 61

„Etchmiadzin" official journal of Holy Etchmiadzin 62

„Etchmiadzine" organe officiel du Saint-Siege d'Etchmiadzine 63

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie, URSS

Հանձնված է արտադրության 15.01.1982 թ.: Ստորագրված է տպագրության 2.03.1982 թ.:
Տպագրական 4 մամուլ, թուղթ 60×84¹/₈, պատվեր 46

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1982 թ.